9(47) «1941–1945» 13340.
Անդրեասյան, Մ.
վեց օր.
6ռ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

№ | ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ | 2

Մ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Վ Ե Ց Օ Ր

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1947

54

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

ИНСТИТУТ ИСТОРИИ

№ МАТЕРИАЛЫ ПО ИСТОРИИ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ 2

М. АНДРЕАСЯН

ШЕСТЬ ДНЕЙ

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

ЕРЕВАН 1947

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

№ ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ 2

9(47)27
Ա-57
321.8:172
355.331(47)(092

Մ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՎԵՑ ՕՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1947

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ
ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ,
ՈՐՈՆՔ ԸՆԿԱՆ
ԴՈՆԻ ՌՈՍՏՈՎԻ
ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՄԱՐՏԵՐՈՒՄ

Պատասխանատու խմբագիր՝
Խ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Հայրենական Մեծ Պատերազմի տարիները հավերժացան մեր Սովետական Բանակի միլիոնավոր պանծալի զինվորների անհամար սխրագործություններով: Այդ սխրագործությունները ոգեշնչման անսպառ աղբյուր են հանդիսանում:

«Վեց օր» գիրքը Ռոստովի օպերացիայի հատուկ տակտիկական վերլուծություն չէ: Այն ընդգրկում է 1943 թվին Ռոստովը գերմանա-ֆաշիստական հափշտակիչներից ազատելու համար Սովետական Բանակի մղած նշանավոր մարտերի մի քանի դրվագները միայն:

Այս գրքում մենք պատմում ենք այն առանձին հրաձիգ գումարտակի զինվորների և սպաների մասին, որի հրամանատարն էր ավագ լեյտենանտ Ղուկաս Մադոյանը: Այդ գումարտակի մարտիկները առաջինը մուտք գործեցին Ռոստով, գրավեցին կայարանի մերձակա ռայոնը և շրջապատված լինելով թշնամու քանակապես գերազանց ուժերի կողմից, վեց օր շարունակ արյունահեղ մարտեր մղեցին նրանց դեմ: Ապշեցուցիչ տոկունություն հանդես բերելով, նրանք հետ մղեցին գերմանացիների ավելի քան հիսուն տանկային գրոհներ և հերոսաբար իրենց ձեռքում պահեցին գրաված ռազմաբեմը մինչև Հարավային ռազմաճակատի գլխավոր ուժերի Ռոստով մտնելը:

Մ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Ապրիլ, 1947 թ.

Սովետական Միության հերոս
ՂՈՒԿԱՍ ՄԱԴՈՅԱՆ

ԱՐԱՐԱՏԻ ՍՏՈՐՈՏՈՒՄ

1.

Ամառը իրիկնադեմին, երբ արևի թեք շողերն ընկնում են երևանյան հին հողի վրա, մարդու աչքի առաջ բացվում է մի փառահեղ տեսարան։ Երկնքի խորքում, ամպերից բարձր, լուսապայծառ փայլում են Արարատի հավերժ ձյունապատ, անմատչելի գագաթները։ Խաղաղ իրիկնային ժամերին ավելի հստակ են գծագրվում հորիզոնի վրա այդ բիբլիական լեռները իրենց նախնադարյան վեհությամբ, հաստատելով Հայաստանի անմահությունը, նրա ժողովրդի կենսունակությունը։

Արարատը վեր է ելնում մեր հայրենիքի և Թյուրքիայի սահմանագլխին. սակայն աշխարհը գիտե, որ Արարատի երկու կողմերում տարածված են հայկական հողերը, որտեղ հին ժամանակներից բնակվել ու հարատևել է հայ ժողովուրդը։

Կաղզվանի շրջանի Քերս գյուղում, ուր այժմ թյուրքերն են տիրում, գյուղացի Կարապետ Մադոյանի ընտանիքում 1906 թվին ծնվել է նրա որդին՝ Ղուկասը։ Նրանից հետո ընտանիքում ծնվել են էլի չորս երեխա. Ղուկասը ավագն էր նրանց մեջ։

Գյուղը շրջապատված էր փարթամ մարգագետիններով, խնձորի, դեղձի, խաղողի այգիներով։ Գարնանը, երբ փոքրիկ Ղուկասը հրճվում էր ծաղկած ծառերից թափվող սպիտակ ու վարդագույն թերթիկներով, ամբողջ աշխարհը մի անեզրական ծաղկուն այգի էր թվում նրան։

Հայրն ու մայրը դաշտ գնալիս շատ անգամ իրենց հետ տանում էին Ղուկասին։ Փոքրիկ տղան վաղ ճաշակեց գյուղացու աշխատանքի ծանրությունը։ Երբեմն հայրը նրան նստեցնում էր իր զորեղ ուսերին ու հեշտությամբ տանում նրան լեռնային կածաններով։ Ղուկասն ամուր գրկում էր հոր արևակեզ վիզը,

որ վայր չընկնի, զվարթ ծիծաղում էր, և իրեն թվում էր, թե թռչում է գետնի վրայով: Նրա ոտքերի տակ, ասես, դեպի հետ էին վազում կանաչ թփերը, իսկ գլխավերևը բարձր, բարձր կանգնած էր անամպ ամառային երկինքը:

Հայրը հանդարտ շարժումով գետին էր իջեցնում Ղուկասին ու կատակով ասում նրան.

— Կմեծանաս, դու կտանես ինձ ձեռքերիդ վրա:

— Քեզ բարձրացնել չի լինի, հայրիկ, դու ծանր ես,— խուսափողաբար պատասխանում էր Ղուկասը, իսկ հոգու խորքում ուրախանում էր, որ համագյուղացիները իր հորն ամենից ուժեղ մարդն են համարում, ասում են «մեր գյուղի հսկան»: Նա իսկապես որ հսկա էր: Կարապետը մենակ բարձրացնում էր ցորենի 20 փթանոց ջվալները:

Երեխա ժամանակվանից Ղուկասի հիշողության մեջ մնացել է լեզվանի, բարեհամբույր Մադո պապիկը: Երեկոները, երբ գյուղի վրա փայլփլում էին հեռավոր աստղերը և լուսնի աղոտ լույսը տարածվում էր տափակ կտուրներին, Մադոն իր շուրջը նստեցնում էր թոռնիկներին, ծխում էր իր երկար չիբուխը և խորը հոգոց քաշելով սկսում էր պատմել իր հիանալի հեքիաթները: Ինչքա՜ն էր սիրում Ղուկասը լսել նրան: Մադո պապի հեքիաթները վերջ չունեին: Նա կարող էր ամեն երեկո պատմել որևէ անվեհեր ու ազնիվ հերոսի անսովոր նոր արկածների մասին: Երբեմն էլ պապը պատմում էր թոռնիկներին հին-հին ժամանակներից, Հայաստանի վրա թշնամու գործած արշավանքներից ու զավթիչների դեմ մղված կռիվներից, առասպելական Սասունցի Դավթի ու Աշոտ Երկաթի գործերից:

Եվ լավ հիշում է Ղուկասը, երբ ծերունի Մադո պապը խոսում էր այն մեծ երկրի մասին, որ կոչվում է Ռուսաստան, նրա կնճռոտ դեմքը պայծառանում էր և խոսքերն ավելի ջերմ ու սրտագին էին հնչում:

2.

Այն ահավոր ժամանակները, որ նոր փորձություններ բերին Հայաստանին, Ղուկասը 12 տարեկան էր դառնում: Ծանր վիշտը մտավ Քերս գյուղը: Մութ ամպի նման լեռներից իջան

ու գյուղի վրա ընկան ձիավոր թյուրք ասկյարները։ Հարբած, սուսերամերկ, խանչալները ձեռքներին նրանք ներխուժեցին հայերի տները ու սկսեցին անողոքաբար կոտորել ամենքին, ով էլ որ պատահեր։ Ապարդյուն էին անցնում նկուղներում կամ գոմերում թաք կենալով կյանքը փրկելու ջանքերը։ Գազանացած ասկյարները ավերում էին տները, քարը քարի վրա չէին թողնում նրանցից, հրդեհում էին շենքերը և գյուղացիներին նետում կրակի մեջ։ Փրկության վերջին հույսը վանքերն էին։ Բայց ավերիչները նավթ էին լցնում վանքերի հնադարյան պատերին ու հրդեհում, կրակի մեջ այրելով այնտեղ ապաստանած ծերունիներին, կանանց ու երեխաներին։ Այդ սև օրերին Ղուկասը կորցրեց իր մորը, Մաղո պապին և երկու եղբայրներին։

Հայ բնակչությունը գաղթում էր Ռուսաստան։ Լեռնային կածաններով շարժվում էին գաղթականների անվերջ շարանները։ Ուժասպառ ու քաղցած նրանք գնում էին գիշեր ու ցերեկ և նրանց տատասկոտ ճանապարհը ողողվում էր արյունով։ Հազարավոր անբախտներ սովից ու ծարավից ընկնում էին ճանապարհին և մնում անշարժ ընկած, անթաղ, արևի կիզիչ ճառագայթների տակ։ Գնում էին գաղթականները ձմեռվա սառնամանիքին, մերկ ոտքերով քայլելով ձյան վրա. գնում էին աշնան անձրևի տակ, սառչելով ցուրտ քամուց։ Հյուծված, ցնցոտիապատ մարդիկ, գրկած տանում էին երեխաներին և հայացքները հառած երկինքին, աղաչում էին բարձրյալին՝ առնել իրենց կյանքը, միայն թե փրկել երեխաներին։

Այս բազմությունների հետ դեպի Ալեքսանդրոպոլ ճանապարհ ընկան նաև Ղուկասը, նրա հայրը, փոքր եղբայրը՝ Աշոտը և քույրը՝ Արևհատը։ Աղջկանը տանում էր հայրը, իսկ Աշոտին՝ Ղուկասը։ Հոր կրծքին սեղմվելով, փոքրիկ աղջիկը զուսպ հեծկլտում էր։ Չորս տարեկան Աշոտը բարձրաձայն լաց էր լինում ու շարունակ մորն էր կանչում։ Հայրը մռայլվում էր. նրա մազոտ դեմքը սևել էր, աչքերը փոս էին ընկել, կարծես թե նա կորացել, կարճացել էր։ Ալեքսանդրոպոլում նրանք կանգ առան մի անծանոթ պառավի՝ Մարիամի տանը։ Ջերմ խոսքով ու մայրական խնամքով այդ բարեհամբույր կինը թեթևացրեց գաղթականների դառը վիճակը։ Նա լողացրեց Արևհատին, Աշոտիկին և Ղուկասին, կերակրեց նրանց ու պառկեցրեց քնելու։

Պառավից բացի, տանն էր նաև նրա որդին, որ նոր էր վերադարձել ռուս-գերմանական ռազմաճակատից, զինվոր Արսենը։ Նա որտեղից-որտեղ քիչ քաղցրավենիք ճարեց երեխաների համար և երբ արթնացան՝ հյուրասիրեց նրանց։ Հետո նա երեխաներին նստեցրեց իր ծնկներին և ասաց, որ տանելու է ձիով ման ածի։ Զինվորը շատ դուր եկավ երեխաներին և նրանք շուտով կապվեցին նրա հետ։ Երեկոյան իր փաթաթած ծխախոտը ծխելով, Արսենն ասաց Ղուկասի հորը.

— Կարապետ, քո շապիկը պատռվել է, իմը հագիր։

Հայրը հրաժարվեց։

— Դու մի ամաչի, ես ուրիշն ունեմ. չվերցնես՝ կնեղանամ,— ասաց Արսենը։— Մենք միշտ պետք է օգնենք իրար, առանց դրան ապրել չի լինի։

Նա լռեց և բերնից մախորկայի դառը ծուխ արձակելով, կարծես մի ինչ-որ բան վերհիշելով, ավելացրեց.

— Իմ ընկերները, ռուս զինվորները, խրամատներում ինձ սովորեցրին գնահատել բարեկամությունը։

Արսենի խոսքերը նոր ու անսովոր էին Ղուկասի համար և նա հետաքրքրությամբ լսում էր զինվորին։

Դու Լենինի մասին լսե՞լ ես,— հարցրեց Արսենը։

Կարապետը բացասաբար շարժեց գլուխը։ Զինվորի աչքերն ավելի պայծառ փայլեցին։

— Լե՛նին, ի՛նչ ասեմ քեզ նրա մասին, Կարապե՛տ։

Արսենը մտածմունքի մեջ ընկավ։ Նրա վեր պարզած ձեռքը այդպես մնաց օդի մեջ, մեկ էլ հանկարծ նա վար իջեցրեց ձեռքն ու ասաց.

— Իր ամբողջ կյանքում Լենինը պայքարել ու պայքարում է այն մարդկանց երջանկության համար, որոնք ազնիվ աշխատանքով են հաց վաստակում։ Նա արևի նման գնում է այդ մարդկանց առաջից և նրա մեծ խելքի լույսը ներկայումս առաջ է տանում Ռուսաստանի բոլոր բանվորներին, գյուղացիներին ու զինվորներին դեպի լավ, արդար կյանք։ Եվ ինչ ազգից էլ որ լինես՝ ռուս, վրացի, հայ, եթե ազնիվ աշխատում ես, դու իսկական մարդ ես, ամենքին հավասար մարդ,— այ թե ինչ է ասում Լենինը։

— Իսկ որտե՞ղ է ապրում նա, Լենինը,— չհամբերելով հարցրեց Ղուկասը։

— Որտե՞ղ է ապրում.— Արսենը դարձավ տղայի կողմը,— ժողովրդի մեջ է ապրում Լենինը։

3.

Անցավ մի ամիս։ Թյուրքական զորքերը մտնում էին Ալեքսանդրապոլին։ Բնակիչները հապճեպ հեռանում էին քաղաքից։ Ուղևորներով լեփ-լեցուն գնացքի կտրին նստած՝ Կարապետը երեխաների հետ միասին հասավ Թիֆլիս։

Այստեղ բախտը նոր հարված հասցրեց Ղուկասին։ Գաղթականներն ապրում էին բարաքներում, որտեղ մարդկանց կուտակումից ու կեղտից համաճարակ հիվանդություններ սկսվեցին։ Մի քանի օրում բծավոր տիֆը գերեզման տարավ Ղուկասի հորը, քրոջը՝ Արևհատին և փոքրիկ Աշոտին։

Ղուկասը մնաց որբ, մեն-մենակ օտար քաղաքում, անծանոթ մարդկանց մեջ։ Իսկ հիվանդությունը, որ տղայից խլեց հորը, քրոջը և եղբորը, աննկատելիորեն մտնում էր նաև նրան։ Ծանր վիճակի մեջ Ղուկասին տարան հիվանդանոց։ Առողջանալու շատ քիչ հույս կար։

Տղան մի քանի օր պառկած էր ուշակորույս։ Նրա այտերը վառվում էին ջերմից։ Զառանցանքի մեջ Ղուկասին պատկերանում էին հարազատ գյուղը, մոր դեմքը։ Նա իր թույլ, աշխատանքի մեջ կոպտացած ձեռքերով շոյում էր նրա գլուխը, մազերը, համբուրում էր ճակատը և սիրտ տալիս։ «Լաց մի՛ լինի, որդիս, դու մենակ չես, ես քեզ հետ եմ, Ղուկաս ջան»։ Հետո նա տեսավ իրենց տունը, դեղձի ծառերը, Մազո պապին, եղբայրներին, քրոջը, ժպտացող հորը և իրեն՝ նրա ուսերին նստած։ Նա կանչում էր նրանց, որ գան իր մոտ, բայց նրանց փոխարեն ինչ-որ ընդարձակ, մութ շրջանակի միջից առաջ էին գալիս ասկյարների սարսափելի դեմքերը՝ բերաններին ահագին դանակներ բռնած։ Ղուկասը գոռում էր, թավալ էր տալիս զառանցանքի մեջ և օգնության կանչում զինվոր Արսենին։

Մի քանի տագնապալի շաբաթներից հետո երեխայի վիճակը լավացավ։ Հիվանդանոցում ծառայող կանանցից մեկը

խղճաց նրան և տարավ իր տունը։ Ղուկասին հյուրընկալող կնոջ անունն էր Եկատերինա Անդրեևնա։ Նա երեխա չուներ։ Համեստ որբուկը շատ դուր եկավ նրան։ Նա սովորեցրեց նրան ռուսերեն այբուբենը։ Եկատերինա Անդրեևնայի տանը բեռ չլինելու համար՝ Ղուկասն սկսեց աշխատել։ Առավոտները մարդիկ շատ անգամ տեսնում էին բարձրահասակ, նիհար տղային՝ ծանր դույլերով ջուր կրելիս։ Նա դանդաղ քայլում էր փողոցով ու առաջարկում բնակիչներին.

— Ո՞վ է ջուր ուզում, աղբյուրի սառը ջո՜ւր։

Մի անգամ մի անցորդ մոտեցավ Ղուկասին.

— Ա՛յ տղա, մի ջուր տուր խմենք,— ասաց նա։

Ղուկասը կանգ առավ, անցորդի ձայնը ծանոթ էր։ Նրան նայելով, տղան ուրախ բացականչեց.

— Քեռի Արսե՛ն...

— Ղուկա՛ս ջան...

Դույլերը ցած դնելով, Ղուկասը դիմավորեց բարի զինվորին, ինչպես դիմավորում են մոտիկ, հարազատ մարդուն։ Արսենը ևս ջերմորեն գրկեց պատանուն։

— Հը, որտեղ ես տեղավորվել,— հարցրեց նա,— հայրդ որտեղ է, երեխաները որտեղ են։

Ղուկասը գլուխը կախեց։ Մի ինչ-որ բան, հակառակ նրա կամքին, սեղմեց կոկորդը։ Աչքերն արցունքով լցվեցին։ Արսենն զգաց, որ մի վատ բան է եղել։ Ծանր զգացմունքը ճնշեց նրա սիրտը։

— Ասա տեսնենք՝ ի՞նչ է պատահել, ա՛յ տղա,— հարցրեց նա։

— Ես մենակ եմ մնացել, քեռի Արսեն,— կամաց ասաց Ղուկասը, և ամեն ինչ պատմեց նրան։

Արսենը լուռ լսում էր տղային։ Նրա դեմքն ավելի խստացավ։ Երբ Ղուկասը լռեց, նա մոտ քաշեց և փաղաքշեց նրան։ Այդպես լուռ, անձայն կանգնած էին նրանք մի քանի րոպե շարունակ։ Հետո իմանալով, թե ո՛ր տանն է ապրում Ղուկասը, Արսենը նորից ջերմորեն գրկեց նրան և հրաժեշտ տվեց, ասելով, որ անպայման կգնա նրա մոտ։

4.

Երեկոյան նա եկավ։ Եկատերինա Անդրեևնան թեյով հյուրասիրեց զինվորին։ Ղուկասի համար հաճելի էր նստել Արսենի կողքին։ Լամպի աղոտ լույսը լուսավորում էր համեստ սեղանը, աղմկում էր գոլորշիով պարուրված ինքնաեռը։ Ղուկասը լսում էր, թե ինչպես Արսենը կամացուկ զրուցում է տանտիրուհու հետ։ Տանտիրուհին պատմում էր ժողովրդի ապրած այդ դժվար օրերի մասին և հարցուփորձ էր անում զինվորին Պետրոգրադի անցուդարձից։

Այդ այն ժամանակն էր, երբ Ռուսաստանում վաղուց արդեն հաղթանակել էր Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիան։ Ռուս ժողովուրդը քաղաքացիական պատերազմի կատաղի մարտերում պաշտպանում էր իր սրբազան նվաճումները։ Անդրկովկասում ժամանակավորապես իշխանության գլուխն էին անցել ժողովրդի թշնամիները։ Հայաստանում իշխանությունը գրավել էին դաշնակները, Վրաստանում՝ մենշևիկները։ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները ռևոլյուցիոն աշխատանք էին կատարում բանվորների, գյուղացիների և զինվորների մեջ։

— Ռուս ժողովուրդը, որի գլուխն է կանգնած բոլշևիկների պարտիան,— ասում էր Արսենը,— մեզ ևս կօգնի նոր, լուսավոր կյանք կառուցելու գործում։

Այդ օրերին ավելի ու ավելի հաճախ սկսեցին իրար հանդիպել Ղուկասն ու Արսենը։

— Հը՛, փոքրիկ,— ասաց մի անգամ Արսենը,— հիմա դու արդեն ամեն ինչ հասկանում ես։ Ջուր լավ ես կրում, բայց քեզ համար ավելի կարևոր աշխատանք կա։

Այդ կարևոր աշխատանքի մասին նա երկար ժամանակ խոսում էր Ղուկասի հետ։ Հետո նա մի քանի փաթեթ խնամքով ծալված թերթիկներ տվեց նրան։ Դրանք բոլշևիկյան թռուցիկներ էին։ Տղան աննկատելի կերպով ցրեց այդ թռուցիկները այն հիվանդանոցում, որտեղ աշխատում էր Եկատերինա Անդրեևնան, իսկ մնացածն էլ երեկոյան կինոյի պատշգամբից շպրտեց մութ դահլիճը։

Արսենը Ղուկասին ծանոթացրեց իր ընկերների հետ։ Այդ զգայուն և բարի մարդիկ դուր եկան նրան, իսկ աշխույժ, ուշիմ դեմքով համարձակ սևաչյա տղան իր հերթին լավ տպավո-

բություն գործեց ընդհատակի աշխատողների վրա։ Ինչպես Արսենը, նրանք ևս փաղաքշանքով «փոքրիկ» էին կանչում նրան։

— Քաջ տղա է,— ասում էին ընդհատակյա աշխատողները,— մարդ դուրս կգա այս փոքրիկից։

Ղուկասը արդեն ընդհատակյա կազմակերպության շատ առաջադրանքներն էր կատարել։ Մի որոշ ժամանակ անց Ղուկասին նորից տեսնում ենք իր հարազատ Կաղզվանի շրջանում։ Պատանի Ղուկասը այստեղ նույնպես ամենայն եռանդով շարունակում էր կատարել իրեն տրված հանձնարարությունները։

1920 թվի մայիսին, երբ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, բոլշևիկյան պարտիայի կողմից կազմակերպված, առաջին վճռական փորձն արին դաշնակներին տապալելու ուղղությամբ, 14-ամյա Ղուկասը հրացանը ձեռքին անվեհեր մարտնչում էր ապստամբների շարքերում։ «Փոքրիկը» դարձավ ռևոլյուցիոն ջոկատների զինվորների սիրելին։

Մայիսյան ապստամբությունը հաջողությամբ չպսակվեց։ Սակայն մի քանի ամիս հետո, անմոռանալի նոյեմբերին, Հայաստանի աշխատավորներին օգնության հասավ Կարմիր Բանակը։ Նրա օգնությամբ նորից ապստամբած հայ ժողովուրդը ազատագրվեց դաշնակների մռայլ տիրապետությունից։ Երևանի, Սովետական Հայաստանի վրա հաղթականորեն սկսեց ծածանվել կարմիր դրոշը։

5.

Այն ժամանակ, Ղուկասի հայրենի երկրին, Հայաստանին, ազատություն բերած 11-րդ բանակի գլուխն էին կանգնած ընկերներ Օրջոնիկիձեն և Կիրովը։ Բանակում կազմակերպվեց առանձին հայկական ջոկատ։ Պատանին կամավոր մտավ նրա շարքերը, և ինչ մեծ ուրախություն էր նրա համար, երբ այնտեղ հանդիպեց Արսենին։ Նախկին զինվորը արդեն վաշտի հրամանատար էր։ Նրա աջ այտի վրա Ղուկասը նկատեց բաց վարդագույն մի խորը սպի։

— Շնորհավորում եմ երիտասարդ մարտիկին,— ջերմորեն ասաց Արսենը, ոտքից գլուխ զննելով իր պատանի բարեկամին, և ավելացրեց.

— Ափսոս, որ Կարապետին բախտ չվիճակվեց տեսնել քեզ այդպես արծիվ դարձած։

Շուտով գունդը արշավի դուրս եկավ։ Կարմիր Բանակը գնում էր Թիֆլիս՝ օգնելու վրաց ժողովրդին՝ ազատագրվելու մենշևիկներից։

Թիֆլիսի մոտ թշնամու գնդակից վիրավորվեց ջոկի հրամանատար Ռուբեն Մարգարյանը։ Նա բռնեց կուրծքը և մի քանի քայլ վազելով՝ ընկավ ձյունով ծածկված գետնի վրա։

— Ընկերներ, կանգ մի առնեք, առաջ, առաջ,— կարողացավ նա գոչել շփոթված մարտիկներին։

Ինչ-որ լուսավոր, գույնզգույն շրջանակներ կապարի ծանրությամբ լցրին Մարգարյանի գլուխը։ Գետինը պտտվեց նրա աչքերի առաջ, ապա սկսեց բարձրանալ ու կախվեց նրա գլխավերևը երկնքի փոխարեն։ Ամեն ինչ տարուբերվեց նրա չորս կողմը և անհետացավ մթության մեջ։

Մարտիկները երերացին։ Թշնամիներն օգուտ քաղեցին դրանից։ Նրանք նեղը գցեցին ջոկին, սկսեցին մոտենալ անշարժ պառկած Մարգարյանին։ Մի քանի քայլ էր մնում մինչև հասնելին նրան։ Հանկարծ լսվեց պատանեկական մի հուժկու ձայն.

— Ընկերներ, փրկենք հրամանատարին։

Հրացանը պարզած, սվինը փայլեցնելով, մենշևիկ զինվորներին ընդառաջ էր վազում մի կարմիրբանակային։ Նրա նիհար, վտիտ մարմինը հազիվ էր գծագրվում զինվորական հագուստի մեջ։ Ամենքն անմիջապես ճանաչեցին մարտիկին։

— Փոքրիկն է,— լսվեց զինվորների շարքերում։

Մի քանի հոգի վազեցին Ղուկասի ետևից։ Ապա վազեցին ուրիշները։ Մենշևիկ զինվորները կանգ առան, սկսեցին հետ-հետ գնալ։

Ղուկասի մոտով սուլելով սլանում էին գնդակները։ Մադոյանը պառկեց գետնին և ականջը հրամանատարի կրծքին մոտեցնելով, սկսեց ուշադիր լսել։ Մարտի աղմուկը խանգարում էր նրան և Ղուկասին թվաց, թե հրամանատարն անշունչ է, բայց այդ ժամանակ վիրավորը թույլ հառաչեց։

— Կենդանի է,— ուրախացած կանչեց Ղուկասը վրա հասած մարտիկներին։

Նրանց հետ միասին նա Մարգարյանին զգուշությամբ տե-

ղափոխեց մի ապահով տեղ։ Երբ մարտը վերջացավ, գնդի հրամանատարը կանչեց Ղուկասին և զինվորների շարքի առաջ ասաց նրան.

— Կարմիրբանակային Մաղոյան։ Դուք մարտում ցուցաբերեցիք ձեզ իբրև անվեհեր մարտիկ, իբրև իսկական հերոս։ Ձեր կյանքը չխնայելով՝ դուք փրկեցիք հրամանատարին։ Ձեր քաջարի արարքը թող օրինակ լինի բոլոր մարտիկների համար։ Շնորհակալություն եմ հայտնում ձեզ և նշանակում եմ ջոկի հրամանատար։

Մաղոյանը շառագունեց։ Նա նայում էր զինվորների շարքին և հուզմունքից ոչ ոքի չէր տեսնում։ Իսկ մարտիկներն ուրախանալով իրենց ընկերոջ հաջողության համար, ողջագուրանքով նայում էին նրան, հպարտանալով նրա սխրագործության, իրենց պանծալի Լոռվա գնդի համար։

Ղուկասին և նրա մարտական ընկերներին Թիֆլիսից ուղարկեցին Հայաստան, որտեղ Զանգեզուրի և Մեղրու գավառներում նրանք մասնակցեցին դաշնակցական ավանտյուրայի լիկվիդացիային։ Ճակատամարտերից մեկի ժամանակ թշնամու ռումբը պայթեց Ղուկասի մոտ։ Պայթյունի ուժը մի կողմ շպրտեց ջոկի հրամանատարին և արկի վեր շպրտած հողն իր տակ թաղեց նրան։

— Մաղոյանը սպանվեց,— տագնապով իրար հաղորդեցին մարտիկները։ Բայց նրանք, որ ավելի մոտ էին Ղուկասին, տեսան, թե ինչպես հողը շարժվեց այնտեղ, որտեղ անհետացավ նա, թե ինչպես նա վեր բարձրացավ, թափ տալով իր վրայից հողը և շորերին քսված ցեխը, անվնաս կանգնեց իրենց առաջ։ Հետո երկար ժամանակ կարմիրբանակայինները հիշում էին այդ դեպքը և իրար աչքով անելով՝ ասում.

— Մեր Մաղոյանի համար ոչ միայն գնդակը, այլև ռումբն էլ սարսափելի չէ։

6.

Ղուկասի 15 տարին լրացավ։ Հայաստանի քաղաքացիական պատերազմի վերջին օրերին նա դիմում ներկայացրեց գնդի

պարտիական կազմակերպությանը, խնդրելով ընդունել իրեն բոլշևիկյան պարտիայի շարքերը իբրև թեկնածու։

Սկսվեցին խաղաղ կյանքի տարիները։ Կարմիր Բանակը մարտական ուսուցմամբ կատարելագործում էր իր վարպետությունը։ Ուսանում էր նաև Ղուկասը։ Նա հաջողությամբ ավարտեց դիվիզիայի դպրոցը, որտեղ ջանասիրաբար ուսումնասիրում էր ռազմական և հանրակրթական առարկաներ։ 1924 թվի վերջին Մադոյանը մտավ պարտիայի շարքերը որպես անդամ։

Այդ՝ հայկական առաջին հրաձիգ գնդում էր։ Կոմունիստները հավաքվել էին կարմիրբանակային ակումբում։ Նրանք համարյա ամենքն էլ մի քանի տարի էր, որ ճանաչում էին Ղուկասին։ Նրանցից շատերը Նրա հետ ձեռք-ձեռքի տված մասնակցել էին դաշնակների և մենշևիկների դեմ մղված մարտերին։ Հանդես եկողները խոսում էին Նրա մասին, որպես մի մարդու, որն արժանի է Լենին-Ստալինի մեծ պարտիայի անդամը լինելու։

Մադոյանը ուշադիր լսում էր ընկերներին։ Նրա սիրտն զգում էր, թե ինչ կարևոր բան է կատարվում իր կյանքում։ Նրա առաջ լայն լուսավոր ճանապարհ էր բացված։ Ամեն մարդու չէ, որ վիճակված է գնալ այդ ճանապարհով։ Դա ազնիվ, ուժեղ, քաջարի, ամուր կամքի տեր մարդկանց ճանապարհն է, որոնց համար կյանքը պայքար է հանուն ժողովրդի երջանկության։

Այդ ժողովում հանդես եկողներից մեկն էր Արսենը։ Նա ասաց.

— Մեր առաջ այժմ կանգնած է Ղուկասը, մի չափահաս երիտասարդ, որի բեղերն արդեն դուրս են եկել։ Իսկ ես հիշում եմ Նրան փոքր տղա եղած ժամանակվանից։ Այն ժամանակ մենք Նրան «փոքրիկ» էինք ասում։ Հիմա չկա «փոքրիկը»։ Նրա փոխարեն այստեղ կանգնած է մարտերում կոփված, խոհուն մի հրամանատար։ Շատ տարիներ չեն անցել Նրա գլխով, բայց դրանք եղել են դաժան տարիներ։ Կյանքը ծանր փորձությունների է ենթարկել Նրան և Նա տոկունությամբ տարել է այդ փորձությունները։ Ես միջնորդում եմ ընկեր Մադոյանին թեկնածությունից փոխադրելու պարտիայի անդամ։ Նա ամբողջապես նվիրված է կոմունիստական պարտիային, սովետական ժո-

A II 32762

ղովրդին: Քաղաքացիական պատերազմում եռանդուն մասնակից լինելով, նա մեր սովետական հայրենիքի նույնպիսի հայրենասեր կլինի նաև ապագայում:

Ժողովը միաձայն որոշում ընդունեց: Ղուկասին շնորհավորում էին:

Անցան տարիներ: Ղուկասի կյանքում մի կարևոր փոփոխություն ևս տեղի ունեցավ: Նա ամուսնացավ: Զորացրվելով բանակից, Մաղոյանն անցավ քաղաքացիական ծառայության: Շուտով Ղուկասի ընտանիքում ծնվեց նրա դուստրը՝ Ժենյան, իսկ երեք տարուց՝ Սերգեյ որդին: Մաղոյանը հոգատարությամբ խնամում էր իր երեխաներին:

— Իմ բախտավոր զավակներս,—փաղաքշանքով ասում էր նա նրանց,—այն լուսավոր ժամանակը, երբ դուք ապրում եք, կծաղկազարդի ձեր կյանքը:

Եվ հայրը պատմում էր երեխաներին, թե ինչ թանգ գնով է ձեռք բերված այդ լուսավոր կյանքը: Նա սովորեցնում էր երեխաներին ոչ միայն սիրել կյանքը, այլև պաշտպանել այն:

Օրըստօրե Մաղոյանի աչքի առաջ ծաղկում էր բոլշևիկների ձեռքով վերանորոգված, վերափոխված հարազատ Հայաստանը: Սովետական իշխանությունը, ռուս մեծ ժողովուրդը օգնեցին հայերին իրենց երկիրը դարձնելու ազատ և հարուստ ռեսպուբլիկա: Ստալինյան Կոնստիտուցիան ապահովում էր հայ ժողովրդի դարավոր իղձերի կենսագործումը:

Հնադարյան ավերակների միջից բարձրացավ Հայաստանի մայրաքաղաք Երևանը: Այդ գեղանիստ քաղաքը դարձավ Սովետական մեծ Միության ամենագեղեցիկ կենտրոններից մեկը:

Աճեց ռեսպուբլիկայի արդյունաբերությունը, աճեց և ամրացավ կոլտնտեսությունը, ժողովուրդը կառուցեց հարյուրավոր դպրոցներ, տասնյակ տեխնիկումներ, բարձրագույն դըպրոցներ: Հայկական քաղաքներն ու գյուղերը զարդարվեցին թատրոններով, կուլտուրայի տներով: Եվ շնորհապարտ մարդիկ Երևանում կառուցեցին Լենինի արձանը, որ ամենափառահեղն է աշխարհում: Նրանք գիտեն, թե ում երջանկություն, ուրախ կյանք բերեց իրենց: Նրանք հիշում են և երբեք չեն մոռանա ստալինյան իմաստուն խոսքերը. «Միայն սովետական իշխա-

նության գաղափարը խաղաղություն և ազգային վերածննդի հնարավորություն բերեց Հայաստանին։

Եվ երբ սովետական հողը ներխուժեցին գերմանական ֆաշիզմի հորդաները, Հայաստանի որդիները, սովետական երկրի բոլոր ժողովուրդների հետ միասին, ոտքի ելան Հայրենական Մեծ պատերազմի։

Սովետական հայրենիքի, Հայաստանի անկախությունը պաշտպանելու համար ռազմաճակատ մեկնեց նաև Ղուկաս Մադոյանը։

ՃԱՆԱՊԱՐՀԸ ԴԵՊԻ ՌՈՍՏՈՎ

1.

Հուլիսյան շոգերին Ուկրաինայի և Դոնի անեզր տափաստանները ողողված են արևով։ Հեռու, մինչև կապույտ երկնքի սահմանը տարածված են ցորենի արտերը։ Հատիկների ծանրության տակ հասկերը հակվել են գետնին։ Ցնկոտ անդորրը է տիրում դաշտի վրա։ Բայց ահա, ինչ-որ հեռվից, ծովից թե խաղաղ Դոնից, սահում ու գալիս են զեփյուռի ջերմ ալիքները։ Նրանց գգվանքից աղմկում ու ծածանվում են ոսկեգույն հասկերը։ Ալեծածան հասկերի ծալքերից դուրս է վազում վախեցած մոխրագույն նապաստակը։ Շլդիկը մի կողմ է ցատկում, տագնապահար նստում հետևի թաթերի վրա ու երկյուղով նայում չորս կողմը։ Եվ հանգստացած վերականգնված անդորրությունից, կորչում է խիտ արտի մեջ։

Տափաստանը լուռ է, բայց նրա ամեն մի թուփը, ամեն մի խոտը շատ բան կարող են պատմել։ Դեռ վերջերս այս լայնարձակ դաշտերում, որ զեղազարդված են մեր աշխատասեր մարդու աշխատանքի պտուղներով, մոլեգնում էր ահեղ ճակատամարտի բոցը։ Անընդհատ որոտից դղրդում էր գետինը։ Արշավող թշնամու կրակը այրում, ոչնչացնում էր ամեն մի կենդանի շունչ, միայն մոխիր ու քարեր թողնելով իր հետևից։ Արյան մեջ ողողվել էր հափշտակիչների կողմից ծվատված մեր հայրենի հողը։ Դրանք կատաղի ճակատամարտեր էին։ Բարին մարտնչում էր չարի դեմ, լույսը՝ խավարի դեմ, կյանքը՝ մահվան դեմ։

Այդ դաժան մենամարտի մեջ հաղթանակեց արդարու-

թյունը։ Որդիները կարողացան փրկել իրենց մոր—հայրենիքի կյանքը և ոչնչացրին, քամուն տվին Շպրե ծանծաղ գետի ափերից եկած հանդուգն, նենգակատ հափշտակիչներին։ Ճակատագիրը անհեղ և խայտառակ պատիժ էր պատրաստել այդ սարսափելի ոճրագործների համար։ Նրա՛նք, զրահավորված, մեր հողը ոտք կոխեցին այն անմոռանալի կիրակի օրը, հետները Բեռլինից տոններով հրանյութ վերցրած։ Նրանք ապավինել էին այդ կրակին, ինչպես որ ապավինել էին այն զրահին, որ պաշտպանում էր նրանց։ Պողպատն օգնեց նրանց հասնելու մինչև Վոլգայի ափերը։ Իսկ պատերազմը դեռ միայն սկսվել էր։ Սովետական անծայրածիր երկրի բոլոր կողմերից գալիս հավաքվում էին մեր ռազմիկները, հայրենիքի զավակներն ու ազատարարները, հավաքվում էին Ստալինգրադի մոտ, որտեղ լկտիացած թշնամին արդեն գոռում էր հաղթանակի մասին։ Իր լավագույն ուժերը գումարելով իբրև մի միաձույլ և մահաբեր բռունցք, սովետական ժողովուրդն այդ բռունցքն իջեցրեց գերմանացի զավթիչների զրահապատ կրծքին։ Արհեստական զրահը չդիմացավ հսկայի հարվածին։ Զրահը ճեղքվեց, գերմանացին շնչակտուր եղավ, ջղաձգվեց, ետ-ետ գնաց և նրա հետևից Ուկրաինայի ու Դոնի հողերի վրա մնաց հիտլերյան զինվորների միլիոնավոր անանուն գերեզմանների սև հետքը։

Պատերազմը վերջացավ։ Վերջին թնդանոթները որոտացին Ալպերին մոտիկ, ազատագրված Պրագայի պատերի տակ, Բեռլինի ավերված ռայխստագի շուրջը։ Մեր հողում փտեցին նրա՛նց ոսկորները, ովքեր սուրը ձեռքին ոտք էին կոխել այնտեղ, այն ձեզնից խլելու որոշումով։ Փոսերի մեջ, ջերմաթմբերի մոտ, դաշտային ճանապարհներին, ամենուրեք մենք տեսնում ենք շուռ եկած, ջարդ ու փշուր եղած գերմանական տանկեր, թնդանոթներ, ավտոմեքենաներ։ Այլանդակված, նրանք անշարժացել են գետնին նույն դիրքով, ինչպես որ գետնին է գամել նրանց մեր պանծալի զինվորների արկերի և ռումբերի հարվածը։

Բայց դառնանք այն օրերին, երբ աշխարհով մեկ թնդում էր Ստալինգրադի փառքը։ 1943 թվի ձմեռն էր։ Սովետական Բանակը դեպի արևմուտք էր քշում հիտլերյան հափշտակիչներին ազատագրելով Դոնի քաղաքներն ու ստանիցաները։ Ռազմաճակատը մոտենում էր Ռոստովին։ Մեր զորագնդերը մի քանի

կողմից մոտենում էին նրան. Ստալինգրադից՝ Դոնի աջ և ձախ ափերով, Կովկասի կողմից և Աստրախանի տափաստաններից։ Այս վերջին ուղղությամբ Ռոստովի վրա էր գնում գեներալ Գիրասիմենկոյի բանակը, որի ավանգարդում գտնվում էր ավագ լեյտենանտ Ղուկաս Մադոյանի առանձին հրաձիգ գումարտակը։

Ստալինգրադի համար մղվող մարտերում Գերասիմենկոյի բանակը գտնվում էր ձախ թևում և հարավ-արևելյան կողմից պաշտպանում էր Վոլգայի ամրոցը։ Այժմ ուղղություն բռնելով դեպի Դոնի մայրաքաղաքը, նա գնում էր դեպի Էլիստա, Սալսկ։

Հալչող ձյունը դժվարացնում էր զորքի առաջխաղացումը։ Ցեխոտ ճանապարհներով դժվարությամբ էր առաջ գնում մարտական տեխնիկան, թիկունքային գույքը։ Առաջխաղացումը հեշտացնելու համար գնդի տրանսպորտը լրացնում էին ուղտերով։ Մարտիկները կատակով «ամենագնաց» էին անվանում ուղտին։ Տարօրինակ էր վերջին կոնստրուկցիաների ավտոմեքենաների այդ զուգորդությունը դանդաղաշարժ երկաթապատ կենդանիների հետ։ Ուղտերը գնում էին վիլիսների հետ նույն շարքերում։ Բայց ռազմաճակատում ինչը կարող է զարմացնել մեր զինվորին։

2.

Մադոյանի գումարտակը գիշերում էր Էլիստայի մոտ։

Թշնամուց խլված լապտերի աղոտ լույսը հազիվ լուսավորում էր փոքրիկ սենյակը և այնտեղ գտնվող մարդկանց։ Մուտքին հակառակ պատի տակ վրան հին թերթ փռված մի խարխուլ սեղան կար։ Սեղանի շուրջը նստած էին գումարտակի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ ավագ լեյտենանտ Օխապկինը և շտաբի պետ լեյտենանտ Կալինինը։ Անկյունում դրված ցածրիկ երկաթե մահճակալի վրա պառկած էր Մադոյանը։ Խոսում էին նախորդ օրը հարցաքննված «լեզվի» ցուցմունքների մասին։ Նրանից ուզեցել էին իմանալ գերմանացիների տեղաշարժերի, նրանց կենտրոնացման վայրի մասին։

— Խելքի մոտիկ մի բան չասաց սրիկան,— ձեռքը թափ տալով ասաց Օխապկինը,— կանգնել-դողդողում ու ծամծմում

է միևնույն բանը. «Ստալինգրադ, ալլես կապուտ։ Հիտլեր կապուտ»։[1]

— Հիմա դա նրանց մեջ ժողովրդական արտահայտություն է,— ասաց Մաղոյանը։ Նա խոսում էր նկատելի հայկական շեշտով։ Ստալինգրադում իրենց գլխին եկածից ֆրիցներն ամբողջ կյանքում դողալու են։ Նրանց բանը, բարեկամ, շատ դժվար է։ Օխապկինը ժպտաց։ Նրան ծիծաղեցրեց գումարտակի հրամանատարի արտասանած վերջին նախադասությունը։ Մաղոյանը հաճախ էր այդպես խոսում։ Միշտ աննման, մեղմ կովկասյան հումորով։

— Ինձ, կարմիրբանակային Դանիլչենկոյի խոսքերը շատ ավելի բան տվին, քան այդ Ֆրիցի թոթովանքը,— ասաց լեյտենանտ Կալինինը։

Կարմիրբանակային Դանիլչենկոն փորձված հետախույզ էր։ Ոչ բարձրահասակ, լայնաթիկունք այդ ուկրաինացին հիշեցնում էր Ռեպինի «Զապորոժցիներ» հայտնի նկարի վրա պատկերվածներից մեկին։ Նա ընդհանուր հարգանք էր վայելում մարտիկների մեջ։ Նրան սիրում էին անվեհերության, զինվորի քաջասրտության համար, որ նա շատ անգամ ցուցաբերել էր մարտերում, և ուրախ բնավորության համար։ Այն «լեզուն», որի մասին խոսվեց քիչ առաջ, բերել էր Դանիլչենկոն։ Նրան հրամանատարությանը ներկայացնելով, նա տեղում քայլելով ասել էր. «Ա՜յ թե փախչում են ֆրիցները հա՜։ Ա՜յ թե սառել է Ֆրիցը ու նիհարել սոված ճալուց»։

Գումարտակի հրամանատարը հավանություն տվեց Կալինինի խոսքերին։

— Քեզ հետ համաձայն եմ,— ասաց նա,— մեզ մոտիկ ֆրիցներ չեն մնացել։ Բայց և այնպես պետք է ձեռք առնել բոլոր նախազգուշական միջոցները։ Վիրավոր օձն ավելի սաստիկ է խայթում։

Դիմելով Օխապկինին, Մաղոյանը հարցրեց.

— Մարտիկներին փլավով կերակրե՞լ եք։

— Այո։

Փլավն այնպես տաք է՞ր, ինչպես մեզ տվին։

---

[1] «Ստալինգրադում ամեն ինչ կորած է։ Հիտլերը կորած է»։

— Լավ էր, ինչպես որ մեզ տվին, ինքս փորձեցի։ Կերան, հիմա քնել են։

— Թող հանգստանան մեր արծիվները,— մտահոգված արտասանեց գումարտակի հրամանատարը։— Նրանց առաջ դեռ երկար ճանապարհ կա, դժվարին, բայց լուսավոր ճանապարհ։ Չէ՞ որ շատերի ընտանիքները մնացել են այն կողմը։ Ինչպիսի՜ անհամբերությամբ են հիմա նրանք սպասում իրենց եղբայրներին, որդիներին, հայրերին։ Ես, բարեկամներս, հաճախ մտածում եմ, թե ինչ երջանիկ մարդիկ ենք մենք։ Ամեն մարդու չի վիճակված ազատարար լինել։ Մեծ պատիվ է բաժին ընկել մեզ։ Եվ մի տեսեք, թե ինչ թանգ են գնահատում այդ պատիվը մարտիկները, ինչպե՜ս են նրանք ձգտում դեպի առաջ, դեպի Դոնի ստանիցաները, դեպի ուկրաինական գյուղերը։

Դեռ երկար զրուցում էին սպաները։ Ինչի մասին էլ խոսք էր բացվում, այն անպայման վերջանում էր ջերմ, սրտագին խոսքերով հարազատ սովետական մարդկանց գերմանական ստրկությունից ազատագրելու վերաբերյալ։ Այդ նրանց վեհ նպատակն էր։ Այդ նպատակն էր Սովետական Բանակի սպաներին բերել այստեղ, այդ տափաստանը, որտեղից նրանք սկսում էին իրենց մեծ արշավանքը՝ թշնամու ոտքի տակ կոխոտված հայրենի երկիրն ազատագրելու համար։ Այդ ազնիվ նպատակը ավելի սերտ էր համախմբում, միացնում երկրի տարբեր կողմերից եկած այդ երեք մարդկանց։ Նրանցից ամեն մեկը տարբեր բնավորություն ուներ, իր առանձնահատուկ սովորությունները, բայց այն մեծ խնդիրը, հանուն որի նրանք արյուն էին թափել ճակատամարտերում, ընդհանուր և միասնական էր նրանց համար։ Այդ խնդիրն իրեն էր ենթարկել նրանց բոլոր գործողությունները, նրանց բոլոր մտքերը, դարձել էր նրանց կյանքի բովանդակությունը։

3.

Ղուկաս Մադոյանը Ստալինգրադի մոտ էր հասել երկարատև նահանջի դառնությունը ճաշակելուց հետո։ Որպես վաշտի հրամանատար, նա մարտեր մղելով նահանջում էր Ուկրաինայի քաղաքներով ու գյուղերով։ Նա տեսել էր կանանց ու երեխա-

ների տխուր դեմքերը, նրանց արտասվաթոր աչքերը: Դժվար բան էր հայրենի հողը և թանկագին հայրենակիցներին թողնել հափշտակիչների ձեռքին: Մաղոյանի զինվորները լռում էին, բայց պաշտպանողական մարտերում կռվում էին դաժանորեն, ծանր հարվածներ հասցնում գերմանացիներին, իրենք էլ էին կորուստներ ունենում և կատաղի, արյունահեղ գոտեմարտերում ճանաչում և յուրացնում էին ռազմի նոր մեթոդները, կոփում էին իրենց ուժերը, սովորում էին ատել և հաղթել թշնամուն:

Դոնեցի տափաստաններում Մաղոյանը վիրավորվեց: Հիվանդանոցից դուրս գալուց հետո հրամանատարությունը նրան հանձնարարեց կրտսեր և միջին հրամանատարներ պատրաստել ռազմաճակատի համար: Ավագ լեյտենանտը չէր ուզում բաժանվել իր վաշտից, բայց հարկադրված եղավ: Ծանր ժամանակ էր: Գերմանացիները շարունակում էին առաջ սողալ: Երեք ամիս շարունակ Մաղոյանը գիշեր-ցերեկ անընդհատ ուսուցանում և ռազմաճակատ էր ուղարկում ջոկի և վաշտի երիտասարդ հրամանատարներ: Իրենց քաղաքացիական զբաղմունքը թողած բանվորները, կոլխոզնիկները, սովետական ծառայողները, որ մեծ մասամբ երբեք զենք չէին բռնել իրենց ձեռքում, Մաղոյանի դպրոցում սովորելով՝ դառնում էին կարող հրամանատարներ:

Թշնամին մոտենում էր Վոլգային: Մաղոյանը ճանապարհ ընկավ դեպի Ստալինգրադ, որտեղ թշնամու կրակի տակ շարունակում էր իր գործը: Համեմատաբար կարճ ժամանակում նա պատրաստեց ավելի քան 220 հրամանատարներ, որոնք հետո արիաբար պաշտպանում էին Ստալինգրադը: Այդ ժամանակ Մաղոյանը երեք անգամ պարգևատրվել էր բարձր հրամանատարության կողմից և ստացել 27 շնորհակալագրեր:

Սկսվեց Սովետական Բանակի հարձակումը: Մաղոյանին նշանակեցին առանձին հրաձիգ գումարտակի հրամանատար: Նրա մարտիկները ջարդում էին գերմանացիներին Ստալինգրադի հարավային արվարձաններում: Երբ ավագ լեյտենանտն ավելի մոտիկից ծանոթացավ ստորաբաժանման անձնակազմի հետ, հետաքրքրությամբ իմացավ, որ իր վաշտերում ծառայում են 18 ազգությունների պատկանող մարտիկներ: Այնտեղ կային ռուսներ, ուկրաինացիներ, բելոռուսներ, հայեր, վրացիներ, ուզբեկ-

ներ, տաջիկներ, ադրբեջանցիներ, օսեր, կիրգիզներ և սովետական այլ ազգությունների զավակներ։

— Լեզուները մեր գումարտակում շատ են, ամբողջ 18 լեզու, բայց մենք գերմանացիների հետ միայն մի լեզվով, սովետական լեզվով կխոսենք, մեր ահեղ, անսասան զենքի լեզվով։ Գերմանացիները շատ լավ են հասկանում այդ լեզուն...

Գումարտակի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ ավագ լեյտենանտ Անդրեյ Օխապկինին դուր էր գալիս լեռնային Հայաստանի այդ բարձրահասակ, հսկայի կառուցվածք ունեցող տաքարյուն որդին։ Ինչպես միշտ պատահում է այդպիսի հանգամանքներում, նրանք կարճ ժամանակում շատ մոտ ծանոթացան և աննկատելիորեն ամուր կապվեցին իրար հետ։ Օխապկինը հանձին Մազոյանի գտավ մի գիտակ, հասուն սպա, մարտական փորձով սպառազինված մի մարդ։ Անդրեյն առանձնապես ուրախանում էր գումարտակի հրամանատարի մեջ տեսնելով այն, ինչ որ շատ կարևոր է ամեն մի հրամանատարի համար— ռազմական լուրջ գիտելիքների զուգորդումը նրանք գործադրելու վարպետության հետ։

Մարտիկները ի դեմս Մազոյանի տեսնում էին ոչ միայն իրենց պետին, որի վերաբերմամբ համակված էին պատասխանատվության գիտակցությամբ, որ օրինականացված էր սրբազան երդմամբ, այլև տեսնում էին իրենց մոտիկ, իրենց լավ հասկացող մի մարդու, որ հայր էր զինվորների համար, միշտ մատչելի, զգայուն, սրտակից մի մարդու։ Նրանք գիտեին, որ նա ծնվել և մեծացել է հողագործի ընտանիքում։ Այդ երևում էր նրա առողջ, կոպտավուն կազմվածքից և գյուղացու խոշոր ձեռքերից։ Դրանից էլ ավագ լեյտենանտն ավելի մոտիկ ու հարազատ էր դառնում նրանց համար։ Նա կարողանում էր ղեկավարել իր ստորադրյալ ռազմիկներին, ամեն մեկին մոտենալով այնպես, ինչպես պահանջում էր իրադրությունը, միաժամանակ հաշվի առնելով մարտիկի անձնական հատկությունները։ Այդպիսի ուշադիր ու լուրջ վերաբերմունքը դեպի մարտիկները ստորադրյալների մեջ առաջ էր բերում անսահման վստահություն գումարտակի հրամանատարի, նրա հրամանների նկատմամբ։ Կարմիրբանակայինները գումարտակի հրամանատարին հատուցում էին նվիրվածությամբ, զինվորի հարատև սիրով,

արծվի պատրաստակամությամբ միշտ և ամենուրեք աննահանջ հետևել նրան, նրա հետ միասին մտնել թեկուզ կրակի մեջ։ Մի անգամ հետախույզ Դանիլչենկոն Մաղոյանին «բատյա» անվանեց։ Ուկրաիներեն այս ջերմ բառը այդ օրվանից կպավ նրան։

Սպայի այն առանձնահատկությունները, որ ուներ Մաղոյանը, Անդրեյը համարում էր հրամանատարի ամենաառաջնակարգ հատկությունները, այն մարդու, որ ռազմիկներին առաջնորդում է պատերազմի հրի միջով, որը տերն է այն բազմաթիվ մարդկանց բախտի, որոնց հայրենիքը վստահել է նրան։ Օխապկինը Մաղոյանից սովորեց ղեկավարել մարդկանց։ Իր քաղաքացիական զբաղմունքով Անդրեյը տեխնիկ էր։ Առաջ նա ապրել էր Ռոստովում և աշխատել այնտեղի գյուղատնտեսական մեքենաների գործարանում։ Երբ պատերազմը սկսվել էր, նրան, որպես պետական մասնագետի, թողել էին գործարանում աշխատելու։ Անդրեյը չէր համակերպվում դրան և մի քանի անգամ դիմել էր ռայոնական զինվորական կոմիսարիատ, բայց այնտեղ միայն ուսերը թոթվել էին. «Ի՞նչ կարող եմ անել,—ասել էր կոմիսարը,—հո ամենքը խրամատներում չեն կռվելու»։ Սակայն Օխապկինն ուզում էր կռվել հենց այնտեղ և համառորեն ձգտում էր դրան։ Երբ գործարանը տեղափոխվեց Տաշքենտ, Անդրեյը հիվանդ լինելով՝ մնաց Ռոստովում, և հենց որ Ռոստովից մեկնեց գործարանի սարքավորումը տեղափոխող վերջին գնացքը, գնաց ռազմաճակատ, որն արդեն շատ մոտիկ էր։

Անդրեյը 26 տարեկան էր դառնում արդեն։ Նա խարտյաշ, միջահասակ, նրբիրան և, ինչպես ինքը սիրում էր ասել իր մասին՝ «բարակոսկր մի մարդ էր»։ Սակայն «բարակոսկրը» չդավաճանեց նրան, երբ որ Տագանրոգի մոտ ձեռնամարտի ժամանակ գերմանացու սվինը ծակեց նրա կուրծքը։ Այն ժամանակ նա կրտսեր քաղղեկ էր։ Իսկ այժմ, երբ բանակում սպայական ուսադիրներ էին մտցվել, նրա աստիճանը բարձրացրին, և նա ստացավ ավագ լեյտենանտի կոչում։

Գումարտակի շտաբի պետ, Ստալինգրադի բնակիչ Ալեքսեյ Կալինինը տարիքով Օխապկինից մեծ չէր։ Սակայն նրա լուրջ, կենտրոնացած դեմքը, նրա միջահասակ, քիչ պարարտ մարմնի դանդաղկոտ շարժումները, նրա սակավախոսությունը, նա, ասես թե, խստիվ սահմանված նորմայով էր իր բերանից

բաց թողնում բառերը, այն տպավորությունն էին ստեղծում, թե նա ավելի տարիքոտ է։ Մինչև բանակ կանչվելը նա նախ ուսուցիչ էր, ապա ժողովրդական կրթության ռայոնական բաժնի վարիչ։ Մաղոյանն իմանալով այդ մասին, ակնարկելով շտաբի պետի ավելորդ սակավախոսությունը, հաճախ կատակով դիմում էր նրան միևնույն հարցով.

—Լսիր, Ալյոշա, ճիշտ է արդյոք, որ դու քո մանկավարժական պրակտիկայում լայնորեն օգտագործելիս ես եղել ձեռքերի ու ոտքերի շարժումները և ընդհանրապես շարժումներով խոսելը։

Այս խոսքերից Օխապկինը զվարթ ծիծաղում էր, իսկ Կալինինը թեև նեղանում էր, բայց կարճ պատասխանում էր.

—Պերճախոսությունը արծաթ է, իսկ լռելը՝ ոսկի։

Ալեքսեյը լավ գիտեր իր գործը։ Դժվար ժամանակ նա իրեն չէր կորցնում, մարտի մեջ արիություն էր ցուցաբերում և դրանով արժանացել էր շրջապատողների հարգանքին։ Մաղոյանը գնահատում էր նրան։

Երեքը շատ համերաշխ էին ապրում, աշխատում էին ձեռք-ձեռքի տված և միատեղ ջանքերը շարունակ մարտական նոր հաջողություններ էին բերում նրանց։

Բանակը մարտերով շարժվում էր դեպի արևմուտք։ Այն բրիգադը, որի կազմում գտնվում էր գումարտակը, գերմանացիներից մաքրելով կալմիկական տափաստանը, մարտեր էր մըղում Ռոստովի մարզի հարավ-արևելյան ռայոններում։ Արդեն անցել էին Զիմովնիկին, Պրոլետարսկայա ստանիցան, Սալսկ քաղաքը։ Զորամասերը բավական արագ էին առաջ խաղում, բայց իրենց հարազատ վայրերին կարոտած մարտիկներին այդպիսի վճռական առաջխաղացումն այնուամենայնիվ դանդաղ էր թվում։

—Գիտե՞ք ինչ, ընկեր գումարտակի հրամանատար,—մի անգամ դաշտային ճանապարհին սիրտը բաց անելով Մաղոյանի առաջ, ասաց կարմիրբանակային Օստապ Դանիլչենկոն,—պետք է արագացնել տեմպը։

Մաղոյանը ժպտաց։

—Ինչպես երևում է, շատ ես կարոտել Ուկրաինային։

—Այո, ինչ թաքցնեմ, ընկեր հրամանատար։ Իմ ամբողջ կյանքը այնտեղ է։ Որ մտածում եմ, թե անիծյալ գերմանացին

տոնակոխ է անում Ուկրաինան, սիրտս կտրտվում է։ Ամբողջ ճանապարհը վազելով կգնայի մինչև այնտեղ։

—Պատերազմում այդպիսի բան չի լինում։

Հասկանում եմ, ընկեր գումարտակի հրամանատար։

4.

Իր վախճանին էր մոտենում հունվարի վերջին օրերից մեկը։ Մաղոյանի գումարտակը մոտենում էր Կազալինիցկայա ստանիցային։ Դանդաղ իջնում էր ցրտաշունչ երեկոն։ Ճանապարհներն այնքան էին սառել ու ամրացել, որ ձյունը ճռռում էր ոտքերի տակ։

Մինչև ստանիցան երեք կիլոմետր էր մնում։ Գումարտակը, ինչպես առաջ, գնում էր բրիգադի առաջից։ Անցան մի լայն ձորակի միջով, որ մեծ տարածության վրա կտրում էր տափաստանը։ Ըստ երևույթին գերմանացիները որոշ հույսեր էին դրել այդ ձորակի վրա. հենց որ այն մնաց Մաղոյանի մարտիկների թիկունքում, հիտլերականները հանկարծակի հակագրոհի դիմեցին։

Ձյան վրա հստակ գծագրվում էին տանկերի սև կետերը, որոնք առաջ էին շարժվում դեպի գումարտակի մարտական շարքերը։ Մարտիկները հաշվեցին ավելի քան 50 տանկ։ Ծանր մարտ էր սպասվում։ Բաց դաշտում տանկերի դեմ կռվելը հեշտ գործ չէ։ Մաղոյանը մարտիկներին հրամայեց պառկել։ Թևերում դիրք գրավեցին հակատանկային գնդացրորդները։ Գումարտակի հրետանավորները թնդանոթների փողերն ուղղեցին մոտեցող մեքենաների կողմը։

—Ամուր կաց Մամեդ, հիմա ուրախ համերգ է սկսվելու,—ասաց իր ընկերոջը հակատանկային գնդացրորդ Պյոտր Մակրուշենկոն։

Մամեդ Նաջաֆովը, որին ուղղված էին այս խոսքերը, կարմիր այտերով, թուխ դեմքով մի մարտիկ, գերմանական տանկերից չէր հեռացնում իր հրացայտ, քիչ շեղ տաջիկական աչքերը։ Նրանց մեջ երկյուղ չէր նկատվում. նրանք, ավելի շուտ, ասես թե զարմանք էին արտահայտում։ Մամեդն առաջին անգամ էր տեսնում գերմանական տանկեր։ Բայց բավական էր

նայել նրա գեղեցիկ, արևելյան դեմքին, որպեսզի անմիջապես նկատեիր նրա վրա մի սուր համակրանք առաջացնող պատանեկան միամիտ հետաքրքրություն։

—Ախ, Պետյա, ես ինչպես չեմ կարող տանել նրանց,— զզվանքով ասաց Մամեդը։ Անիծվածները միայն այն ժամանակ են կռվում, երբ երկաթով են պատսպարվում։ Եթե իմ հայրենիքում շնագայլերը տանկերի մեջ նստած լինեին, նրանք նույնպես կհարձակվեին մեր կիշլակների վրա։

—Այ թե ասացիր, հա՛. դա իսկական թերթում գրելու բան է,—պատասխանեց Պյոտրը։

Ծուղ որոտաց հրետանին։ Առաջին թնդանոթից հետո խփեց երկրորդը, ձայն արձակեց երրորդը։ Բոցավառվելով տեղում պտտվեց և կողքի վրա ընկնելով՝ անշարժացավ առաջին տանկը։

—Կեցցե՛ք, եղբայր հրետանավորներ,—հիացավ Մակրուշենկոն։

Այդ ժամանակ մարտի մեջ մտնել սկսեցին նորանոր թընդանոթներ։ Նրանք ուղիղ նշանառությամբ խփում էին թըշնամու մեքենաներին։ Դժոխային որոտը բռնել էր տափաստանը։ Մեկ այստեղ, մեկ այնտեղ լսվում էին գերմանական թնդանոթների պատասխան կրակոցները։

Շրջանցելով խփված տանկը, ուրիշ մեքենաներ սկսեցին մոտենալ գումարտակի դիրքերին։ Մակրուշենկոն ընտրեց նրանցից մեկը և, դառնալով Նաջաֆովի կողմը, ասաց.

—Դե՛, եղբայր, հիմա մեր հերթն է։

Առաջին կրակոցը անհաջող անցավ։ Երկուսն էլ տրտմեցին։ Մակրուշենկոն, շունչը պահելով, նշան բռնեց երկրորդ անգամ։

—Վառվեց, Պետյա, վառվեց,—ուրախ բացականչեց Մամեդը։

Մակրուշենկոն շինելի թևով շտապ սրբեց ճակատի քրտինքը և սկսեց նշան բռնել ուրիշ մեքենայի։ Մենամարտը մի կողմից՝ գերմանական տանկիստների և մյուս կողմից՝ մեր հրետանավորների ու զրահահարների միջև բորբոքվում էր, դաշտում վառվում էին արդեն մի քանի տանկ։

Սուրհանդակները Մաղոյանի մոտ կանչեցին առաջին և

երկրորդ վաշտերի պետերին, լեյտենանտներ Լուպանդինին և Շիլովին։

—Տեսնում եմ՝ դուք առանց գործի ձանձրանում եք,— ասաց գումարտակի հրամանատարը։—Քանի հրետանավորները տանկերն են ոչնչացնում, պետք է օգուտ քաղել դրանից։ Հրամայում եմ անմիջապես գնալ ձորակը, թևանցել գերմանացիներին և հասնել այ այս կետը,—նա ցույց տվեց քարտեզի վրա,— ու գրավել երկաթուղային կայարանը։

Սպաները վազեցին հրամանը կատարելու։

5.

Մաղոյանը, պլանշետը վերցնելով, դարձավ դեպի Օխապկինը.

—Դու կգնաս նրանց հետ, Անդրեյ, իսկ ես կմնամ այստեղ։ Հաշվի առ ամենագլխավորը—արագություն և հանկարծակիություն։ Գերմանացիները համոզված են, որ կաշկանդել են մեզ այստեղ։ Կայարանում քո երևալը կատարելապես անսպասելի կլինի նրանց համար։ Հարց ունե՞ս։

—Ո՛չ։

—Կարող ես գործի անցնել։

—Լսում եմ, ընկեր գումարտակի հրամանատար։

Լուպանդինի վաշտի մարտիկների հետ միասին Օխապկինն իջավ ձորը։ Արագ էին գնում։ Դաշտից լսվող մարտի աղմուկը շտապեցնում էր կարմիրբանակայիններին։ Գնալն առանց դրան էլ հեշտ էր. ձյունը սառնամանիքից ամրացել էր, սառը գուրեկան օդը խփում էր զինվորների դեմքերին, աշխուժացնում նրանց։

Ձմռան պարզ երեկո էր։ Մութ կապտավուն երկնքի խորքում բռնկվում ու փայլատակում էին բենգալյան կրակները խոշոր ոսկեգույն աստղերի նման։ Օխապկինը, չգիտես ինչու, մտածեց, թե այս աստղերը հիմա շատ լավ երևում են նաև իր հարազատ Ռոստովում, որն արդեն միանգամայն մոտիկ է։ Եվ գուցե այդ րոպեին, ճիշտ այնպես, ինչպես ինքը, իր կինը՝ Նինան, որ հենց նոր անկողնում պառկեցրել է 5 տարեկան Նատաշենկային, նույնպես նայում է այդ աստղերին։ Այդ

միտքը ջերմացրեց Անդրեյի սիրտը ու ժպիտ բերեց նրա բարեհամբույր դեմքին։ Նա ակամա արագացրեց քայլերը։ «Ռոստո՜վ, սիրելի Ռոստով,— ասաց նա ինքն իրեն,— մենք շուտով, շատ շուտով կմտնենք քո ծանոթ փողոցները»։

Մաղոյանի ենթադրությունները հաստատվեցին։ Հետախույզները զեկուցեցին, որ կայարան մուտք գործել դժվար չէ։ Երկաթուղագծերի վրա կանգնած են շատ էշելոններ և նրանց շարժումը կաշկանդված է։ Ամեն տեղ տիրում է շփոթություն և անկարգություն։ Հրամանատարների հետ կարճատև զրույց ունենալով վերջին նախապատրաստությունների վերաբերյալ, Անդրեյը բարձրաձայն ու կրքոտ կոչ ուղղեց մարտիկներին.

—Հանուն հայրենիքի, հանուն Ստալինի, առաջ։

Ատրճանակը ձեռքին, ոգեշնչելով ու իր ետևից տանելով զինվորներին, նա վազելով առաջիններից մեկը մտավ կայարան։ Հարձակումն ահեղ էր ու անսպասելի։ Ավտոմատների ու գնդացիրների կրակոցները և բարձրագոչ ուռաները մի ընդհանուր որոտի մեջ միախառնվելով՝ շշմեցրին հակառակորդին։ Սարսափից գունաթափված գերմանացիները դուրս էին փախչում վագոններից, շփոթված այս ու այն կողմն էին վազում և վայր ընկնում շանթահարված մեր գնդակներից։ Մի քանի րոպե հետո կայարանը ամբողջապես գտնվում էր Մաղոյանի մարտիկների ձեռքում։ Այնտեղ ամրանալով, նրանք սլացան դեպի ստանիցայի փողոցները։ Գործի այս անսպասելի ընթացքը գերմանացիներին ստիպեց նահանջել։ Դաշտում թողնելով 19 այրված ու ջարդված մեքենաներ, կենդանի մնացած գերմանացի տանկիստները նահանջեցին Բատայսկի ուղղությամբ։

Կագալնիցկայա ստանիցայի բնակիչները ջերմորեն դիմավորեցին իրենց ազատարարներին։ Չնայած ուշ ժամին, կանայք տաք կաթ էին բերում մարտիկների համար, հյուրասիրում էին նրանց տաք-տաք բլիթներով և չքաշվելով իրենց արցունքներից, լաց էին լինում ուրախությունից։ Առավոտյան, երբ կարմիրբանակայինները շտապեցին ճանապարհ ընկնել, բնակիչները չէին ուզում բաժանվել նրանցից։

—Մի քիչ հանգստացեք, թեյ խմեք, հոգնել եք կռվի մեջ,— ասում էին ծերունիները Մաղոյանին։

—Շնորհակալ ենք, հայրիկներ, ոչ մի կերպ չենք կարող,—

իր սպիտակ, խոշոր ատամները բաց անելով, սիրալիր պատասխանում էր գումարտակի հրամանատարը։ Նայեցեք մեր զինվորներին, նրանք հովազների նման դեպի առաջ են ձգտում։ Եվ իսկապես որ պետք է շտապել, հայրիկներ, մեզ ուրիշ ստանիցաներ են սպասում, սպասում է Ռոստովը, սպասում է ուկրաինական հողը։

Ծերունիները հոգոց քաշելով, համաձայնում էին դրա հետ։

—Ճիշտ է քո ասածը, հրամանատար, զինվորի գործն է արշավանքի ելնել։ Գնացեք, որդիներս, աստված ձեզ հետ։ Խփեցեք անիծյալ գերմանացիներին։

6.

Հետապնդելով մարտերով նահանջող հակառակորդին, գումարտակը Բատայսկի ճանապարհին գերմանացիներից ազատագրեց մի խոշոր սովխոզ։ Սովխոզին մոտիկ մի պուրակ կար։ Այնտեղից հանկարծակի գումարտակի դեմ դուրս եկան թշնամու 17 տանկ։

—Կորա՜նք,—գոռաց մարտիկներից մեկը։

Մաղոյանը հանդարտ դարձավ այդ ձայնի կողմը և ծիծաղեց։

—Այդ դո՞ւ ես այդպես պարծենում։ Բոլոր տանկերը կորչել չեն կարող։ Մի երկուսը գուցե խփենք, մյուսները կփրկվեն։

Այդ ժամանակ մեր ստորաբաժանումներին մոտենալ սկսեց «Յունկերս 88» ինքնաթիռների մի խումբ։

—Ֆրիցներն ուզում են կասեցնել մեր շարժումը, հետ շպրտել Ռոստովից,—ասաց գումարտակի հրամանատարը։ Բայց նրանք չգիտեն, թե ում հետ գործ ունեն։ Արծիվները երբեք չեն նահանջում, արծիվները չեն վհատվում։ Ճի՞շտ եմ ասում, տղաներ։

—Ճիշտ է, ճիշտ է,—լսվեցին կարմիրբանակայինների ձայները։

—Թեև դրությունը լարված է և գործը բարդ, հիշեցրեց Մաղոյանին Դանիլչենկոն նրա սիրած ֆրազը,—բայց մենք չենք տապալի գործը, կխփենք ֆրիցների դնչին։

Զրահահարներ Մակրուշենկոն և Նաջաֆովը կատարյալ

պատրաստությամբ պառկած էին իրենց ծանր հրազենների մոտ։ Շուտով ռումբերի պայթյունները խառնվեցին թնդանոթների կրակոցներին, գնդացիրների տկտկոցին, ավտոմատների և հրացանների համազարկերին։ Օգտվելով օդային քողարկումից, գերմանական տանկերը համառորեն առաջ էին սողում։ Մի քանի մարտիկներ արդեն անշարժ ընկած էին դաշտում՝ ռումբերի բեկորներից և տանկերի արկերից խոցված։

Կրակը երկուստեք ուժեղանում էր։ Սպիտակ խաչերով սև տանկերն ավելի ու ավելի մոտենում էին։ Աջ թևում թշնամու երկու մեքենաներ տրորեցին դիրք գրաված մարտիկներին և արդեն մտնում էին գումարտակի մարտական շարքերի մեջ, բայց նրանց կանգնեցրին։ Մեքենաներից մեկը իրենց հակատանկային հրազենով խփեցին Սերգեյ Ռումյանցևը և Արամ Հովհաննիսյանը, իսկ երկրորդը պայթեցրեց եֆրեյտոր Վասիլի Իվանովը։ Նա մոտեցավ տանկին հետևից, երբ այն շառաչյունով անցավ խրամատի վրայից, և թափով տանկի վրա շպրտեց նռնակների կապը։ Մոտորը կանգ առավ և լռեց։ Այրված մեքենան անշարժացավ տեղում։ Իվանովը գլխից վիրավորվեց նռնակի բեկորից։

Մի այլ հակատամասում ևս հաջողություն ձեռք բերվեց։ Այդ մասին զինվորները հայտնում էին իրար։ Մակրուշենկոն և Նաջաֆովը իրենց հրազենով խփել էին մի «Յունկերս—88»։ Հայնաթև ռմբակոծիչը իր հետևից բոցի և ծխի հետք թողնելով՝ դղրդյունով խրվել էր գետնի մեջ։

—Ուռա՜, կեցցես Պետյա,—գրկելով ու համբուրելով իր ընկերոջը, կանչում էր քրտինքի մեջ կորած հրաձիգ Մամեդը։ Նա չէր նկատում, թե ինչպես արյան կարմիր շիթը հոսում է իր ուսից դեպի կուրծքը։

Երկնքում երևացին մեր օդաչուները։ Նրանք գերմանացիներին ստիպեցին օդային մարտի բռնվել։ Դա գումարտակին հնարավորություն տվեց իր ամբողջ կրակը փոխադրել տանկերի վրա։ Մարտի ելքը կանխորոշված էր։ Դաշտում ծխում էին գերմանական մի քանի մեքենաներ, իսկ մնացածները ետ դարձան։

—Առա՜ջ, աննահանջ հետապնդել թշնամուն,—լսեցին մարտիկները Մաղոյանի ծանոթ, հուժկու ձայնը,—առա՜ջ, արծիվներ, դեպի Բատայսկ, առա՜ջ դեպի Ռոստով։

7.

Տափաստանում ձյուն էր տեղում։ Քամին պտտեցնում էր ձյան միլիոնավոր փաթիլները։

—Մրրիկ է լինելու,—ասաց Կալինինը։

Ես կարծում եմ՝ այդ մեր օգտին է,—նկատեց գումարտակի հրամանատարը։—Իսկ Օխապկինն ինչ կարծիքի է։

—Գնալը դժվար է, Ղուկաս Կարպովիչ։ Ձյունը չի թողնում բան տեսնել, ճանապարհը կկորցնենք։

—Պետք է ամեն նախազգուշական միջոց ձեռք առնել և գլուխը չկորցնել։ Համաձայնիր ինձ հետ, Անդրեյ, որ մրրիկը մեզ հնարավորություն կտա աննկատելի մոտենալ Բատայսկին։

Ճիշտ է,—ասաց շտաբի պետը,—մենք Բատայսկին կմոտենանք մոտավորապես ժամը քսանչորսին։ Մեզ չսպասելով, գերմանացիներն արդեն քնած կլինեն։ Ես այս պլանն եմ առաջարկում...

Եվ լեյտենանտը քարտեզի վրա մատիտով սկսեց գծել այն ճանապարհը, որն անցնելով Բատայսկի կողքից, մոտենում էր նրան հարավ-արևմտյան կողմից։ Կալինինը լրացրեց գումարտակի շարժման պլանը, համառոտակի բացատրելով, թե ինչպես պիտի գործեն ստորաբաժանումները։

—Լավ, Ալյոշա, շատ լավ,—իր սև, թավ բեղերը ոլորելով, ասաց Մաղայանը։—Գերմանացիները մեզ արևելքից են սպասում, իսկ մենք արևմուտքից կհարձակվենք նրանց վրա։ Դու լակյաց ես, բայց խորամանկ։ Մի պահ լուռ մնալով, նա արդեն ուրիշ ձայնով ասաց. «Հավանություն եմ տալիս քո պլանին, կարող ես գործի անցնել»։

Քամին սաստկանում էր, ոռնալով խփում զինվորների դեմքերին, ձյունով լցնում նրանց աչքերը, լայն բարձրացնում շինելների փեշերը, դժվարացնելով քայլելը։ Կարմիրբանակայինները սառչում էին, ցուրտը թևերի արանքով անցնում էր դեպի մարմինը։ Գիշերային մթության մեջ, չնայած հոգնածությանը և մրրկին, մարտիկներն առաջ էին շարժվում։ Նրանցից ամեն մեկն արդեն շատ ծանր փորձությունների էր դիմացել և գիտեր, որ այդ զրկանքները հատուցվելու են սովետական ևս մի քաղաքի ազատագրմամբ, հազարավոր մարդկանց ուրախությամբ։

Հետախույզները վերադարձան Բատայսկի արվարձաններից։

Նրանք պատմեցին, որ հակառակորդը միանգամայն անտեղյակ է իրենց շարժմանը։ Վստահ լինելով, որ վատ եղանակը հետ կպահի ռուսներին, գերմանացիները անհոգաբար պատսպարվել էին տեղացիների տաք բնակարաններում։

— Մի սրանց տեսեք, կարծում են, թե Բատայսկը հանգստի տուն է,— զայրանում էր Դանիլչենկոն։ Հիմա այնպիսի կուրորտ սարքենք նրանց համար, որ... Եվ նա մի քանի ուկրաինական «համով» արտահայտություններ շպրտեց նրանց հասցեին։

Մաղոյանը գումարտակը բաժանեց մի քանի խմբի և նորից զգուշացրեց հրամանատարներին, որ նրանց բոլոր գործողությունները պետք է ենթարկվեն հարձակման անսպասելիության կանոնին։

Ձյունից սպիտակած մարտիկները, ասես մրրիկի թևերով, ներխուժեցին Բատայսկի փողոցները և միաժամանակ՝ քաղաքի մի քանի ծայրից ավտոմատի կրակ բաց արին գերմանացիների վրա։ Նրանք իրար անցան և խուճապահար սկսեցին դես ու դեն վազել կիսաքուն վեր կենալով տեղներից, նրանք համակվել էին կենդանական երկյուղով, տեսնելով, թե ինչպես դուրսը մոլեգնող մրրիկի միջից ուրվականների նման երևում էին ահեղ ավտոմատավորները։ Կիսամերկ գերմանացիները ծունկի էին իջնում հաղթողների առաջ և իրենց ոսկրոտ, նիհար ձեռքերը վեր կարկառելով, աղերսում խղճալ իրենց։

— Ռուս... ռուս... դողդողալով կրկնում էին նրանց ծամածռվող շրթունքները։

Սակայն մարտիկներն անողոք էին։ Չափազանց շատ վիշտ էին տեսել նրանք. գերմանացիները անհամար չարիքներ էին պատճառել նրանց։ Սովետական զինվորների ազնիվ, սովետական սրտերը համակված էին հիտլերականների տանջահարած միլիոնավոր սովետական մարդկանց անդարմանելի վշտով։ Կարմիրբանակայինների արդարացի զայրույթը, իբրև արդարության սուր, իջնում էր ֆաշիստների գլխին։

Կարճ ժամանակում Բատայսկի 19 թաղերն անցան Մաղոյանի գումարտակի ձեռքը։ Առավոտյան վրա հասած ուրիշ զորամասեր ավարտեցին Բատայսկի լիակատար ազատագրումը։

Ց.

Ուրախալի լուր հասավ Մաղոյանի մարտիկներին։ Պանծալի մարտական գործերի, գերմանական հափշտակիչների դեմ մղված կռվում օրինակելի հաջողություններ ձեռք բերելու համար 28-րդ բանակի հրամանատարությունը գումարտակին է հանձնել բանակի փոխանցիկ մարտական դրոշը։ Բերնեբերան հաղորդում էին մարտիկներն այդ լուրը։

Կարմիրբանակայինների շարքի առաջ գեներալը Մաղոյանին հանձնեց դրոշը։ Նա միջին տարիքի, ներդաշնակ, դուրեկան դիմագծերով մի մարդ էր։ Նրա սեգ հասակը, վրան լավ նստող համազգեստը այն տպավորությունն էին թողնում, որ նա երկար տարիներ է, ինչ զինվորական ծառայության մեջ է։ Գառան մորթե գլխարկի տակից երևում էին նրա արծաթազօծված քունքերը։

—Ընկեր Մաղոյան,—սկսեց գեներալը,—Ձեր գումարտակի մարտիկներին հանձնելով բանակի փոխանցիկ մարտական դրոշը, Ռազմական Խորհուրդը վստահություն է հայտնում, որ դուք բոլորդ սրանից հետո ևս արժանի կլինեք նրան, բարձր պահելով ձեր ձեռք բերած պատվավոր իրավունքը նոր հարձակողական մարտերում։

—Ընկեր կարմիրբանակայիններ և սպաներ,—գեներալն իջեցրեց ձայնը,—դուք տեսնում եք, թե գերմանացիներն ինչպիսի արյունոտ հետք են թողնում իրենց հետևից։ Բատայսկի արվարձանում այսօր ձեզնից շատերը լուռ կանգնած էին ֆաշիստների կոտորած կանանց և երեխաների դիակների առաջ։ Այդպես են վարվում հիտլերականները ամեն մի բնակավայրում, որ նրանք թողնում են Սովետական Բանակի ճնշման տակ։ Ձեր ձեռքին է, ընկեր մարտիկներ և սպաներ, դեռևս գերմանական ստրկության մեջ տառապող միլիոնավոր սովետական մարդկանց բախտը։ Արիաբար առաջ շարժվեցեք, ավելի արագ ընթացեք դեպի արևմուտք, ազատագրեցեք մեր հարազատներին։ Թույլ մի տաք գերմանացիներին ոչնչացնել նրանց։

—Մենք մոտեցել ենք Ռոստովին,—գեներալը ձեռքը մեկնեց Դոնի կողմը։—Առաջիկա մարտերում, որ մղելու ենք հանուն այդ պանծալի քաղաքի ազատագրման, կռվեցեք նույնքան

արիաբար և նույնքան վարպետորեն, ինչպես կռվել եք մինչև հիմա և հաղթանակը կպսակի մեր դրոշները: Հաջողություն ձեզ, ընկեր կարմիրբանակայիններ և սպաներ:

Գեներալը լռեց: Հուզված մարտիկները տեսան, որ իրենց գումարտակի հրամանատարը ծունկի իջավ և ակնածանքով բռնելով դրոշի եզրը, համբուրեց այն:

—Ընկեր գեներալ,—Մաղոյանի ձայնն անսովոր էր,—երդվում ենք հայրենիքին, երդվում ենք Ստալինին, երդվում ենք հարազատ ժողովրդին, որ մինչև վերջը կկատարենք մեր սրբազան պարտքը:

Հուզված այս հասարակ խոսքերից, զինվորները նայում էին իրենց սիրելի հրամանատարին և ամեն մեկն ուզում էր կրկնել նրա ասածը: Մարտիկների պայծառ, ճառագայթափայլ աչքերն արտահայտում էին որդիական նվիրվածություն իրենց հրամանատարին, ամեն վայրկյան նրա համար իրենց կյանքը տալու պատրաստակամություն:

Դրոշակն ստանալու ուրախալի օրը քիչ մնաց մռայլվեր անակնկալ դժբախտությունից: Ճաշից հետո գումարտակի դիրքերի վրա հարձակվեցին գերմանական ինքնաթիռները: Մի մեծ ռումբ պայթեց Մաղոյանից ոչ հեռու: Հողի հետ միասին ռումբի պայթյունն օդի մեջ շպրտեց նաև ավագ լեյտենանտին և մի կողմ նետեց նրան: Մարտիկները քար կտրեցին: Միթե գումարտակի հրամանատարն սպանվեց: Նրանք տագնապահար վազեցին դեպի նա: Որքա՜ն մեծ եղավ նրանց զարմանքը, երբ կենդանի գտան հրամանատարին. նա միայն մի քանի թեթև վերքեր էր ստացել:

—Է՛հ, եղբայրներ, հրաշք տեղի ունեցավ,—ասաց Դանիլչենկոն, և դիմելով Մաղոյանին, հարցրեց. դուք սուրբ չե՞ք, տեսնես:

Գումարտակի հրամանատարը և կարմիրբանակայինները ժպտացին:

—Ի՞նչ անեմ, սիրելիս, սովորություն է,—ասաց նա Օստապին, այսպիսի դեպք ինձ էլի է պատահել շատ տարիներ առաջ:

Եվ նա պատմեց, թե ինչպես Հայաստանում, Զանգեզուրում, երբ նա կռվում էր դաշնակների դեմ, ռումբ էր պայթել իր կողքին ու հողի տակով առել իրեն:

Օխապկինը և Կալինինը գումարտակի հրամանատարին հորդորում էին գնալ հիվանդանոց: Մաղոյանը կտրականապես հրաժարվեց:

Այսպիսի ժամանակ հիվանդանոցում պառկելը հանցագործություն է։

Եվ չգնաց։ Բուժսանիտարական գումարտակից կանչված քույրը կապեց նրա վերքերը և նա մնաց մարտիկների հետ։

Գումարտակը պատրաստ էր երթի։ Հրամանի էին սպասում։ Մարտիկներն ավելի հաճախ էին նայում դեպի Դոնի մառախուղով ծածկված բարձրադիր ափը, որտեղ այդքան մոտիկ գտնվում էր գերմանական ստրկության մեջ տոչորվող ռուսական մեծ քաղաքը։

Զինվորները գիտեին — Ռոստովը կանչում է իրենց։

ԱՌԱՋԻՆ ՕՐԸ

1.

Ստալինգրադի մոտ գերմանացիների կրած ռազմական ծանր պարտությունը սգով էր պատել Գերմանիան։ Յոթ օր շարունակ հիտլերականները ժամ էին գալիս թևերին սև կապեր կապած։ Ֆաշիստները սգում էին ֆելդմարշալ Պաուլյուսի առաջնակարգ բանակի կորուստը։ Գերմանացիները համեստ էին ձևանում։ Սգո կապերով նրանք փակում էին իրենց ագահ աչքերը՝ իրականությունը չտեսնելու համար։ Իսկ այդ իրականությունն ավելի սարսափելի էր, քան Ստալինգրադը, այն ավելի աղետալի էր նրանց համար։ Իրականությունն ասում էր, որ Վոլգայի ամրոցի մոտ, ռուսական տափաստանում ջարդուփշուր է արված ոչ միայն գերմանական զորքերի մի խմբավորում. այնտեղ վճռական պարտություն է կրել Հիտլերի ամբողջ բազմամիլիոն ավազակային բանակը։

Ստալինգրադը ջարդեց ու հետ շուռ տվեց հիտլերական հորդաներին։ Ռուսական անմահ փառքի քաղաքը անդառնալիորեն փոխեց մեծ պատերազմի ընթացքը։ Ստալինգրադը դարձավ հիտլերյան Գերմանիայի վախճանի սկիզբը։ Դրա համար էլ երրորդ կայսրության քաղաքացիները կարող էին հանգիստ կերպով կրել իրենց սև կապերը ոչ թե յոթ օր, այլ շատ ավելի երկար ժամանակ, մինչև մայիսի 9-ը, երբ գերմանացիների վերջ-

նականապես պարտված երկիրը ծածկվեց անվերապահ կապիտուլացիայի վիթխարի սպիտակ սավանով։

Սակայն գերմանացիները համառորեն դիմադրում էին, և մեր ճանապարհը Վոլգայից մինչև ռայխստագ լուսավորվեց կատաղի ճակատամարտերի կրակներով։ Հակառակորդը համառորեն կառչում էր ամեն մի բնակավայրի և մնում էր այնտեղ այնքան, մինչև որ Սովետական Բանակը դուրս էր շպրտում նրան այնտեղից։ Ստալինգրադից հետո Ռոստովը ամենակարևոր ռազմագիտական կենտրոններից մեկն էր գերմանացիների դեպի արևմուտք տանող ճանապարհին։ Ում ձեռքին որ գտնվում է Ռոստովը, նրա ձեռքին է Կովկասի բանալին։

Գերմանական հրամանատարությունը հրամայեց իր զորքերին պահել Ռոստովը ինչ գնով էլ լինի։ Նպաստավոր դիրքը, զորավոր ամրությունները և Դոնի բարձրադիր ափը օժանդակում էին գերմանացիներին։ Հրետանային կրակը փակում էր քաղաքին մերձենալու ճանապարհները։ Երկաթուղային հանգույցը պատած էր պաշտպանողական հրակետերի խիտ ցանցով։ Զանազան առափնյա ամրությունները, քարե շենքերը և բնակարանները հագեցված էին ականանետներով, գնդացիրներով ու ավտոմատներով։ Ամրացված տեղանքը շրջապատված էր փշալարերի մի քանի գոտիով։

Գերմանացիները Ռոստովի իրենց պաշտպանությունը անմատչելի էին համարում։ Իսկ քաղաքն արդեն պաշարված էր Սովետական Բանակի զորքերի կողմից։ Ի՞նչը կարող էր կանգնեցնել Ստալինգրադի բոցերի մեջ կոփված մարտիկներին։ Նրանք ավելի ու ավելի մոտենում էին Դոնի մայրաքաղաքի փողոցներին։ Ապարդյուն էին հիտլերականների ջանքերը, նրանց հուսահատական հակահարձակումները։ Նրանք մարտի էին նետում տանկեր ու ինքնաթիռներ, հրետանին և ավտոմատավորներին, վեցփողանի ականանետներ։ Ռազմաբեմը ծածկված էր էսէսականների դիակներով։

... Թող հավիտյանս հավիտենից Ռոստովի պատմության էջերում անմահ մնան այն մարդկանց անունները, որ իրենց ռազմական սխրագործություններով, իրենց արյունով 1943 թվի փետրվարյան օրերին քաղաքի վրա վառեցին ազատության արշալույսը։

— Հանուն Ռոստովի ազատագրման, հանուն հայրենիքի,

հանուն Ստալինի,— այս խոսքերով էր ճանապարհ գցում էր ամեն մի արկը կարմիրբանակային հրետանավոր Սեմյոն Խրոմովը, որ ջարդում էր գերմանացիներին Ռոստովի մատույցներում։

Այդ օրերից մեկի ընթացքում միայն ավագ լեյտենանտ Միրոշնիչենկոյի գվարդիական զենիթայինները ցած գցեցին ֆաշիստական 5 ռմբակոծիչ։ Ավագ լեյտենանտ Ստեպանյուկի ականանետները դիպուկ հարվածներով հետ մղեցին հակառակորդի գերազանց ուժերը, ոչնչացնելով հիտլերականների մի վաշտ և այրեցին երկու տանկ։ Լեյտենանտ Մուսատովը, գլխավորելով գրոհային խումբը, ներխուժեց Ռոստովի հեռավոր արվարձաններից մեկը և մի ժամվա կատաղի մարտից հետո լրիվին ազատագրեց այն գերմանացիներից։ Կարմիրբանակային Աթանասևը Ռոստովի մոտ էր կրծքով ծածկեց թշնամու դնդացրի ամբրազուրը, և մեր ռազմիկները շարժվեցին առաջ։ Հիտլերականները շպրտվելով քաղաքի ներսը, հույս ունեին քարե շենքերում պատսպարվելով, քաղաքը պահել մինչև գարուն, երբ ֆյուրերը խոստացել էր նոր հարձակում սկսել Կովկասի վրա։ Բաքվի նավթի հոտը դեռ հարբեցնում էր գերմանացիներին, նրանք երազում դեռ Կուբանի ու Դոնի ցորենն էին ուտում։

Արյուն էր հոսում Ռոստովում։ Ֆաշիստներն ամեն օր գընդակահարում էին իրենց դիմադրող հայրենասերներին։ Քաղաքային բանտի կամերաները լիքն էին բանտարկյալներով։ Ծանր տառապանքների ենթարկված քաղաքացիներն արդեն լսում էին սովետական թնդանոթների որոտը։ Հարձակվողների կրակը ջարդուփշուր էր անում գերմանացիների ամրությունները։

2.

Մաղոյանին կանչեցին բրիգադի շտաբը։ Գումարտակի հրամանատարը անմիջապես եկավ և, ականջավոր գլխարկը ավելի խորը գլուխը քաշելով, որպեսզի քողարկի վիրակապը, ներս մըտավ գնդապետի մոտ։

— Եկել եմ Ձեր հրամանով,— զեկուցեց նա։

— Բարև, Մաղոյան,—սիրալիր դիմավորեց նրան բրիգադի հրամանատարը,—նստիր խնդրեմ։

Գնդապետը անքնությունից կարմրած, հոգնած աչքերով նայում էր ավագ լեյտենանտին։ Նա առաջին անգամը չէր տեսնում

գրավել կայարանի մերձակա ռայոնը և սպասել իմ նոր հրամանին։ Հասկանալի՞ է։

— Հասկանալի է, ընկեր գնդապետ։ Թույլ տվեք մի դիտողություն։

— Ասա։

— Մենք մեր գումարտակում մտածել ենք մեր հետախուզության տվյալների մասին և, համենայն դեպս, այսպիսի որոշում ենք կայացրել։ Քանի որ թշնամին սաստիկ ամրացրել է երկաթուղագիծը, լավ է առաջ շարժվել 500 մետր ձախից, Դոնն անցնել այ—աստեղ՝ Վերխնե-Գնիլովսկայա ստանիցայի մոտ, ձախից թևանցել հակառակորդին և թիկունքից հարվածել նրան։
Գնդապետը ուշադրությամբ լսեց գումարտակի հրամանատարին։

— Ամեն ինչ հաշվի առնված է այդ ճանապարհին։

— Այո, ճանապարհը մեզ լավ ծանոթ է։ Չէ՞ որ մեր Օխապկինը ռոստովցի է։

— Լավ,—գնդապետը վեր կացավ։ Թույլատրում եմ կատարել խնդիրը, փոխելով հարվածի ուղղությունն այնպես, ինչպես Դուք առաջարկում եք։

Նա ավելի մոտեցավ Մաղոյանին։

— Մեծ գործի եք գնում, ընկեր ավագ լեյտենանտ. համոզված եմ, որ խնդիրը կկատարեք։ Հաջողություն եմ ցանկանում։

Գնդապետը ամուր սեղմեց գումարտակի հրամանատարի ձեռքը։

3.

Փետրվարի 8-ի գիշերը, մթությամբ քողարկված, անձայն, Բատայսկից դեպի Դոն էին շարժվում Մաղոյանի գումարտակի մարտիկները։ Ավագ լեյտենանտ Օխապկինի կողքից գնում էր բրիգադի քաղբաժնի պետ կապիտան Շունգինկոն։ Գումարտակը երթի ելնելուց անմիջապես առաջ, հատուկ մարտական թերթիկ լույս ընծայվեց՝ նվիրված առաջիկա ճակատամարտին։ Թղթակցությունների մեջ համառոտակի խոսվում էր Ռոստովի ստրատեգիական կարևորության և հրամանատարության կողմից կարմրադրոշ գումարտակին վստահված պատասխանատու

և պատվավոր առաջադրանքի մասին։ Այնտեղ տեղավորված էին նաև կարմիրբանակայինների կարճառոտ թղթակցությունները։ Ռոստովցի շարքային Կովալչուկը գրում էր, որ ահա իրագործվում է իր իղձը, ինքը մուտք է գործում իր հարազատ քաղաքը, որի ազատագրման համար չի խնայի ոչ իր ուժերը, ոչ կյանքը։ Դանիլչենկոն կոչ էր անում իր մարտական ընկերներին «գրավել Ռոստովը, որը Կովկասի դարպասն է, և այդ դարպասով գնալ դեպի Ուկրաինա»։

Կապիտան Շունդենկոն եռանդուն մարդ էր։ Նա կարողացավ ոչ միայն մարտական թերթիկ հրատարակել, այլև գործնական խորհուրդներ տալ կոմունիստներին, սրտաբաց զրույցներ ունենալ զինվորների հետ։ Իսկ մարտում նա երևում էր այնտեղ, որտեղ ամենից ծանր էր դրությունը մարտիկների համար, ոգեշնչում էր նրանց իր անձնական օրինակով, տանում իր հետևից։ Այս բոլորի համար զինվորները գնահատում էին Շունդենկոյին, այդ միջահասակ, արդեն տարիքն առած սպային, որ պատերազմից առաջ աշխատում էր որպես Լենինգրադի թանգարաններից մեկի դիրեկտոր։

Ավտոմատի կրակոցը խզեց գիշերային լռությունը։ Գնդացիրները կրակել սկսեցին։ Հետ շպրտելով գերմանական զինվորների առանձին խմբերին, Մադոյանի մարտիկները դուրս եկան Դոնի ափը։ Լուսանալ էր սկսում։ Աջ ափին երևում էին Վերխնե-Գնիլովսկայա ստանիցայի տնակները։ Գերմանացիները հրետանային կրակ բաց արին։ Գետի ավազոտ ափին կամ նրա սառցակալած մակերևույթի վրա որոտալով պայթում էին արկերը։ Գետինը դղրդում էր թնդանոթաձգությունից։

Սառցի վրայով գնալը վտանգավոր էր։ Այն չէր դիմանում և ճեղքվում էր մերթ այստեղ, մերթ այնտեղ։ Գործել սկսեցին նաև թշնամու՝ մյուս ափին քողարկված հրակետերը։

Մարտիկների հետ միասին, ատրճանակը ձեռքին, առաջ էր վազում բարձրահասակ, շինելը հագին, զինվորի գլխարկ ծածկած Մադոյանը։ Կարմիրբանակայինները ճանաչեցին նրան և այդ սիրտ տվեց, թափով առաջ մղեց նրանց։

Թշնամու կրակն ուժեղանում էր։ Սառցի վրա ոմանք լռելյայն, ոմանք ճիչ արձակելով ընկնում էին շանթահարված մար-

տիկները։ Ուրիշները շարունակում էին առաջ վազել։ Գնալով կրճատվում էր տարածությունը մինչև աջ ափը։

— Առա՜ջ, ընկերներ,—կանչում էր կապիտան Շունդենկոն։

— Ուռա՜. հանուն մեր հարազատ Ռոստովի, մյուս կողմից արձագանքում էր նրան ավագ լեյտենանտ Օխապկինը։

Այդ կոչերին արձագանքում էին կոմունիստ մարտիկները և ընդգրկում ամբողջ գումարտակը։ Ռուսական ուժգին ուռան ալիք առ ալիք ծավալվում էր Դոնի վրա, մահացու սարսափ ներշնչելով գերմանացիներին։

Առաջիններից մեկը Ռոստով ոտք դրեց Օստապ Դանիլչենկոն։ Նրա ձախ ուսը արյունոտված էր։ Մոտիկ տարածությունից Օստապը նռնակ շպրտեց գերմանացի երկու գընդացրորդների վրա և տեսավ, թե ինչպես նրանց գորշ-կանաչավուն մարմինները մի կողմ շպրտվեցին։

Նաջաֆովը և Մակրուշենկոն կրակ բաց արին հրակետի վրա։ Լեյտենանտ Շիլովի գնդացրորդները հարկադրեցին լռել մի կիսավեր քարե տան ձեղնահարկում տեղավորված հրակետի ևս։ Համարյա ամբողջ գումարտակն արդեն աջ ափին էր։ Մեկը մյուսի հետևից լռում էին թշնամու հրակետերը։ Հարձակվողների ոտքերի տակ թափված էին սպանված գերմանացիները։

Հանկարծ մարտիկների շարքերում տագնապալի լուր տարածվեց։ Հարևան ստորաբաժանումները, որ ամբողջ ժամանակ համագործակցում էին գումարտակի հետ աջից և ձախից, թշնամու գերազանց ուժերի դիմադրությանը հանդիպելով, ետ են մնացել։ Նրանցից կարողացել է գետն անցնել և գումարտակին միանալ միայն լեյտենանտ Սավելևի վաշտը։ Այժմ գերմանացիները երեք կողմից շրջապատում են Մաղոյանի մարտիկներին։ Առաջխաղացումը դանդաղեց։

—Կանգ չառնել, առա՜ջ,—ահեղ հնչեց Մաղոյանի տիրական ձայնը,—մարտական հրամանը պիտի կատարվի։

Գումարտակի հրամանատարը առաջ ուղարկեց լեյտենանտ Լուպանդինի հետախույզներին և նրանց հետ միասին՝ ավտոմատավորների և նռնականետների մի խումբ։ Հետ շպրտելով իրենց դեմ ելած ֆաշիստներին, նրանք թափանցեցին թշնամու պաշտպանության թիկունքը։ Գերմանացիների մեջ տատանում առաջ եկավ։

Նրանց հետապնդելով, մարտիկները երկաթուղագծերով

մտան Ռոստովի կայարանը։ Հեռվում երևացին կայարանի այրված շենքի կիսավեր պատերը։ Օխապկինն անմիջապես ճանաչեց շենքը։ Երբ երևացին ժանգոտված երկաթե սյուները—այն ամենը, ինչ որ մնացել էր կառամատույցի ծածկից—մի սուր ցավ ծակեց Անդրեյի սիրտը։ Կարծես թե կայարանի պատերը գանգատվում էին նրան իրենց կրած տառապանքների համար, և Օխապկինը հիշեց, թե ինչ տեսք ուներ կայարանը մինչև պատերազմը, հիշեց նրա գեղեցիկ, աղմկոտ, բազմաթիվ ուղևորներով լի ընդարձակ դահլիճները։

Պատսպարվելով ավերակների մեջ, գերմանացիները կրակում էին։ Մարտիկները նռնակներով ոչնչացնում էին նրանց։ Կարմիրբանակայինների մի խումբ ճանապարհ էր բաց անում դեպի կայարանի հրապարակը։ Վախենալով շրջապատվելուց, գերմանացիները սկսեցին թողնել կայարանը, փախչելով դեպի Ֆրիդրիխ Էնգելսի փողոցը։ Նրանցից քչերին հաջողվեց ազատվել։ Մեր ավտոմատավորների գնդակները ամենուրեք հասնում էին նրանց հետևից հրապարակում, երկաթուղագծի մոտ, Տեմերնիչկայի կամուրջի վրա։

Մազոյանը կայարանումն է, նախկին դիսպետչերական շենքի կիսավեր նկուղում։ Նա որոշեց այնտեղ տեղավորել իր շտաբը։ Այդ ժամանակ այն մարտիկները, որոնց հետ գնում էին Շունգենկոն և Օխապկինը, գրավեցին Տեմերնիչկայի կամուրջը, դուրս եկան Ֆրիդրիխ Էնգելսի փողոցը և, հետապնդելով փախչող հիտլերականներին, հասան Բուդյոննու պողոտան։

Մարտերը մղվում էին Ռոստովի փողոցներում։

4.

—Գերմանացիները մեզ կտրել են բրիգադից,—զեկուցեց Կալինինը գումարտակի հրամանատարին։

—Գիտեմ,—պատասխանեց հրամանատարը։ Կդիմադրենք, կայարանից չենք հեռանա։

Հետ մղելով Մազոյանին ուղեկցող ստորաբաժանումներին, հիտլերականները, օգտվելով նրանից, որ հարձակվողների թևերը պաշտպանված չէին, օղակեցին նրանց։ Գումարտակը շրջապատվեց։ Գերմանացիներն սկսեցին լկտիանալ։ Նրանք Մազոյա-

նի դեմ ուղարկեցին տանկեր և ավելի քան 200 ավտոմատավոր։

—Հաղորդեցեք ամենքին տեղից չշարժվել թեկուզ մահվան գնով, ոչ մի քայլ ետ,—հրամայեց Մաղոյանը։

Մարտիկները տեսնում էին նրան ամեն տեղ։ Այն տեղամասերում, որտեղ դրությունը առանձնապես ճգնաժամային էր դառնում, նա կռվում էր կարմիրբանակայինների հետ միասին մինչև վտանգը վերացվեր։

Կրտսեր սերժանտ Կուդրիան ավտոմատի կրակով խփեց մի ավտոմեքենա։ Մեքենան մնաց տեղում։ Զինվորներն սկսեցին ամեն կողմից ցած ցատկել։

—Ձեզ փախչել,—ասաց Կուդրիան,—և ավտոմատի դիպուկ կրակով սկսեց գնդակահարել գերմանացիներին։

Թշնամու գնդակը վիրավորեց կրտսեր սերժանտի ոտքը։

—Ձեզ փախչել, խժռ ծնունդներ,—նորից բացականչեց Կուդրիան, շարունակելով կրակել հիտլերականների վրա։

—Դու վիրավորված ես,—հանկարծ լսեց ռազմիկը։ Նա գլուխը բարձրացրեց, կողքին կանգնած էր գումարտակի հրամանատարը։

—Դատարկ բան է, ընկեր ավագ լեյտենանտ։

—Անմիջապես գնա վերքդ կապելու։

—Չեմ կարող, ընկեր գումարտակի հրամանատար, գերմանացիներն մոտ, այստեղ են։

—Ավտոմատը տուր ինձ և հեռացիր։ Վերքդ կկապեն, կվերադառնաս,—նորից հրամայեց Մաղոյանը։

—Ընկեր ավագ լեյտենանտ, քանի կենդանի եմ, ավտոմատս ոչ ոքի չեմ տա։ Թույլ տվեք չգնալ։

Կրտսեր սերժանտի հայացքը, խոսքերը, շարժումները միևնույն բանն էին ասում, նա չէր ուզում գնալ։ Այդ հուզեց հրամանատարին։

—Զգույշ եղիր, Կուդրիա, պահպանիր քեզ, գերմանացիները շատ են, իսկ մենք՝ քիչ։

Գումարտակի հրամանատարը գնաց։ Մի քանի րոպեից կրտսեր սերժանտին մոտեցավ սանիտարուհի Զինան։ Նա տեղնուտեղը կապեց ավտոմատավորի ոտքը։

Թշնամու գրոհը կասեցվեց։ Էնգելսի փողոցի վրա վառվում էին գերմանական մի քանի տանկեր, իսկ նրանց մոտ ընկած էին սպանված գերմանացիների դիակները։ Սակայն թշնամին

շարունակում էր մոլեգնել։ Առաջին գրոհին հաջորդեց երկրորդը, երբ այն հետ մղեցին, երրորդը։

— Գերմանացիները կատաղում են, որ չեն կարողանում հետ շպրտել մեզ,— ասում էր Օխոտկինը մարտիկներին,— ուզում են շրջապատումով վախեցնել, բայց մենք չենք նահանջի։ Այսօր կրտսեր սերժանտ Կուզրինն սպանել է 12 ֆրից, Մակրուշենկոն և Նաջաֆովը խփել են մի տանկ, կարմիրբանակայիններ Միրոնովը և Շալդան ոչնչացրել են երկու գերմանական գնդացիր։ Ամենքը հերոսի պես են կռվել։ Գերմանացիները չեն անցնի։

Կապիտան Շունդենկոն թշնամու կրակի տակ գրեց մարտական թերթիկի նոր համարը։ Այնտեղ համառոտ կերպով հայտնվում էր թշնամու տանկերը ջարդուփշուր արած և տասնյակ էսէսականներ ոչնչացրած կարմիրբանակայինների սխրագործությունների մասին։ «Ճիշտ է, որ մենք շրջապատված ենք,— գրել էր Շունդենկոն,— բայց մեզնից ամեն մեկը այնպես է սիրում հայրենիքը, ինչպես սիրում էին անմահ պանֆիլովականները, որոնք գերմանացիների առաջ փակեցին Մոսկվայի ճանապարհը։ Կրկնենք նրանց պանծալի սխրագործությունը, պահպանենք գրաված գիծը մինչև մեր գլխավոր ուժերի գալը։ Վաղը կամ մյուս օրը նրանք կմիանան մեզ։ Մարտիկները կարդում էին Շունդենկոյի կոչը, զենքը ձեռքից բաց չթողնելով։

Հրաձգությունը կայարանամերձ այգում ժամ առ ժամ ուժեղանում էր։ Մաղոյանի գումարտակն ուներ ավտոմատներ, հրացաններ, նռնակներ, իսկ գերմանացիները՝ թնդանոթներ, ականանետներ, տանկեր։ Պատսպարվելով մեքենաների զրահով, թշնամու ավտոմատավորները նորանոր գրոհներ էին ձեռնարկում։ Մարտիկները նրանց թույլ էին տալիս մոտենալ և ապա հակատանկային հրացաններով հրկիզում էին տանկերը, կոտորում էին նրանց հետևից գնացող զինվորներին։

Մաղոյանի մարտիկները ոչ մի քայլ չէին նահանջում։ Ամեն մեկի կրծքում վառվում էր քաղաքը շուտով թշնամուց ազատագրելու, գերմանացիներին հեռու քշելու, ուկրաինական հողին ազատություն բերելու իղձը։

Ռոստովցի Կովալչուկը երբեմն անհամբերություն էր հանդես բերում։

—Իմ տունը, տղաներ, շատ մոտ է այստեղից, քաղաքի կենտրոնում,—ասում էր նա,—Վորոշիլովի պողոտայի վրա։ Գորկու փողոցով կարելի է գնալ այնտեղ։ Մայրս, եղբայրս այնտեղ են։ Եթե ինձ հետ մի բան պատահի, գնացեք ասեք մորս, որ իր տղան ողջ-առողջ հասել էր մինչև իր քաղաքը...

Ոռնալով սլանում էին ականները, դղրդոցով պայթում էին արկերը, սուլում էին գնդակները։

—Թող, եղբայր, այդ խոսքերդ,—ասում էր Կովալչուկին նավաստի Պավլովը,—ինքդ կհասնես մինչև ձեր փողոցը, և մենք դեռ թեյ կխմենք քո մայրիկի մոտ։

Քաջ մարտիկ էր այդ Պավլովը։ Մի ավերված տան մեջ նա հանդիպեց գերմանացի երեք զինվորների։ Առաջինին նա սվինով գամեց պատին, երկրորդի գանգը ջարդեց հրացանի կոթով, իսկ երրորդի անդրավարտիկի բոլոր կոճակները կտրելով՝ այդպես բերեց նրան Մաղոյանի մոտ։ Գերին, որ ձեռքերով պահում էր անդրավարտիկը, տեղեկացրեց, որ իրենց գնդին հրամայված է այդ օրը ոչնչացնել քաղաք մտած կարմիրներին։ Նա քարտեզի վրա ցույց տվեց այն տեղերը, որտեղ կենտրոնանում էին գերմանական ստորաբաժանումները։

Կես գիշերին մոտ Մաղոյանի մարտիկները ետ մղեցին գերմանացիների ութերորդ գրոհը։ Գերմանացիները, որ սովորաբար գիշերը չէին կռվում, այս անգամ չէին դադարեցնում գումարտակը ոչնչացնելու իրենց կատաղի փորձերը։

Մաղոյանի մարտիկները կռվում էին առանց քնելու և հանգստի։

Թանձր ծուխը բռնել էր Ռոստովի փողոցները։ Իսկ այն թաղամասերում, որտեղ արդեն գտնվում էին ազատարար մարտիկները, ռոստովցիների վաղուց սպասած ճակատամարտի պայծառ լույսն ավելի ու ավելի հաճախ պատռում էր այդ թանձր ծխի քողը։

ԵՐԿՐՈՐԴ ՕՐԸ

1.

Լուսաբացի աղջամուղջից շաղվում են մարդու աչքերը։ Թվում է, թե օդը լցված է արճճի զանգվածով։ Ջյան խոշոր փաթիլներն ընկնում են ասֆալտի վրա ու դանդաղ հալչում։

Մակրուշենկոն և Նաջաֆովը երկրորդ օրն է արդեն, որ պառկած են ավերված քարաշեն տան լուսամուտի գոգում։ Նրանց երեք կողմից շուրջկալում են հին տների քամահար, անձրևից թրջված թեք պատերը։ Ուղիղ նրանց առաջ, լայն հարթ փողոց է բացվում, որի խորքում գերմանացիներն են գտնվում։ Նրանք ամբողջ գիշերը դնդակոծել են գումարտակի դիրքերը և կրակը դադարեցրել միայն լուսաբացին։

Փողոցը խաղաղվեց, սակայն զրահահարները գիտեն, որ պատերազմում խաղաղ րոպեներ չեն լինում և ով որ հավատա անդորրությանը մարտի մեջ, նա կխաբվի թշնամուց։ Ռազմաճակատում արյամբ է հատուցվում այդպիսի դյուրահավատությունը։ Մարտիկները աչալուրջ ունկնդրում են ամեն մի աննշան շշուկի։

Հայացքը չհեռացնելով թանձր մառախուղից, որ բռնել է ամբողջ փողոցը, Մամեդը շարունակում է.

—Երբ ես փոքր տղա էի, Պետյա, մեր կիշլակում մի ծեր մարդ էր ապրում, անունը Ջանալ։ Նա շատ բան էր տեսել իր երկար կյանքում։ Բոլորը հարգում էին ծերունուն։ Եթե գյուղացիների մեջ վեճ էր լինում, նրա մոտ էին գնում արդարություն հայցելու։ «Իմաստուն գլուխ ունի Ջանալը», ասում էին մարդիկ։ Միշտ հետաքրքիր էր լսել ծերունու խոսքերը։ Ես հիշում եմ նրա պատմածն այն մասին, թե ինչպես թունավոր օձը մտածում է խաբել արծվին և ինչ է դուրս գալիս դրանից։

Մամեդը կուչ եկավ, խորը ներս քաշեց ծխախոտի ծուխը և ատամներով կտրելով գլանակի այն մասը, որ իր բերանումն էր, մնացածը տվեց Մակրուշենկոյին։

— Մի անգամ,—պատմում էր մեզ Ջանալը,—օձը լսում է, թե արծիվը միշտ թարմ արյունով է կերակրվում և ուզում է ուտել հպարտ թռչունին։ Սակայն իմանալով, որ բաց կռվի մեջ չի կարող հաղթել արծվին, օձը որոշում է խաբել նրան, որպեսզի նրա վստահությունը ձեռք բերելով, հետո թունավորի նրան իր թույնով։ Օձը դուրս է գալիս, պառկում տաք քարաժայռի վրա։ Տեսնելով արծվին, նա բարեգութ ձայնով կանչում է. «Լսի՛ր, բարեկամ, ես խղճում եմ քեզ, շարունակ թռչում ես երկնքում, երևի հոգնել ես. իջի՛ր այստեղ ժայռի վրա, պառկի՛ր, հանգստացի՛ր, իսկ ես, իբրև քո բարեկամ, կհսկեմ, որ քունդ

խանգարող չլինի»։ Արծիվը վերևից նայում է խղճուկ սողունին, գուշակում է նրա չար մտքերը, բայց միամիտ է ձևանում և պատասխանում. «Շնորհակալ եմ քեզանից, օձ, քո լավ խորհրդի համար։ Որ դու ասում ես, ես կընդունեմ քո խորհուրդը»։ Եվ իջնում է ահագին թռչունը, նստում քարին, ծալում է իր թևերը ու այնպես ցույց տալիս, թե քնել է արդեն։ Բայց ինքը կամացուկ հետևում է օձին։ Սողունն ուրախանում է, ֆշշացնում, սողում դեպի արծիվը։ Եվ մոտենում է նրան թե չէ, անվախ և ուժեղ թռչունը մի ակնթարթում կտրում է նրա գլուխը և իր սուր ճիրաններով պատառոտում նրա մարմինը։

— Լավ պատմություն է,— ասաց Մակրուշենկոն,— և շատ տեղին։ Օձի խորամանկություն ունեն գերմանացիները։

Նա ձեռքը տարավ իր տոպրակի մեջ, երկու կտոր պաքսիմատ հանեց և մեկը մեկնեց Նաջաֆովին։

— Նախաճաշելու ժամանակ է, պարգևատրում եմ քեզ Ջանալի իմաստության համար։

Եղանակը պարզվում էր։ Ցածր ամպերի արանքից դուրս նայեց արևը։ Մառախուղն սկսեց ցրվել։ Մակրուշենկոն հանկարծակի լսեց շարժվող տանկի աղմուկը։ Նա նայեց Մամեդին, և ընկերը հասկացավ նրան։ Երկուսն էլ սկսեցին ականջ դնել։ Այո, ինչ-որ մոտիկ տեղ տանկ էր շարժվում։

— Երևի նրբանցքումն է՝ վճռեց Մակրուշենկոն ու հրաման արձակեց՝ պատրաստվել։

2.

Ձյան թաց շեղջերը դեսուդեն շպրտելով, անկյունից երևաց մի տանկ։ Նրա ետևից, աշխատելով թաքնված մնալ, վազում էին ավտոմատավորները։ Նրա հետքերով առաջ էր սողում երկրորդ մեքենան։

Խուլ հնչեց թնդանոթների որոտը։ Ավտոմատներն սկսեցին կրակել։ Գորշ ծուխը վայրկենապես բռնեց փողոցը։ Արկի հարվածից տատանվեց ու աղմուկով փլվեց այրված տան բարձր պատը։ Թանձր գոլորշին խառնվեց ծխի հետ։

Ավտոմատների ու գնդացիրների կրակոցները խլանում էին արկերի պայթյուններից։

Լեյտենանտ Շիլովի գնդացրորդները ավտոմատավորներին կտրեցին տանկից։ Գերմանացիները կանգ առան։ Մի քանիսը կարողացան թաքնվել մոտակա տներում, իսկ ոմանք պառկեցին հենց այդտեղ, սալահատակի վրա։ Ավերակների մեջ փախստականները դեմ առան մարտիկների սվիններին, իսկ նրանց, որ մնացին փողոցում, գնդակոծում էին մեր ավտոմատավորները։

Մի քանի կողմից կրակում էին տանկերի վրա։ Գերմանացիներն ապարդյուն կերպով այս ու այն կողմն էին շուռ տալիս թնդանոթների փողերը։ Մեքենաներից մեկն արդեն խփված էր և դժվար է ասել, թե ով էր խփել այն։ Նաջաֆովը և Մակրուշենկո՞ն, թե՞ նրանց հարևանները։

Փողոցի անկյունից դուրս էին գալիս նոր տանկեր։ Մամեդը նկատեց, թե ինչպես նրանց ծանր և լայն թրթուրները տրորում էին գերմանացի զինվորների դիակները։ Նա նորից մտածեց, որ հիտլերականները շնագայլերի են նման։ Գիշերը լեռնային կիրճերում ոռնացող քաղցած շնագայլերը հաճախ ուտում, ոչնչացնում են իրար։ Նաջաֆովն ուզում էր այդ մասին ասել Մակրուշենկոյին, բայց շատ մոտիկ խլացուցիչ շառաչյունով պայթեց մի արկ, կարծես, մի ինչ-որ գերմարդկային ուժ վիթխարի երկաթե մուրճով հարվածեց բարակ տախտակին։

Մակրուշենկոն ցնցվեց և անզոր իջեցրեց աջ ձեռքը։ Շինելի ծակված ուսից դուրս ժայթքեց արյունը։

— Սատում ես, սրիկա, միևնույն է, չես անցնի,— ատամների արանքից գայրագին ասաց Պյոտրը։

Զայրույթով լի, բորբոքված աչքերով նա առողջ ձախ ձեռքը չհեռացնելով հրազենից, ջանք էր գործ դնում նորից կրակել։ Բայց երևում էր, որ անտանելի ցավը հաղթում է զինվորին։ Նրա գլուխը վար հակվեց և նա քիչ ետ սողալով՝ հրամայեց Մամեդին։

— Գրավիր իմ տեղը։

Տանկի թնդանոթի փողը ուղիղ նրանց վրա էր ուղղված։ Նաջաֆովը շտապեց կանխել թշնամու կրակոցը։ Զրահահարի գնդակը չվրիպեց տանկին։ Ժայթքեց գերմանացու պատասխան կրակոցի բոցը։ Մի ինչ-որ սարսափելի ուժ մի կող շպրտեց Մամեդին, և նրա գլուխը ամուր զարկվեց պատի քարին։

— Պետյա,— կանչեց Մամեդը։

Մակրուշենկոն չէր պատասխանում։ Նաջաֆովը ավելի մոտեցավ նրան։ Երեսն ի վար գետնին պառկած՝ Պյոտրը չէր շարժվում։

— Մակրուշենկո՛, Պետյա՛,—նորից կանչեց Մամեդը։

Ընկերը լուռ էր։ Երկրորդ արկի բեկորը դիպել էր նրա գլխին։

Տանկը մոտենում էր։ Վայրկյան առ վայրկյան Նաջաֆովը ավելի որոշակի էր լսում նրա թրթուրների սառը, զզվելի շառաչը։ Մամեդը վերցրեց նռնակների մի կապ և սողաց դեպի պատը, աշխատելով մտնել պատուհանի գոգում առաջացած ճեղքի մեջ։ Եվ այդ ժամանակ միայն նա զգաց, որ աջ ոտքը դըժվարությամբ է ենթարկվում իր կամքին։ Ազդրը արյունաշաղախ էր։

Վերջին ուժերը լարելով, նա համառորեն ձգտում էր առաջ, դեպի թշնամին։ Նաջաֆովը բարձրացնում էր ոտքը, որ քարի չդիպչի, ամբողջ ծանրությամբ հենվելով իր ձեռքերի վրա։ Սուր, կտրող ցավը բռնել էր նրա ամբողջ մարմինը։ Վերջապես նա հասավ պատի մոտ և, քողարկվելով նրանով, բարձրացավ պատուհանի ջարդված շրջանակի եզրին։

Նրա աչքի առաջով սլանում էին գույնզգույն պայծառ շրջանակներ։ Գլուխը պտտվում էր։ Նա շնչահեղձ էր լինում՝ ասես թե ամառային տապ օր լիներ։ Այն ժամանակ նա ուժգին շարժումով պատռեց գիմնաստյորկայի օձիքը։ Սառը օդը հովացրեց նրա կուրծքը։

Դանդաղ անցնում էին վայրկյանները։ Պատուհանի բացվածքին մոտեցող տանկը սպառնագին աղմկում էր։ Մամեդը ավելի ուժեղ սեղմեց իր ձեռքում նռնակները։ Թվում էր, թե բոլոր ձայները ձուլվում էին նրա թրթուրների միապաղաղ աղմուկի մեջ։ Երիտասարդ զինվորը, ասես թե, զգում էր արյան շարժումը իր քունքերին։

. . . Հանկարծ նրա աչքերի առաջ բացվեց տաջիկական շոգ տափաստանը։ Բամբակի սպիտակ քուլաները բռնել էին դաշտը։

Տխուր, մելամաղձոտ մի երգ երգելով, դաշտում աշխատում էր Մամեդի մայրը։ Հետո նա տեսավ իր սիրած Խալիդեի սև հյուսերը։ Մամեդը կանչեց նրան. Նա դեմքը շուռ տվեց ու սիրալիր ժպտաց Մամեդին։ Մարգարիտների նման փայլեցին նրա

սպիտակ ատամները: Նա ընդառաջ եկավ և Մամեդին մեկնեց իր գեղեցիկ, նուրբ ձեռքերը…

Տանկն արդեն նրա կողքին էր: Նաջաֆովը ուրվականի նման դուրս եկավ նրա առաջ և նռնակների կապը դիպավ ատելի թըր-թուրներին: Միքենայի պայթյունը միախառնվեց գերմանական թնդանոթի կրակոցի աղմուկին: Թշնամու տանկիստները կարողացան իրենց վերջին արկը կրակել պատուհանի վրա: Մոտակա թաքստոցներում նստած մարտիկները տեսան, թե ինչպես բոցի և ծխի մեջ անհայտացավ Մամեդ Նաջաֆովի իրենց ծանոթ կերպարանքը:

3.

Գումարտակի հրամանատարն ևս տեսավ զրահահարի սխրագործությունը: Նա մոտակա տներից մեկի ձեղնահարկում էր գտնվում և երբ Մակրուշենկոն ու Նաջաֆովը դադարեցրին կրակը, նա հասկացավ, որ նրանց հետ ինչ-որ բան է պատահել: Հանկարծակի Նաջաֆովն իր ամբողջ հասակով երևաց պատուհանում և պայթեցրեց տանկը:

Զրահահարի սխրագործությունը սքանչացրեց Մաղոյանին: Սակայն դրան հաջորդեց նրա տագնապալի միտքը: «Տեսնես ինչ պատահեց նրանց»:

Եվ նա անցնելով մոտիկ շենքերի բակերով, մի կողմ թողնելով լեռնակուտակ խճուղու ծռմռված երկաթները, շտապեց նրանց մոտ, որ այդպես անվեհեր մարտնչում էին գերմանական տանկերի դեմ:

Նրա տեսածը սուր ցավ պատճառեց իրեն: Նաջաֆովի մարմինը կտոր-կտոր էր եղել: Մաղոյանը ակամա փակեց աչքերը, ցավեցնելու աստիճան սեղմելով քամուց չորացած շրթունքները: Նրա գլուխը դանդաղ հակվեց կրծքին, նա թուլացած ձեռքով հանեց գլխարկը:

Ապա նա մոտեցավ Մակրուշենկոյին, քիչ բարձրացրեց նրա գլուխը և աչքերին նայելով, տեսավ, որ զինվորը կենդանի է:

Մի մոտիկ տեղ ուժգին կրակոց լսվեց և սուլելով անցավ գերմանական ականը: Նոր կրակոցներ լսվեցին: Ականներն այն-

պես էին պայթում, որ, ասես թե, նրանք գետին էին ընկնում ամպերից վեր գտնվող մի բարձրությունից։

Հիտլերականները նոր գրոհ սկսեցին։

Մաղոյանը զգուշությամբ բարձրացրեց Պյոտրին. նա մեղմ հառաչեց։

— Ոչինչ, սիրելիս, ոչինչ,—կամացուկ ասաց գումարտակի հրամանատարը,—հիմա մեր քույրերը կօգնեն քեզ։

Մաղոյանը կաղում էր։ Առավոտյան գնդակ էր դիպել նրա ոտքին։ Նա մի քանի անգամ կանգ առավ և Ֆեոդորին ձեռքից բաց չթողնելով, քիչ շունչ քաշեց պատերին հենվելով։ Նախկին թղթի գործարանի բակում ավագ լեյտենանտին մոտեցան երկու կարմիրբանակայիին։ Աշխատելով նոր տառապանքներ չպատճառել գրահահարին, նրանք զգուշությամբ նրան տարան սանիտարական կետը։

Վիրավորները պառկած էին կայարանի ավերված շենքի նկուղում։ Նրանք հառաչում էին, ջուր էին ուզում և շարունակ կանչում էին սանիտարուհի Զինային։ Երիտասարդ աղջիկը շատ համարձակ ու վարժ էր աշխատում։ Նա շուտ-շուտ անցնում էր մի մարտիկից մյուսին, կարողանում էր սիրտ տալ նրանցից ամեն մեկին։ Վիրավորները շատ էին։ Եվ նրանք բոլորն էլ համարյա պառկած էին ցեմենտի հատակին, որի վրա քիչ հարդ էր փռված և անկարող էին շարժվել։ Ում վերքը թեթև էր՝ չէր մնում։ Նրանց վերքը կապում էին և նրանք նորից գնում էին կռվելու։

Հարևան սենյակում, նախկին առաջնակարգ ռեստորանի նկուղում, գիշեր-ցերեկ վառվում էին նավթի լամպերը։ Գումարտակի բժիշկ Սերգեյ Նիկոլաևիչ Պանովը, բուժքույր Օլգա Միխայլովնա Սլավինայի հետ վիրահատում էր վիրավորներին։ Դա հյուծիչ աշխատանք էր։ Շատ բան էր պակասում բժշկին, սակայն խմանալով, թե ինչ ծանր վիճակի մեջ է շրջապատված գումարտակը, նա ոչինչ չէր խնդրում Մաղոյանից, աշխատելով բավականանալ նրանով, որ կար սանիտարական կետում։

Վերևում շարունակ պայթում էին թշնամու արկերը։ Դրանից դողում ու ցնցվում էին նկուղի քարե կամարները։ Ամեն մի պայթյունը նոր, տանջալի ցավեր էր պատճառում ուժասպառ-

ված մարտիկներին։ Ծխում և հանգչում էին լամպերը։ Գանովը և Սլավինան չէին ընդհատում իրենց աշխատանքը։

Մաղոյանը երկու անգամ եկել էր սանիտարական կետը։ Բարդ հանգամանքները բացառիկ ճկունություն էին պահանջում նրանից։ Նա պետք է ժամանակին այցելեր այն բազմաթիվ տեղամասերը, որտեղ վճռվում էր ճակատամարտի ելքը։ Ղեկավարելով մարտը, նա ժամանակ էր գտնում նաև վիրավորներին այցելելու համար։

Ավագ լեյտենանտին տեսնելուց ժպիտ էր գալիս վիրավորների դեմքերին, կարծես, թեթևանում էին նրանց տանջանքները։

— Իմ արծիվներս,—փաղաքշաբար ասում էր Մաղոյանը։ Մի օր էլ համբերեցեք, մերոնք շատ մոտ են արդեն։ Եթե ոչ այսօր, ապա վաղը նրանք կմիանան մեզ և ձեզ կուղարկենք լավ հիվանդանոց։

Հեռանալիս գումարտակի հրամանատարը մի րոպե իր հայացքը բևեռեց Սլավինայի վրա։

— Ամեն ինչ կարգին է, Օլգա Միխայլովնա։

Սլավինան հայացքն ուղղեց մի կողմ, հարցականորեն նայելով Գանովին։ Վերջինս անբնական կերպով հազաց։

— Ոչինչ, ընկեր գումարտակի հրամանատար,—կամաց ասաց վիրաբույժը,—միայն թե դեղերն են վերջանում։

— Մի բան կանենք, Սերգեյ Նիկոլաևիչ,—պատասխանեց Մաղոյանը։

Նա քայլերն ուղղեց դեպի շտաբը։ Մեկը մյուսից տխուր մտքերը նրա գլխում հաջորդում էին իրար։ «Դեղերը վերջանում են,—մտածում էր նա։ Պաքսիմատը դեռ երեկ վերջացավ։ Հիմա տեղի է ունենում այն, ինչ որ ամենից ծանր բանն է. դեղերն են վերջանում։ Ո՞վ գիտե՝ դեռ քանի օր ենք մնալու շրջապատված։ Գերմանացիները ժամ առ ժամ ուժեղացնում են ճնշումը։ Մի գրոհը հաջորդում է մյուսին։ Ջափաղանց ծանր է մեր վիճակը։

Ուժ կունենանք արդյոք դիմադրելու։ Այս վերջին հարցը գումարտակի հրամանատարին հիշեցրեց լեյտենանտ Սավելևի խոսքերը, որն Օխապկինին խորհուրդ էր տվել նահանջել և, ճեղքելով թշնամու գիծերը, միանալ յուրայիններին։ «Ո՛չ, ետ չենք գնա,—ասաց Մաղոյանը,—ետ չենք գնա։ Պետք է խո-

սել Սավելևի հետ։ Գուցե նա մարտիկներին էլ է այդ միտքը ներշնչում»։

Շտաբում Մագոյանը գտավ Կալինինին։ Լեյտենանտը նոր էր վերադարձել Լուպանդինի ստորաբաժանումից։

Նրանց դրությունը ծանր է,—զեկուցեց շտաբի պետը,— մարդ քիչ է մնացել։ Գերմանացիներն աշխատում են ներխուժել կայարանի հրապարակը մերձակա փողոցներից և բաժան-բաժան անել գումարտակը։ Այսօր վաշտի դիրքերի վրա թռչում էր գերմանական մի ինքնաթիռ և թռուցիկներ նետում։ Գերմանական հրամանատարությունը նենգորեն առաջարկում էր մարտիկներին ետ գնալ դեպի մեր գլխավոր ուժերը, խոստանալով անարգել բաց թողնել նրանց օղակումից։

— Ինչպիսի՜ հուզիչ հոգատարություն,—հեգնորեն նկատեց Մագոյանը։ Ի՜նչ սիրալիրություն նրանց կողմից։

— Այո, շատ «բարի» են դարձել գերմանացիները,—նույն տոնով պատասխանեց Կալինինը։

Գումարտակի հրամանատարը նստեց մի արկղի վրա ու հանեց գլխարկը։

— Տեսնո՞ւմ ես, Ալյոշա,— ասաց նա,— շարունակ սրախոսում էիր, թե «դրությունը լարված է». այդպես էլ եղավ։ Հիմա պետք է շտապ և խելամիտ որոշում կայացնել։ Վատ է, որ մեր հրակետերից մի քանիսը թափուր են մնացել։ Ի՞նչ ես առաջարկում, Ալյոշա։

Մագոյանի հարցը մտածմունքի մեջ գցեց շտաբի պետին։ Նա դեռ նախորդ օրը նոր որոշում էր նախապատրաստել։

— Էնգելսի փողոցից պետք է հեռանալ, ասաց Կալինինը։— Մնացած բոլոր ուժերը անհրաժեշտ է կենտրոնացնել կայարանի հրապարակի ռայոնում։ Այդպես միայն կարելի է ուժեղացնել մեր պաշտպանությունը։ Մագոյանի համար հաճելի էր, որ իր սեփական մտքերը զուգադիպում էին շտաբի պետի պլանին։

— Ճիշտ ես ասում, Ալյոշա,—ասաց նա։—Այս գիշեր պետք է աննկատելի կերպով հեռանալ դեպի կայարանի հրապարակը։ Մատները պետք է սեղմել, բռունցք դարձնել։

Մագոյանը վեր կացավ, գնաց դեպի ելքը և ինչ-որ բան հիշելով, ետ դարձավ.

— Քեզ Օխապկինը ոչինչ չի՞ ասել Սավելևի առաջարկության մասին։

— Ասել է,—Կալինինը թափ տվեց ձեռքը։

— Ամենաուշագրավը դրանում այն է, — շարունակեց Մաղոյանը,—որ լեյտենանտ Սավելևի մտքով էլ երբեք չի անցնում, թե այդ առաջարկությունն ինչքան հարմար է գերմանացիների համար։ Ի դեպ՝ ես կգնամ նրա մոտ։

4.

Պարզ օրերին, երեկոյան մթնաշաղից առաջ, անսովոր գեղեցիկ է լինում Ռոստովի երկինքը։ Քաղաքի վրա, հեռավոր կապույտի մեջ վեհաշուք լողում են սպիտակ ամպերը։ Երկնքի այն կողմը, որտեղ նոր միայն իջել է արևը, վառվում է ալ կարմիր մայրամուտը։ Հորիզոնից դեպի վեր գույները մեղմանում են և աստիճանաբար ձուլվում անեզր երկնագույն տարածության մեջ։ Երկինքը նմանում է ծովի, իսկ երբ գիշերն ավելի է իջնում գետնին, թվում է թե մարդու գլխավերևը թեթև ծածանվում է մուգ կապտագույն թավշի աստղազարդ մի վիթխարի սփռոց։

Այդպիսի մի երեկո էր։ Մարտիկները պառկած էին ավերված տան քարերի վրա։ Մեկի ձեռքն էր կապված, մյուսի գլխարկի տակից երևում էր սպիտակ վիրակապը՝ վրան արյան սև հետքեր։ Վերքերը թարմ էին, նույն օրվա։ Ոչ ոք արդեն չէր հիշում, թե առավոտվանից քանի գրոհ է ետ մղված։ Ավերակներին մոտենալու ամեն մի փորձ շատ թանգ էր նստում հիտլերականներին։ Տան մերձակայքում ամենուրեք թափված էին գերմանացիների դիակները։ Գերմանացի սպաները առաջ էին քշում ֆաշիստական զինվորներին և նրանք վազելիս ավտոմատներից կրակելով և ինչ-որ խեղդուկ կոկորդային հնչյուններ արձակելով, նորից գնում էին դեպի ավերակները։ Մարտիկները մոտ էին թողնում նրանց և ապա համազարկերով գնդակահարում առաջից եկողներին։ Գերմանացիներն ընկնում էին մայթերին։ Նոր համազարկը ավերածություն էր գործում գրոհողների երկրորդ շարքի մեջ։ Այն ժամանակ ետինները կանգ էին առնում և շտապ ետ վազում։

— Ա՜յ թե կարողանայինք հիմա ետ քշել նրանց, քաղաքը մի գրոհով կարելի էր վերցնել,— ոգևորված ասում էր Կովալչուկը։

— Շատ ես շտապում, եղբայր,— ասում էր նավաստի Պավլովը,— շատ ես ուզում տուն հասնել։ Քանի որ հրաման է տըրված տեղում մնալու, նշանակում է այդպես էլ հարկավոր է։ Իզուր տեղն առաջ վազելով, մեկ էլ տեսար՝ գումարտակի գործը փչացրիր։ «Բատյան» գիտե, թե ինչ պետք է անել։

— Առանց հացի նստելով էլ շատ գործ չես տեսնի,— պատասխանում էր Կովալչուկը,— փամփուշտ էլ համարյա չի մնացել։

— Իսկ երբ որ փամփուշտ քիչ կա, ինչպես պետք է օգտագործել այն, ընկեր Պավլով,— անսպասելիորեն լսվում է զինվորների թիկունքից տրված հարցը։

Մարտիկները ետ են շուռ գալիս։— Կռացած նրանց է մոտենում Մաղոյանը։

— Պետք է խփել միայն նպատակին,— ընկեր գումարտակի հրամանատար,— անվրեպ խփել գերմանացուն։

— Ճիշտ է, Պավլով։ Իսկ Կովալչուկը մի՞թե մոռացել է այդ մասին։ Չի կարող պատահել։ Ձեզ հավատում եմ։ Կովալչուկը լավ ռազմիկ է։

Կարմիրբանակայինները լռում են։ Ռոստովցին նայում է Մաղոյանին ու մեղապարտի նման ասում.

— Ես իմ հարազատ քաղաքում եմ, ընկեր գումարտակի հրամանատար, էլ համբերություն չի մնացել։ Ուզում եմ շուտով անցնել նրա փողոցներով։

— Կանցնենք, Կովալչուկ, իհարկե, կանցնենք քո սիրած Ռոստովի փողոցներով,— ժպտում է գումարտակի հրամանատարը։ Միայն թե չպետք է հուսահատվել, պետք է ամուր կենալ։ Շուտով օգնություն կգա, հաղթանակը մերը կլինի։ Իսկ քանի դեռ մերոնք չեն եկել, կայարանի ռայոնը չենք հանձնի։

Մաղոյանը ոգևորությամբ էր խոսում և ինչպես միշտ, այսպիսի դեպքերում նրա խոսքերի մեջ ավելի ուժեղ էր զգացվում հայկական շեշտը։

Մենք բոլորս գիտենք, որ մեր ետևում գերմանացիներն այնքան էլ շատ չեն։ Կարելի է նրանց շարքը ճեղքելով ետ գնալ

մերոնց մոտ։ Սակայն մեզ հրամայված է պահել կայարանը, մեր ձեռքին պահել մեր գրաված ռազմաբեմը։ Մենք առաջինն ենք մտել Ռոստով, և այդ պատիվը պատկանում է մեր գումարտակին։ Փամփուշտները վերջանան, պետք կռվենք հրացանի կոթերով, բռունցքներով, ինչով էլ որ լինի։ Ետ չենք գնա։

Գումարտակի հրամանատարի խոսքերը վճռական ու կրքոտ էին հնչում, և մարտիկները հավատում էին, որ գումարտակը չի հեռանա Ռոստովից։ Այն ավելի շուտ կոչնչանա, քան թե ետ կտա թշնամուն իր գրավածը։

Արդեն մութ է։ Գերմանացիները հրետանային կրակ են բաց անում։

Մաղոյանը գնում է դեպի հարևան փողոցը։ Այնտեղ դիրք է գրավել լեյտենանտ Սավելևի ստորաբաժանումը։ Ավագ լեյտենանտը միայն երկրորդ օրն է, որ ճանաչում է այդ սպային։ Սավելևը այն ջոկատի հրամանատարն է, որը գումարտակին միացավ Դոնն անցնելուց հետո, երբ հարևան զորամասերը ետ մղվեցին գերմանացիների կողմից։ Սավելևի քաջարի գործողությունններն այն ժամանակ համակրանք առաջ բերին գումարտակի հրամանատարի մեջ նրա նկատմամբ, սակայն լեյտենանտ Օխապկինի պատմածը նրա խոսքերի մասին՝ ամենևին չէր բըռնում նրա գործերին։

Տեղ հասնելով, Մաղոյանը հարցրեց Սավելևին, թե նրա տեղամասում ինչ են անում գերմանացիները։ Արդյոք շատ վիրավորներ կան վաշտում, ինչպե՞ս է ռազմամթերքի դրությունը։

Սավելևը, որ քսանհրկու տարեկան, արտաքնապես ու արագախոս մի սպա էր, շտապով պատասխանում էր նրա հարցերին։ Նա մի քիչ անհավասարակշիռ մարդու տպավորություն էր գործում։ Մաղոյանին այնուամենայնիվ դուր էր գալիս այդ սպայի վճռական, արի դեմքը, նրա դեռ պատանեկական պարզ հայացքը։

Հեռանալուց առաջ գումարտակի հրամանատարը լեյտենանտին մեկնեց գերմանացիների թռուցիկը։

—Կարդացե՞լ եք։

Սավելևն արագ աչքի անցկացրեց այն ու սաստիկ կարմրեց։ Եվ թեպետ ավագ լեյտենանտը ոչ մի խոսքով չհիշեցրեց սպա-

յին Օխապկինի հետ ունեցած նրա խոսակցությունը, նա ամեն ինչ հասկացավ։

—Ես չէի կարծում, ընկեր գումարտակի հրամանատար, որ իմ խոսքերը կզուգադիպեն այս թղթի մեջ գրվածին։ Ես ուզում էի լավ գործ կատարած լինել, դուրս գալ թշնամու օղակումից և նորից ընդհանուր ուժերով հարձակվել նրա վրա։ Դուրս է գալիս, որ սխալվել եմ։

—Տաքարյուն լինելը վատ բան չէ, ընկեր լեյտենանտ,— մեղմորեն ասաց Մաղոյանը։ Դու երիտասարդ, տաքարյուն մարդ ես։ Ի՞նչ կա որ։ Ես կարծում եմ՝ հրամանատարի սիրտը միշտ պետք է տաք լինի, իսկ գլուխը՝ շարունակ սառը։ Հավասարակշռություն, մտածված գործողություններ—ահա թե ինչ է հարկավոր ամենից առաջ։ Ժողովրդական առածն իզուր չէ ասում. «Յոթ չափիր, մեկ կտրիր»։

Գիշերային երկինքը լուսավորվեց հրթիռների լույսով։ Բարակ, գունավոր ժապավեններով դեպի երկինք բարձրացան ծրագծող գնդակները։ Սկսվում էր թշնամու նոր գրոհը։ Առավոտվանից ի վեր այն 23-րդն էր։

Ռոստովի կենտրոնում հանկարծակի բարձրացավ բոցի մի մեծ սյուն։ Մարտիկները լսեցին խլացուցիչ պայթյուններ։ Կրակի նոր օջախներ երևացին։

—Պայթեցնում են քաղաքը...—Գավրովը զայրագին հայհոյեց գերմանացիներին։ Գրոհում են մեզ վրա, իսկ իրենք այրում են տները, ուրեմն պատրաստվում են փախչել։ Երևում է՝ մերոնք նեղն են գցել նրանց։ Այդ կրակը ձեզ թանկ կնստի, անիծյալ ֆրիցներ։

Հրդեհը բորբոքվում էր։ Կրակի լեզուները չարագուշակ բոսորագույն ցոլքեր էին նետում հարևան տների պատերի վրա։

ԵՐՐՈՐԴ ՕՐԸ

1.

Գիշերը Մաղոյանը Էնգելսի փողոցից տեղափոխեց այնտեղ գտնվող ստորաբաժանումը և, օգտվելով կարճատև անդորրից, նրանց նույնպես կենտրոնացրեց կայարանի հրապարակում։ Մթությամբ քողարկված մարտիկներն անձայն իջան երկաթու-

ղագծի կողմը և միացան կայարանը պաշտպանողներին, ամրանալով կիսակործան քարե շենքերում։ Բոլոր ուժերը կենտրոնացնելով մարտի գլխավոր տեղամասում, գումարտակը կկարողանար ավելի հաջողությամբ դիմադրել թշնամու գերազանց ուժերի ճնշմանը։

Լուսաբացին գերմանացիները կատաղի կրակ տեղացին Մաղոյանի գումարտակի հին դիրքերի վրա։ Ոչ ոք նրանց չէր պատասխանում։ Սակայն հավատ չընծայելով այդ ավերակների լռությանը, որոնք նախորդ օրն այնքան կատաղի պաշտպանվում էին, հիտլերականները, հրաձգությունը շարունակելով, դանդաղ ու վախվխելով առաջ էին շարժվում։

Գերմանացիները միայն այն ժամանակ հասկացան, որ գումարտակի մարտիկները հեռացել են, երբ գրավեցին այն տները, որտեղ նրանք գտնվում էին նախորդ օրը։ Այդ սրտապնդեց նրանց և նրանք առաջ նետեցին տանկերը։

Ավագ լեյտենանտ Օխապկինը մի խումբ մարտիկների հետ գտնվում էր թաքստոցում։ Պատսպարված լինելով մերձքաղաքային կայարանի ավերված շենքերում, կարմիրբանակայինները տեսնում էին, որ թշնամու տանկերն անցան Տեմերնիցկայի կամուրջը և ուղղվեցին դեպի երկաթուղագիծը։ Տանկերն ընթանում էին իրենց մոտով, բայց Օխապկինը չէր թույլատրում կրակել։ Իսկ երբ մեքենաների հետևից անցան ավտոմատավորները, Անդրեյը թիկունքից կրակ բաց արեց գերմանացիների վրա։ Նրանց համար ազդանշան հանդիսացավ կամուրջի պայթյունը, որ Օստապ Դանիլչենկոյի գործն էր։

Հիտլերյան չորս տանկ և 10 ավտոմատավոր ծուղակն ընկան։ Զրահահարներ Ռումյանցևը, Հովհաննիսյանը, Յակովլևը և Ռախմանովը, որ թաքստոցում էին, այրեցին տանկերը։ Այդ, կարծես թե, զինաթափ արեց գերմանացիներին, այնպիսի խուճապ սկսվեց նրանց շարքերում։ Իսկ մարտիկները երկու կողմից հարձակվեցին նրանց վրա և ձեռնամարտի ժամանակ ոչնչացրին բոլոր նրանց, ովքեր անցել էին Տեմերնիցկայի կամուրջով։

Ֆաշիստական հրամանատարությունը, Մաղոյանի քաջարի մարտիկների հանդուգն գործողություններից կատաղած, չնայելով մեծ կորուստներին, դեպի կամուրջը նետեց զինվորների

նոր ստորաբաժանումներ։ Օխապկինը կես օր Տեմերնիչկայի մոտ կռվեց գերմանացիների դեմ։

Բաշարի մարտիկների մի փոքրիկ խումբ երկաթե պատնեշ կանգնեցրեց թշնամու հարձակման ճանապարհին։

Երբ փամփուշտները վերջացան, կարմիրբանակայինները սկսեցին ֆաշիստներին խփել նրանց իսկ զենքով։

—Տես, եղբայր, ինչպես են օգնում մեզ մեռած ֆրիցները,— կատակում էր Գավրովը թշնամու սպանված զինվորների մոտից վերցնելով նրանց ավտոմատները և ռազմամթերքը։ Օխապկինի համար հաճելի էր նավաստու անխոնջ, ուժեղ ձայնը։

— Է՛հ, տղաներ. ինչքան շատ սատկած ֆրից, այնքան ավելի շատ զենք...

Հոգնած մարտիկները շրջապատել էին Անդրեյին։ Կրակի մեջ գտնվելով, նրանցից մի քանիսը երրորդ օրն էր արդեն, որ ոչինչ չէին կերել։ Սակայն իրենց զայրացկոտ հայացքը հառելով առաջ, նրանք տոգորված էին անհաշտ ատելությամբ դեպի թշնամին։ Այդ ատելությունն ամրացնում էր նրանց ուժերը, դեպի մարտ մղում նրանց։

Նավաստու զվարթ խոսքերը տեղին էին։ Անդրեյը տեսնում էր, որ նրանք կարմիրբանակայինների հավանության ժպիտներին են արժանանում։

Սակայն հերոսների շարքերը նոսրանում էին։ Նրանք մեկը մյուսի ետևից ընկնում էին անհավասար մարտում։ Թշնամու գնդակը վիրավորեց նաև Օխապկինին։ Կենդանի մնացած մարտիկների փոքրիկ խմբի հետ Անդրեյը հեռացավ դեպի երկաթուղագիծը։

2.

Ռոստովն այրվում էր։

Քաղաքի տարբեր մասերը բռնել էր թանձր սև ծուխը, որ բարձրանում էր ցերեկով աննկատելի հրդեհների բոցից։ Ծուխը լցվում էր փողոցները, նրբանցքները, տարածվում գետնի վրա։

Մերթ ընդ մերթ կենտրոնական թաղամասերում լսվում էին ուժեղ պայթյուններ, որոնցից դղրդում էր շրջապատը։

Կեսօրին մարտիկները Բատայսկի կողմից լսեցին թնդանոթների որոտը։ Զինվորները ուրախացած իրար նայեցին.

—Մերոնք են խփում։

—Երևի հարձակման են պատրաստվում։

Մի երիտասարդ, կունատ, անբեղ դեմքով մարտիկ, դիմեց իր հարևանին.

—Ի՞նչ կասես Պոտապիչ, եթե մերոնք հիմա ամբողջ ուժով գան քաղաքի վրա, մի հարվածով կգրավե՞ն, թե՞ չէ։

Պոտապիչը, որ մի տարիքոտ, թիկնեղ, սիբիրցի զինվոր էր, կշտամբանքով պատասխանեց երիտասարդին։

—Ա՛յ Ստրելցով, մեկ-մեկ այնպիսի բաներ ես ասում, որ, կարծես թե, երեխա լինես։ Պատերազմը քեզ համար խա՞ղ է, ի՞նչ է, որ ուզածդ ժամանակ շվացնես, զորքդ հավաքես ու գնաս, ուր որ քեֆդ տա։ Չէ՛, պատերազմում այդպիսի բան չի լինում։ Այս գործի մեջ հաշիվ պետք է, ռազմագիտություն պետք է։

—Մի տես, թե ի՞նչ Սուվորո՜վ է,—քթի տակ ծիծաղեց Ստրելցովը,— իսկ ես, ծերուկ, ա՛յ թե ինչ եմ կարծում. ուժ կա քո ձեռքին, ուրեմն կարող ես թշնամուն ջարդուփշուր անել։

—Դատարկ բան ես ասում։ Մենակ ուժով հաղթել չի լինի,— քրթմնջաց Պոտապիչը։ Այդ ուժը պետք է կարող ձեռքի մեջ լինի և խելոք մարդկանց կամքին ենթարկվի։ Գերմանացիները, որ պատերազմ սկսեցին մեր դեմ, քանի՞ դիվիզիաներ ուղարկեցին ճակատ...

Սիբիրցին շեշտակի նայեց Ստրելցովին։ Նա լուռ էր։

—Չգիտե՞ս քանի դիվիզիա։ 170, մեծ ուժ է, չէ՞։ Միայն թե սև ֆաշիստական ուժ է, ներսից որդնած։ Դրա համար էլ չդիմացան գերմանացիները։ Նրանց հաշիվները սապոնի պղպջակի նման հօդս են ցնդում։ Պարզվում է, որ նրանց ստրատեգիան բանի պետք չի։ Նրանք իրենց օրում չեն կարող հաղթել ռուս մարդուն, որ ոչ միայն հսկայի ուժ ունի, այլև պայծառ խելք ու երկաթե կամք։

Պոտապիչի խոսքերը համոզիչ էին։ Միխայիլ Ստրելցովը ներքուստ համամիտ էր նրանց, զգում էր, որ ինքն իրավացի չէ, սակայն տեղի տալ չէր ցանկանում։ Երիտասարդներն ունենում են այդ պակասությունը։

Շատ լավ, ասենք թե դու ճիշտ ես ասում,—նորից սկսեց Ստրելցովը։—Այն ժամանակ մի ուրիշ բան բացատրիր ինձ։ Երրորդ օրն է նստած ենք Ռոստովում՝ գերմանացիների կողմից

շրջապատված։ Իսկ մերոնք քաղաքի շուրջն են։ Ինչու չեն շտապում մեզ մոտ հասնելու։ Ստրատեգիան չի թույլ տալիս։

Սորելցովը այս վերջին խոսքերը ասաց, կարծես թե, իր համար անսպասելի կերպով և դրանք շատ դուր եկան նրան։ Նա վստահ էր, որ այդ բարդ հարցը զինաթափ կանի Պոտապչինին։

Հասակավոր զինվորն անմիջապես պատասխանեց.

—Ա՛յ տղա, դու ճիշտ չես ասում,—ասաց նա մի քիչ մտածելուց հետո։— Չի՛ կարող պատահել, որ մերոնք մեզ օգնության գալիս չլինեն։ Ռուս զինվորի ամենաառաջին սովորությունն այն է, որ եթե ընկերը անհաջողության մեջ է, ինքն սպանվի էլ՝ պիտի գնա նրան փրկելու։ Դա օրենք է մեզ համար, դա զինվորի պատիվն է և ամեն մեկի համար ա՛յ, այստեղ է. այսպես ասելով, Պոտապչինը բռունցքն իջեցրեց իր լայն կրծքի ձախ կողմին։ Իսկ եթե նրանք դեռ մեզ մոտ չեն հասել, նշանակում է դրա համար մի մեծ, պատերազմի համար ավելի կարևոր պատճառ կա, քան թե մենք այստեղ, ես ու դու։

—Ես իմ մասին չեմ ասում,—նեղացավ Միխայիլը,—չէ՞ որ գումարտակի դրությունը դժվար է, ռազմամթերք էլ չկա այլևս, ինչո՞վ կռվենք։ Էսպես որ գնա, գերմանացիները բոլորիս կկոտորեն էստեղ։

Սորելցովը լուռ էր։

—Դու ջահել տղա ես,—արդեն քիչ ավելի հանգիստ շարունակեց սիբիրցին։ Կյանքը դու ավելի շատ նկարներով ես ճանաչում, իսկ իրոք այն ավելի բարդ է, ավելի շատ բան է պահանջում մարդուց, և մանավանդ պահանջում է համբերություն և ուշիմություն։ Ա՛յ, քեզ համար անհասկանալի է, թե մերոնք ինչու չեն հարձակվում ամբողջ ուժով և մի օրում չեն գրավում Ռոստովը, որ մեր դրությունն էլ հեշտանա։ Քո ասելով, ստացվում է, որ պատերազմը միայն Ռոստովի շուրջն է, բայց իրոք նրա կրակն ամբողջ երկիրն է բռնել, հազարավոր քաղաքներ։ Եվ այդ նշանակում է, որ երբ գեներալները որևէ որոշում են ընդունում, նրանք մտածում են ոչ միայն մեկ գումարտակի շահերի մասին, այլ ամբողջ բանակի, մեր ամբողջ երկրի շահերի մասին։ Ահա դա է պատերազմական հաշիվը։ Գուցե հենց նրա համար էլ մեր գումարտակն ուղարկել են Ռոստովի կայարանը, որ մենք մի քանի օր շարունակ պոչից բռնած պահենք

գերմանացի գայլին։ Ինչքա՜ն Ֆրիցներ ընկան այստեղ և ինչքանի՜ն մենք ետ ենք պահում ռազմաճակատից։ Իսկ որ մեր գրությունը դժվար է, այդ ճիշտ է, չէ՞ որ պատերազմ է։ Ինչքա՜ն սարսափելի էր Ստալինգրադում, բայց զինվորները դիմացան։ Հարձակումը տնտառում զբոսնել չէ։ Գնում ես, գնում, կարծես, ամեն ինչ կարգին է, բայց պատահում է, որ ստիպված ես լինում հարձակման ժամանակ պաշտպանվել։

Այդպես է ձեռք բերվում հաղթանակը, Սոբոլյով։ Այն հեշտությամբ ձեռք չի ընկնում։

Գոտապիչի խոսքերը հանկարծակի խլացան հաճախակի պայթյուններից։ Թուլ որոտացին գերմանական թնդանոթները։

Էսէսականները մոտենում էին երկաթուղագծին։ Նրանք առաջ էին շարժվում ուղղահայաց դիրքով, ամբողջ հասակով մեկ։

3.

Պավլովը պառկած էր Կովալչուկից ոչ հեռու։ Կայարանի մոտիկ փողոցը տեսանելի էր նրանց համար մինչև դեպի Տեմերնիչկան թեքվելը։ Երկուսն էլ տեսան, թե ինչպես գերմանացիները դուրս եկան անտեղից և լկտի ինքնավստահությամբ քայլեցին դեպի գումարտակի դիրքերը։ Ֆաշիստների հանդգնությունը զարմացրեց նավաստուն։

—Ինչի՞ց դրանք այդպես քաջասիրտ դարձան,—հարցրեց նա Կովալչուկին։

—Երևի օղուց,—պատասխանեց նա։—Լսի՛ր, լեզուներն ինչպե՜ս է բացվել։

Պավլովը նայեց նրանց կողմը։ Գորշ-կանաչավուն ֆիգուրներն առաջ էին շարժվում անհամաչափ քայլերով, կարծես, սաստիկ քամին տատանում էր նրանց։ Նա զինվորների շարժումների մեջ նկատեց նաև գերմանացիների համար անսովոր մի անհոգություն։ Նրանցից մի քանիսը ուժգնորեն թափահարում էին ձեռքերը, այս ու այն կողմն էին շուռ տալիս գլուխը, ինչ-որ հատու, կցկտուր խոսքեր էին ասում։ Պավլովի մտքով անցավ հանկարծ, թե իր տեսածները ոչ թե կենտրոնական Եվրոպայում ապրող գերմանացիներ են, այլ մարդակերների մի ցեղի ներկայացուցիչներ, որի մասին նա կարդացել էր վաղուց, մանուկ հասակում։ Դա շարժեց նավաստու ծիծաղը։

Սակայն գերմանացիների քաջությունը հիմնվում էր ոչ միայն օղու վրա։ Հիտլերականները գլխի էին ընկնում, որ Մաղոյանի մարդկանց ռազմամթերքը վերջանալու վրա է։ Ֆաշիստական հրետանին արդեն դադարեցրել էր կրակը։ Էսէսական-ները արդեն շատ մոտ էին պաշտպանության առաջավոր գծին, սակայն ռուսները լուռ էին։

Մաղոյանը խնայում էր վերջին փամփուշտները։ Ավագ լեյտենանտը խստիվ հրամայել էր մարտիկներին, որ ոչ ոք չկրակի մինչև ինքը հրաման չտա։ Կարմիրբանակայինները լուռ պառկած էին և այն գիտակցությունից, որ իրենք չեն կարող հենց այդ րոպեին ոչնչացնել այնքան մոտիկ գտնվող թշնամիներին, նրանց դեմքերը անսովոր մռայլ ու չարացած էին։

Գումարտակի հրամանատարը հույս ուներ գերմանացիներին հետ շպրտել գնդացիրների ու ավտոմատների կրակի հեղեղով։ Նա որոշել էր կրակ բաց անել միայն ըստ հնարավորին մոտիկ տարածությունից, որպեսզի հաստատապես խուճապի մատնի էսէսականներին։ Մաղոյանը դասավորել էր նաև զրահահարներին, որոնք պիտի կրակեին տանկերի երևալու դեպքում։ Նրանք պատսպարվել էին գազային ջրերի նախկին պավիլիոնում՝ ավերված սյուների ետևում։ Նրանց հետ էր նաև կապիտան Շունդենկոն։

Մարտիկներն արդեն կարողանում էին տարբերել գերմանացիների դեմքերը։ Առանց նշանառության կրակելով ավտոմատներից, նրանք աղմուկով վազում էին դեպի հրապարակը։ Մարտիկներն զգաստ էին, նրանց ձեռքերն ավելի ուժգին սեղմում էին հրացանները։ Ամեն վայրկյանն այդ ժամանակ զարմանալի երկար էր թվում։

Մաղոյանն ազդանշան տվեց։ Առաջին համազարկից գերմանացիներից շատերը ցած թափվեցին ու անշարժացան, ասես, մանգաղով հնձեցին նրանց։ Ոտքի վրա մնացածները դանդաղեցրին քայլերը, սկսեցին շփոթված դես ու դեն նայել։ Սակայն քշվելով սպաների կողմից, նրանք էլի սկսեցին առաջ շարժվել։ Մարտիկները երկրորդ համազարկը տվին։

Գերմանացիները կանգ առան, անվճռականորեն մնացին իրենց տեղերում։ Րոպեն շատ հարմար էր։ Մաղոյանը մարտիկներին ուղարկեց սվինամարտի։ Սակայն այդ ժամանակ մեր

ստորաբաժանումների ետևում կրակոցներ լսվեցին, և Գավլովը որոշակիորեն լսեց գերմանացիների ձայները։

Թշնամու ավտոմատավորների մի խումբ սողոսկել էր գումարտակի թիկունքը։ Նրանք ներխուժել էին Լենինյան ավանի կողմից և ետ մղելով այնտեղի պահակազորը, շտապում էին արդեն միանալ ճակատից գումարտակի վրա հարձակվողներին։

Դրությունը ճակատագրական դարձավ։ Էսէսականները, որ քիչ էր մնում ետ փախչեն, նորից սիրտ առան։ Հիտլերականները սկսեցին ճնշում գործ դնել Մազոյանի զինվորների վրա երկու կողմից։ Կատաղի ձեռնամարտ սկսվեց։ Մազոյանն ինքը վազեց մտավ կռվողների շարքերի մեջ։

Մարտնչում էին լուռ, կենտրոնացած, միայն սվինների շառաչն էր լսվում և զանազան կողմերից երբեմն որոտում էին կրակոցները։

Գավլովը գործում էր հրացանի կոթով, կարծես, այն դագանակ լիներ նրա ձեռքին։ Նա մեկը մյուսի ետևից ծանր, մահացու հարվածներ էր հասցնում գերմանացիներին, աշխատելով իր մարմնով պատսպարել գումարտակի հրամանատարին։ Մազոյանն առաջ էր գնում ատրճանակ կրակելով։

Աննկատելի կերպով նավաստուն մոտեցավ մի մարմնեղ գերմանացի և ուղիղ կրակեց նրա վրա։ Կովալչուկը տեսավ, թե ինչպես Գավլովը ձեռքից բաց թողեց հրացանը և մի կողմ թեքվելով՝ ընկավ ասֆալտի վրա։ Ռոստովցին երկու քայլ անելով, հարձակվեց էսէսականի վրա և հրացանի կոթի ուժգին հարվածով ջարդեց նրա գանգը։ Սակայն հաջորդ ակնթարթում Կովալչուկը նկատեց երկու ուրիշ գերմանացիներ, որոնք ետևից մոտենում էին Մազոյանին։

Նա կարողացավ նախազգուշացնել գումարտակի հրամանատարին, իր մարմնով պատսպարելով նրան։ Մարտիկը սվինի հարվածով գետին տապալեց առաջին էսէսականին, սակայն երկրորդի սվինը ցած նետեց Կովալչուկին։ Նրա արյան վրեժը հանեց Մազոյանի գնդակը։

Շատ հիտլերականներ ընկան այդ կատաղի գոտեմարտի ժամանակ։ Մազոյանը ևս կորցրեց իր քաջերից մի քանիսին։

Կենդանի մնացած էսէսականները նահանջեցին դեպի Տեմերնիկա։

4.

Երեկոյան Լենինյան պալատի մոտ գտնվող մի փոքրիկ տան դարպասից դուրս նայեց մի կին։ Սևեռուն հայացքն ուղղելով մութ փողոցին և ականջ դնելով, ուշադրության առնելով ամենափոքր շշուկն անգամ, նա իր ետևից կամաց ծածկեց դռնակը և պատի տակով գնալով, բռնեց կայարանի ճանապարհը։

Նա դանդաղ առաջ էր շարժվում, զգուշությամբ ոտքերը փոխելով մայթի քարերի վրայով։ Աղմուկ լսելիս նա կանգ էր առնում, աշխատում մնալ այնպիսի տեղ, որտեղ կարելի էր թաքնվել, ապա շարունակում էր ճանապարհը։

Մթության մեջ հանկարծ նրա առաջ կանգնեց մի կարմիրբանակային։ Նա կանգնեցրեց կնոջը. կինը հուզված նայում էր մարտիկին և այնպիսի անկեղծությամբ էր պատասխանում նրա հարցերին, թե ով է և ուր է գնում, որ այդ հուզեց զինվորին։

— Ես ռոստովցի եմ, ընկեր, ուզում եմ տեսնել ձեր հրամանատարին։

— Ուրեմն տեղացի՞ ես,——մեղմանալով ասաց Պոտապինը։

— Այո։

— Իսկ դա ի՞նչ պարկ է, քաղաքացուհի,—հարցրեց նա,— կնոջ ձեռքին մի մեծ կապոց տեսնելով։

— Հաց եմ բերել ձեզ համար։

— Հա՜ց,—ուրախացած հարցրեց Պոտապինը։—Լավ գործ ես արել. հիմա մենք կօգնենք քեզ։ Հապա տեսնեմ,—և նա ձեռքը մոտեցրեց տոպրակին։

Վերցնելով այն, Պոտապինը կամաց կանչեց ինչ-որ մեկին։ Երևաց Սորելցովը։

— Քաղաքացուհուն կտանես շտաբը,—ասաց Պոտապինը։ Այս էլ կտանես այնտեղ, ավելացրեց նա, տոպրակը հանձնելով կարմիրբանակայինին։

Մոտենալով դիսպետչերական սպասարկման շենքին, Սորելցովը կնոջը խնդրեց սպասել մի րոպե և ինքը ցած իջավ։

— Ընկեր գումարտակի հրամանատար, մի կին է եկել ձեզ տեսնելու։

— Մադոյանը բարձրացրեց հոգնած աչքերը։

— Ո՞վ է։

— Հաց է բերել։

Ավագ լեյտենանտը և Կալինինը իրար նայեցին։

— Թող ներս գա։

Լիզա Դմիտրիևնան բարձրահասակ, բարեկազմ մի աղջիկ էր։ Մուգ գույնի գլխաշորի տակից նրա գեղեցիկ, սպիտակ դեմքի վրա էին ընկնում սև գանգուրները։ Նա քաշվելով ներս մտավ մանկական միամիտ ժպիտը դեմքին։

Սպաները սիրալիր դիմավորեցին նրան և դրանից նա սիրտ առավ։

— Դուք ներեցեք, որ ես ձեզ անհանգստացնում եմ։ — Մագոյանի համար հաճելի էր լսել նրա քնքույշ, նուրբ ձայնը։ — Վեց ամիս է, որ ձեզ չեմ տեսել, բայց, կարծես, մի քանի տարի է անցել։ Իմ եղբայրը՝ Միխայիլը նույնպես ռազմաճակատում է։ Մենք այստեղ կայարանին մոտիկ ենք ապրում։

Նա պատմեց, որ մի քանի իրար հարևան կանայք որոշել են օգնել մարտիկներին և իրեն հանձնարարել են տանել, հանձնել իրենց համեստ նվերը։

— Գուցե մեր հացը ձեզ այնքան էլ դուր չգա, — զգուշությամբ ասաց Լիզան, — բայց չնեղանաք, մենք գերմանացիների օրով ուրիշ հաց չենք տեսել։ Իմ բերածը գարու բլիթներ են և անցյալ տարվանից մնացած պաքսիմատ։

Այսպես ասելով՝ նա սկսեց տոպրակը բաց անել։ Սպաներն ուշադիր հետևում էին նրա ամեն մի շարժմանը։ Այս համեստ ռուս աղջիկը եկել էր այն հարազատ մարդկանց կողմից, որոնց համար նրանք մարտնչում էին, ծանր տառապանքներ կրելով։ Լիզայի արարքի մեջ արտահայտվում էր ժողովրդի հուզիչ, սրտագին խնամքը իր բանակի վերաբերմամբ։

Մագոյանը հիշեց ցերեկով իր նկատածը, թե ինչպես կարմիրբանակայինները հացի փշուրները որոնելով, իրենց գրպաններն էին թափ տալիս։ Գումարտակի համար Լիզայի բերած պաքսիմատը և բլիթները, իհարկե, քիչ էին, սակայն հրամանատարը մոտեցավ աղջկան և, բռնելով նրա ձեռքը, ասաց.

— Շնորհակալ եմ, սիրելի աղջիկ, — մենք գոհունակությամբ ենք ընդունում Ռոստովի կանանց նվերը։ Դա մեզ շատ հարկավոր է։ Ապա Մագոյանը խոսեց ուրիշ բաների մասին։

— Ասա, Լիզա, դու ի՞նչպես եկար մեզ մոտ մենակ, գիշեր ժամանակ, չվախեցա՞ր։ Չէ՞ որ եթե գերմանացիների ձեռքն ընկ-

նե՛ր, անմիջապես կգնդակահարեին քեզ։ Դու կյանքդ վտանգի ես ենթարկել, աղջիկ։

Կալինինը նկատեց, որ Լիդայի աչքերը փայլատակեցին։

Կյանքս,—հարցրեց նա,—իսկ եթե ձեր մարտիկները, դուք ինքներդ ամեն րոպե մեզ համար վտանգում եք ձեր կյանքը՞։ Քի՞չ կարմիրբանակայիններ են զոհվել։ Ես նույնպես ուզում եմ օգնած լինել նրանց, ովքեր իրենց կյանքը տալիս են ժողովրդի համար։

Լռություն տիրեց։ Լսվում էր, թե ինչպես ճթճթում է լամպի պատրույգը։ Դմիտրիևան նորից դիմեց Մաղոյանին.

— Դուք ինձ թույլ տվեք մնալ այստեղ,—կամաց խնդրեց նա,—տուն գնալ չեմ ուզում, ես կարող եմ ձեզ օգտակար լինել։

Գումարտակի հրամանատարը քիչ մտածեց։

— Ուզում եք օգնել մեր բժիշկների՞ն,—հարցրեց նա։

— Ամբողջ հոգով, ուրախացած համաձայնեց Լիդան։—Ես մինչև պատերազմը սովորել եմ դասընթացներում և կարող եմ վերքեր կապել։

— Շատ գեղեցիկ,—եզրափակեց ավագ լեյտենանտը։

Կալինինը աղջկան առաջնորդեց սանիտարական կետը և ներկայացրեց բժիշկ Պանովին։

Մաղոյանը հրամայեց բլիթները և պաքսիմատը բաժանել վիրավորներին։

ՉՈՐՐՈՐԴ ՕՐԸ

1.

Լիդան մնաց սանիտարական կետում։ Այնտեղ քիչ գործ չկար նրա համար։ Պանովը անմիջապես նկատեց նրա վարժ և ճարպիկ շարժումները և ասաց Սլավինային, որպեսզի օգնի այդ աղջկանը։

Վիրավորների գունատ, արյունաքամ դեմքերը, նրանց թափառուն, բորբոքված հայացքը և երբեմն կամաց, երբեմն բարձրաձայն հառաչները հուզեցին Լիդային և սկզբում նա, կարծես թե, քիչ շփոթվեց։ Նրա սիրտը լցվեց խղճահարության զգացմունքով։

Նկուղում պառկածների մեջ կար մի երիտասարդ մարտիկ,

ոլի կուրծքը վիրավորված էր սվինի հարվածից։ Լիդան Սլավինայի փոխարեն ինքը կապեց նրա վերքը։ Կարմիրբանակայինի դեմքը Լիդային միանգամայն մանկական թվաց և չկարողացավ դիմանալ, նա ասաց.

— Օլգա Միխայլովնա, ախր սա դեռ բոլորովին պատանի է։

Վարպետորեն փաթաթելով լայն վիրակապը, Սլավինան կամացուկ պատասխանեց.

— Այս տղան երեկ երեկոյան փրկել է գումարտակի հրամանատարի կյանքը։

Դա Կովալչուկն էր։ Երկու ժամից հետո նրա ուշքը տեղը եկավ և նա ջուր խնդրեց։ Լիդան զգուշությամբ բարձրացրեց նրա գլուխը և երկու կում ջուր տվեց նրան։

— Էլի տուր,— Կովալչուկը ագահորեն ձգտում էր դեպի բաժակը։

— Էլ չի կարելի։

— Աղջիկ, սիրելիս, մի կում էլ։

Դմիտրիևան կատարեց նրա խնդիրը։

— Ա՜խ, այրվում է այստեղս,— ծանր հառաչեց Կովալչուկը,— ձեռքով կուրծքը ցույց տալով։

— Զգույշ կաց,— ասաց Լիդան մարտիկին և բռնեց նրա ձեռքը։

Զինվորի հայացքը պտտվեց նկուղի կամարների վրա, մի րոպե ընկավ լամպերին, ապա նա նորից նայեց Լիդային.

— Ես որտե՞ղ եմ գտնվում։

— Սանիտարական կետում։

— Իսկ գումարտակը, ընկերնե՞րս։

— Ամեն ինչ կարգին է։ Ձեզ խոսել չի կարելի։ Դուք պետք է հանգիստ կենաք։

— Հանգի՞ստ,— կրկնեց նա, հանգիստ։

Ապա նրա ճակատին կնճիռներ գոյացան։ Նա մտածմունքի մեջ ընկավ և, կարծես, մի բան հիշելով, հազիվ լսելի ձայնով հարցրեց.

— Քույրիկ, մենք Ռոստովո՞ւմ ենք։

Լիդան տագնապ զգաց նրա ձայնի մեջ։

— Ռոստովում ենք։

Թեթև ժպիտ եկավ Կովալչուկի շրթունքներին։

— Շնորհակալություն քույրիկ, սա իմ քաղաքն է։

Մի ինչ-որ բան, կարծես, սեղմեց Լիդայի կոկորդը։ Ծանր վիրավոր մարտիկը ուրախանում էր, որ պառկած է հայրենի քաղաքի հողի վրա։ Լիդան փաղաքշանքով շոյեց նրա ձեռքը, Կովալչուկը լուռ էր։

— Քո անունն ինչ է։

— Ալեքսանդր։

— Դե լավ, Սաշա, այսօրվա համար բավական է ինչքան խոսեցինք։ Քնեք, ձեզ համար ավելի լավ կլինի։

Կովալչուկը նրա խոսքերում մայրական փաղաքշանք զգաց, նրան թվաց, թե այդ լավ աղջկա ներկայությունից հանդարտվում և հանգստանում է իր վերքի սուր ցավը։

— Էլի մի հարց, քույրիկ։

— Ի՞նչ է։

— Գերմանացիներին կայարանից հեռու են քշել։

— Այո։

Նա զգաց, որ վիրավորը էլի ինչ-որ բան է ուզում հարցնել, բայց սիրտ չի անում։

— Ասա, Սաշա, ինչ ես ուզում։

Վիրավորն իր բորբոքված, փորձող հայացքն ուղղեց դեպի աղջիկը.

— Գումարտակի հրամանատարը կենդանի՞ է։

Աղջիկը չհասցրեց պատասխանել։ Ետևից քայլեր լսվեցին։ Ետ շուռ գալով, նա տեսավ Մադոյանին։

— Կենդանի է, արծվիկս,— ջերմ շշնջյունով ասաց գումարտակի հրամանատարը և հակվելով դեպի Կովալչուկի գլուխը, համբուրեց նրա ճակատը։

— Որդյակս, եղբայրս, Սաշա ջան,— կամաց ասաց Մադոյանը։

2.

Դիսպետչերական սպասարկման շենքի պատերից այն կողմ մոլեգնում էր մարտը։ Եվ տարօրինակ էր թվում, որ այդ ժամանակ մի սենյակում, որի չորս կողմը կրակ էր տեղում, մի մարդ նստած աշխատում էր լրագրական թղթակցությունները

վրա։ Ագիտատոր Շունդենկոն կազմում էր «Ազատագրենք Ռոստովը» մարտական թերթիկի հերթական համարը։ Նրա մեջ պատմվում էր մարտիկների սխրագործությունների, Ալեքսանդր Կովալչուկի պանծալի արարքի մասին։

Թերթիկի կենտրոնում տեղավորված էր գումարտակի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ Օխապկինի թղթակցությունը։ Նա գրել էր. «Խփենք թշնամուն այնպես, ինչպես խփում է Օստապ Դանիլչենկոն։ Հետախույզ Դանիլչենկոն խնամքով է գործ ածում ամեն մի փամփուշտը։ Նա այդպես էլ ասում է. «Ինչքան փամփուշտ ունեմ, այնքան մահ կբերեմ ես գերմանացիներին»։ Երեկ վերջացավ Դանիլչենկոյի ռազմամթերքը։ Ի՞նչ արեց նա այդ ժամանակ։ Առաջին իսկ կռվի միջոցին մոտեցավ թշնամու զինվորներին ու խլեց նրանցից ձեռքի գնդացիրը։ Գերմանական գնդացրով մեր քաջարի հետախույզը երեկ ոչնչացրեց 12 գերմանացի։ Մարտիկ, դու նույնպես կարող ես այդպես խփել հիտլերականներին»,—կոչ էր անում Օխապկինը։

Ռազմամթերքի հարցը ամենասուր հարցն էր դարձել գումարտակում։ Այն հուզում էր ամենքին, թե՛ սպաներին, թե՛ զինվորներին։ Դանիլչենկոյի հնարագիտությունը օրինակելի սխրագործություն էր հանդիսանում։ Այդ պետք էր պարզ ու համոզիչ բացատրել մարտիկներից ամեն մեկին։

Դուռը բացվեց և շտապ մտավ Մաղոյանը։—Համարյա բոլոր հակատանկային հրազենները շարքից դուրս են եկել, իսկ գերմանացիները, իհարկե, նորից գրոհ կտան տանկերով։ Օխապկինը գտնվում է Սավելևի վաշտում։ Հարկավոր է, որ այնտեղ գնա նաև Լուպանդինը։

— Պարզ է, հասկանալի է,—և Շունդենկոն շուռ եկավ, որ գնա, սակայն հրամանատարը ետ պահեց նրան։

— Ես գիտեմ, ընկեր կապիտան, որ Դուք շատ լավ հասկանում եք մեր դրության լրջությունը։ Սակայն չեմ կարող չասել Ձեզ. հաշվի առեք ամեն ինչ—մարդիկ կիսաքաղց են և վատ սպառազինված, սակայն նրանց կամքը անսասան է։ «Նահանջ» բառն ամենաատելի բառն է նրանց համար։ Այնպիսի սպայի հետ, ինչպիսին Դուք եք, նրանք ավելի ուժեղ կզգան իրենց։ Ես Ձեզ վրա հույս ունեմ։ Տանկերը չպետք է անցնեն։ Այս վերջին խոսքերը նա ասաց առանձնապես շեշտելով։

Շունդենկոն լսում էր գումարտակի հրամանատարին, ուշադիր նրան նայելով։ Ինչքա՜ն փոխվել էր Մաղոյանը Ռոստովի այս մի քանի օրերի ընթացքում։ Դեմքը ձգվել էր, այտերը գունատվել էին։ «Նա ասում էր, թե մարտիկները կիսաքաղց են,—մտածում էր Շունդենկոն,—բայց ինքը՝ Մաղոյանը, բան կերե՞լ է այս քանի օրը»։

Իսկ Մաղոյանը կապիտանին ասելով՝ «ես հույս ունեմ ձեզ վրա», իր հերթին մտածում էր այն մասին, թե ինչպիսի ամուր մարդ է այս լենինգրադցի Շունդենկոն, որ երեկ իր համեստ բաժինը—պաքսիմատը տվել է հիվանդ կարմիրբանակայիններին։ Եվ ավագ լեյտենանտը նորից մտածեց այն մասին, թե ինչպիսի ուժեղ ոգի և կամք ունեն բոլշևիկ քաղաշխատողները, ինչպիսի անգնահատելի ծառայություն են մատուցել և մատուցում են իրեն Օխաշկինը և Շունդենկոն։

Կապիտանը գնաց։ Լուպանդինի մարտիկների մոտ կարելի էր գնալ այն ավերակների միջով, որտեղ, զանազան կետերում քողարկված, պառկած էին մեր հրաձիգները։ Նրանցից Շունդենկոն իմացավ, որ գերմանական տանկերն արդեն առաջ են խաղում դեպի ստորաբաժանման գրաված դիրքերը և նրանց ետևից գալիս են ավտոմատավորները։

Նա սկսեց շտապել, և պետք է ասել, որ ժամանակին տեղ հասավ։ Վճռական մոմենտին կապիտանի երևալը վստահություն ներշնչեց մարտիկներին, որ ճակատամարտը հաջող ելք կունենա։

— Ընկերներ,—լսեցին զինվորներն իրենց ծանոթ ձայնը,— պատրաստեցեք նռնակները և շշերը։ Գերմանացիներին ցույց կտանք, որ ռուսները շշերով կարող են այրել տանկերը։

Ոչ մի րոպե չկորցնելով, Շունդենկոն բարձրացավ ձեղնահարկը։ Այնտեղ գտնվում էին լեյտենանտ Լուպանդինի գնդացրորդները։ Նրանք պետք է ավտոմատավորներին բաժանեին տանկերից։ Կապիտանը պարզ խոսքերով մարտիկներին բացատրեց ստացված հրամանի նշանակությունը, կոչ արեց նրանց տոկուն լինել և հայտնեց, որ մեր զորամասերը մոտեցել են Ռոստովին։

Տանկերը գտնվում էին մեր հրազենների գրաված դիրքից մի քանի մետրի վրա։ Հրամանատարի ազդանշանով գնդացրորդները և հրաձիգները կրակ բաց արին։ Տանկերից կտրված հետ-

լերականները այս ու այն կողմ վազեցին փողոցում և ապա թողին ու ետ փախան։

— Շչերբո՛վ,—գոռաց Շունդենկոն։

Երկու առաջավոր մեքենաներն արդեն ծխով պարուրված վառվում էին։ Նրանցից մեկի մոտ գծագրվեցին գերմանացի տանկիստների ուրվանկարները, որոնք փախչում էին ապաստանելու համար։ Դանիլչենկոն նկատեց այդ։

— Ո՞ւր, ո՞ւր եք փախչում, քաջ տղերք,—կանչում էր նա։— Մեկ մեքենաների մեջ նստած մեզ վրա եք գալիս, մեկ էլ, երբ ձեզ մի թեթև կրակով հյուրասիրեցինք, եղած-չեղածը թողած փախչում եք։ Դա բանի նման չի։—Եզրափակեց նա անայլայլ դեմքով, ֆաշիստների ետևից գիպուկ գնդակներ ուղարկելով։

Լուպանդինի մարտիկներն իրենց դիրքերից ոչ մի մետր չզիջեցին թշնամուն։

Գերմանական տանկերն այս անգամ էլ չանցան։

3.

Երկու մարտիկներ հարցնում էին, թե որտեղ է բժիշկ Պանովը։ Սլավինայի այն հարցին, թե ինչ է հարկավոր նրանց, մեկը պատասխանեց.

— Կարևոր գործ ունենք բժշկական սպասարկության ընկեր կապիտանի հետ։

— Լսում եմ ձեզ,—առաջ գալով ասաց Սերգեյ Նիկոլաևիչը։

Զինվորներն ուրախացան։

— Մեր տղաները,—ասաց մի թիկնեղ կարմիրբանակային,—սկսել են զենք խլել գերմանացիներից և դրանով մենք լրացնում ենք մեր ռազմամթերքը։ Եվ ահա որոշեցինք, ընկեր բժիշկ, Ձեզ էլ բաժին հանել մեր ավարից։ Այս բաները ձեզ պետք չե՞ն լինի։

Մարտիկները Պանովի առաջ բաց արին գերմանական սանիտարական պայուսակները և բժիշկը տեսավ, որ այնտեղ կան այնպիսի դեղեր, որոնք չափից դուրս հարկավոր են սանիտարական կետին։

— Այս ինչպե՞ս ձեռք գցեցիք,—ժպտաց կապիտանը։

— Գերմանացի բժիշկներ ձեռքներս ընկան,—շուտափույթ պատասխանեց միևնույն թիկնեղ զինվորը։

— Լավ գործ եք արել, կեցցե՛ք,—բժիշկը ամուր սեղմեց նրանց ձեռքերը։

Մարտիկները գնացին։

Վրա հասավ երեկոն։ Գանովի թույլտվությամբ Դմիտրիևյան մեկնեց շտաբը։ Նրան դիմավորեց լեյտենանտ Կալինինը։

— Ես մի խնդրով եմ եկել ձեզ մոտ,—դիմեց նա լեյտենանտին,— վիրավորներին պաքսիմատ է հարկավոր։ Ես կարող եմ գնալ մեր փողոցը։

— Կարելի է,—պատասխանեց շտաբի պետը։ Եվ քիչ մտածելուց հետո ավելացրեց։—Միայն թե մենակ չեմ թողնի, ճանապարհը վտանգավոր է, ձեզ հետ կգա կարմիրբանակային Սորեկցովը։

Կալինինը կանչել տվեց Սորեկցովին և նա Դմիտրիևայի հետ գնաց հաց բերելու։

Մի քանի ժամից հետո Լիզան վերադարձավ։ Ամեն ինչ բարեհաջող էր անցել։ Աղջիկը, Սորեկցովը և նրանց հետ եկած խարտյաշ, 14 տարեկան պատանին բերին երեք կապոց պաքսիմատ և բլիթներ։

— Լսեցեք, Լիզա,—ասում էր Դմիտրիևային Մազոյանը,— Դուք ուղղակի առաջնակարգ ինտենդանտ եք։ Մեր գինարը, աստված վկա, պետք է սովորի Ձեզնից։

— Ինձ շնորհակալություն մի հայտնեք,—պատասխանում էր աղջիկը,—այլ մեր փողոցի կանանց, Ռոստովի բնիկներին, որոնք անհամբերությամբ սպասում են ձեզ։

— Կարմիրբանակային շնորհակալություն հայտնեցեք նրանց իմ կողմից։ Մենք չենք մոռանա նրանց սրտագին հոգատարությունը։

Մազոյանը մոտեցավ տղային։

— Իսկ այս զինվորին որտեղ եք հավաքագրել,—հարցրեց նա Դմիտրիևային։

— Մեզ մոտ, Լենինյան ավանում,—բացատրեց Լիզան։ Սա Յուրա Տարասովն է, մեր հարևանի տղան։ Նրա հայրը ռազմաճակատումն է։ Յուրան շատ լավ տղա է։

— Ինարկե, որ կարողացել է անցնել մեր կողմը գալ, ուրեմն անպայման լավ տղա է,—կատակեց Մազոյանը։

Լիդան նայեց Ցուրային։ Նա իր հայացքով հիշեցրեց նրան իր խնդիրքը։

— Ուզում է մեզ մոտ մնալ,—ասաց նա հրամանատարին։

— Մեզ մոտ մնալ։ Տղան չպետք է մեզ մոտ մնա։ Ցուրա, թանկագինս, մեզ մոտ հո Արտեկի պիոներական լագերը չէ։ Հաց բերել ես, շատ շնորհակալ ենք, իսկ քո կյանքը վտանգելու իրավունք չունենք։ Ստրելցով,—կանչեց Մադոյանը,—Ցուրա Տարասովին տար հասցրու մինչև իրենց տունը։

Նրանց հետ միասին դիսպետչերական սպասարկման շենքից դուրս եկավ նաև Լիդան։

— Լավ աղջիկ է,—սրտանց ասաց Մադոյանը։

— Համեստ է,—նկատեց Կալինինը։

--Առհասարակ, Ալյոշա, հացի գործը գոնե մի քիչ լավացավ։

— Այո, հեշտացավ, բայց ռազմամթերքը…

— Ռազմամթերքի գործն էլ կհեշտանա,—հաստատ ասաց Մադոյանը։ Դանիլչենկոն ճիշտ ճանապարհ ցույց տվեց զինվորներին, թե մեր դրության մեջ ինչպես պետք է գործել։ Գրոհային խմբակներ պիտի ստեղծել։ Նրանք գերմանացիներից զենք կգրավեն և այդ նույն զենքով էլ կոչնչացնեն նրանց։ Մենք չորս օր դիմացանք Ռոստովում և կդիմանանք մինչև լիակատար հաղթանակը։

Նա արագ քայլում էր անկյունից-անկյուն։ Կարճ ժամանակ լռելուց հետո, նա ասաց.

— Ես Ձեզ խնդրում եմ, ընկեր Կալինին, բոլոր ստորաբաժանումներին այսպիսի հրաման տալ. «Հենց որ վերջանա ռազմամթերքը, թշնամուն խփել նրա զենքով»։

4.

Ստրելցովը Ցուրային հասցրեց մինչև իրենց տունը։ Նրա անհանգստացած մայրը որդուն դիմավորեց, ասելով.

— Տանջեցիր դու ինձ, սիրտս արյուն է լցվում։ Դա ինչ քո տեղն էր,—ասաց նա, գլխով ցույց տալով կայարանի կողմը։

Ցուրան առանց շտապելու հանեց հին բաճկոնը, հոր մաշված գլխարկը և 13-ամյա քրոջ սքանչացած հայացքի տակ անցավ հաջորդ սենյակը։

— Ինչու ես այդպիսի բան ասում, մայրիկ, այնտեղ է իմ տեղը,— ցածրաձայն, բայց վճռական շեշտով ասաց տղան։

Աննա Սերգեևնան զարմանքով նայեց նրան։ «Մի՞թե սա Յուրան է, ե՞րբ այդպես դարձավ»։ Նա թե՛ տագնապով և թե՛ հաճույքով էր տեսնում որդու բնավորության այդ նոր, իրեն անծանոթ գծերը։

— Այնտեղ կռվողները տղամարդիկ են, զինվորներ, իսկ դու երեխա ես։

— Երեխա՞։ Հետաքրքիր է, մայրիկ, թե դու քանի՞ տարի ես քեզ համար «երեխա» կլինեմ,— հարցրեց Յուրան և ինքն էլ պատասխանեց։— Երևի ամբողջ կյանքում։

Մայրը ժպտաց, նայեց քրոջը և հավանություն կարդաց նրա աչքերում։ Երկու կարճ, գունաթափ կապույտ ժապավենով կապված հյուսերով աղջիկը իր խոշոր, փայլուն աչքերով նայում էր Յուրային և մտածում, թե ի՜նչ լավ, քաջ եղբայր ունի ինքը։

— Նրանք, որ կռվում են մեր ազատության համար, պառկած են այնտեղ չոր քարերի վրա,— ասում էր տղան,— գիշեր-ցերեկ ջրի մեջ են, գնդակոծության տակ, շրջապատված գերմանացիների կողմից, քաղցած։ Ես նայում էի նրանց, մայրիկ, և մտածում հայրիկի մասին։ Չէ՞ որ նա էլ հիմա նրանց նման մի ինչ-որ տեղ կրակի մեջ է... Մի՞թե մենք չպետք է օգնենք նրանց։

Աննա Սերգեևնան գլխահակ լուռ լսում էր որդուն։

— Ճիշտ է, Յուրա, ճիշտ է,— եղբոր ասածներին հավանություն տվեց Տանյան։

«Նա էլ եղբոր նման է»,— ուրախանալով իր մտքից, մտածեց մայրը։ «Հորն են քաշել, Տարասի սերունդն է, իր ասածից, բռնած ճանապարհից շեղել չես կարող»։

Յուրան համոզիչ էր խոսում և նրան առարկել դժվար էր։ Աննա Սերգեևնային մի ակնթարթ պատկերացավ իր ամուսնու քամուց խանձված խիստ դեմքը։ Ահա ինքը մոտենում է նրան, իր գլուխը դնում նրա լայն կրծքին և երջանկության մեջ անձայն լաց է լինում։ Իր այտերով արցունքներ են հոսում և ինքը Նիկոլային պատմում է, թե ինչպես իրենց Յուրան գնաց շրջապատված մարտիկների մոտ ու հաց տարավ նրանց։ Ամուսնու խոժոռ դեմքը ուրախությունից պայծառանում է, և ինքը տես-

նում է, թե ինչպես նրա աչքերի մոտ կուտակվում են իրեն այնքան լավ ծանոթ կնճիռների բարակ գծիկները: Այո, Նիկոլային դուր է գալիս Յուրայի արարքը, հայրը գոհ է իր որդուց:

— Նրանք քեզ ի՞նչ ասացին,— կամացուկ հարցրեց Տանյան:

— Կարմիրբանակային շնորհակալություն հայտնեցին հացի համար:

— Ի՞նչ տեսք ունեին նրանք, Յուրա:

— Մի՞թե դու չես հիշում նրանց,— զարմացած հարցրեց տղան, այ թե տարօրինակ աղջիկ ես: Նրանք շինել են հագած ու գլխարկ, ինչպես որ հայրիկը. նրա նման պարզ մարդիկ են:

— Իսկ ուսադիրներ տեսա՞ր:

— Տեսա:

— Մե՞ծ ուսադիրներ են:

— Մեծ են, Տանյա, և գեղեցիկ: Աստղեր կան նրանց վրա:

— Իսկ առաջ ուսադիրներ չկայի՞ն,— հարցրեց աղջիկը:

— Չկային,— պատասխանեց Յուրան, հաճույքով օգտվելով քրոջը ռազմական գործում ունեցած իր գիտելիքները ցույց տալու հնարավորությունից: Առաջ ուրիշ նշաններ կային:

— Դուռը ծեծեցին մեկ, երկու, երեք անգամ: Դա պայմանական նշան էր: Բայց և այնպես Աննա Սերգեևնան մինչև բաց անելը հարցրեց.

— Ո՞վ է:

— Մենք ենք:

Ձայնից ճանաչեցին հարևանին, ծեր մեքենավար Ալեքսանդր Ստեպանովիչ Խիժնյակին: Մայրը դուռը բաց արեց: Շեմքին Խիժնյակի կողքին կանգնած էր նրա թոռը, Յուրայի հասակակից, թուխ դեմքով, սևաթույր, քիչ շեղ աչքերով Գրիշան: Հարևանները ներս եկան:

— Հանգիստ չի տալիս,— թոռանը ցույց տալով, ասաց ծեր մեքենավարը:— Գնանք հա, գնանք: Յուրկան,— ասում է,— եկել է:— Նա,— ասում է,— մեզ կպատմի, թե մերոնք ինչպես են կռվում կայարանում:

Աննա Սերգեևնան մոտ քաշեց աթոռը: Խիժնյակը աղմուկով նստեց և վերարկուի կոճակներն արձակեց:

— Ես էլ, ճիշտ ասած, անհամբեր եմ, ուզում եմ քեզնից

իմանալ, թե ինչ նորություն կա,—ասաց նա, դառնալով դեպի Յուրան։—Դե պատմիր՝ տեսնենք։

Յուրան մոտ եկավ, վերնաշապիկն ուղղեց և բավականությամբ նկատելով Գրիշայի ուշադիր հայացքը, գործնական մարդու նման բացատրեց.

— Պատմելու շատ բան չունեմ, քեռի Սաշա։ Շատ ծանր է կռիվը։ Գերմանացիներն օղակը սեղմում են։ Մարտիկներն ուտելու բան չունեն։ Մեր հացն ընդունեցին, շնորհակալություն հայտնեցին։ Ես կարծում եմ էլի պետք է տանել։

Յուրան լռեց։

— Այդպե՞ս ուրեմն,—ծոր տվեց մեքենավարը։—Իսկ Լիդան որտեղ է։

— Նա սանիտարական կետում մնաց, վիրավորներին է խնամում։

Խիժնյակը մի պահ մտածմունքի մեջ ընկավ, ապա հայացքն ուղղեց Տարասովային։

Քո տղան ճիշտ է ասում։ Պետք է նորից ուտելու բան տանել, թեկուզ մեր ամենավերջին ունեցածը։

— Հարկավո՛ր է, Ստեպանիչ, անպայման հարկավոր է,—համաձայնեց կինը։—Նրանք քաղցած են այնտեղ, մեր հարազատները...

Այդ ժամանակ Յուրան ինչ-որ բանի մասին պայմանավորվում էր Գրիշայի և Տանյայի հետ։

— Մենք կգնանք, պապի՛կ,—հայտարարեց մեքենավարին իր թոռը։

— Գնացե՛ք, երեխեք։

Աննա Սերգեևնան տաք շալով փաթաթելով Տանյային, խստորեն ասաց նրան.

— Դու Լեխաչովենց տնից այն կողմ չգնաս։

Երեխաները, մի բակից մյուսն անցնելով, մտնում էին հարևանների տները։ Յուրան նրանց պատմում էր մարտիկների հետ ունեցած իր հանդիպման, զինվորների ծանր վիճակի մասին։

Եվ մարդիկ նորից իրենց վերջին կտոր սև հացը բերում էին զինվորների համար։

Պատանիները մեկը մյուսի ետևից վերադարձան։ Նրանցից

ամեն մեկը ինքնաբավականությամբ սեղանի վրա դարսում էր հավաքած մթերքները։ Ծերժնյակը գոհունակությամբ նայում էր Տարասովային։

— 15 կիլոգրամ կլինի։

— Ես էլ կարծում եմ կլինի։

— Կեցցեք, երեխաներ,—գոհունակությամբ ասաց մեքենավարը։

Ապա նա դարձավ դեպի տանտիրուհին։

— Լիզան այստեղ չէ, Աննա Սերգեևնա, հարկ կլինի, որ Յուրան վաղը նորից գնա։ Դու մի հուզվիր։ Ես էլ կգնամ նրա հետ։

Կինը ոչինչ չպատասխանեց։

— Ես էլ գամ ձեզ հետ,—խնդրեց Գրիշան։

Մեքենավարը դարձավ դեպի թոռը։ Նրա պատասխանը զվարթ ու հանգստացուցիչ էր։

— Լավ, դու էլ կգաս մեզ հետ, Գրիշատկա։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՕՐԸ

1.

Փետրվարի 12-ի առավոտյան Լենինյան ավանում Պրոֆսոյուզնայա փողոցում երևացին գերմանական երկու տանկ։ Թրթուրները դղրդացնելով, նրանք անցնում էին լուռ, անձայն, տների կողքով։ Տանկային թնդանոթների փողերը սպառնագին դառնում էին մի պատուհանից դեպի մյուսը։

Փողոցի կեսն անցնելով, տանկերը դանդաղեցրին իրենց ընթացքը։ Առաջին մեքենայի դռնակը շառաչյունով բացվեց և այնտեղից երևաց սպայի գլուխը։ Գերմանացին հեռադիտակը մոտեցրեց աչքերին և սկսեց ուշադիր դիտել փողոցը։ Ապա գլուխն իջեցրեց և հատու հրաման արձակեց.

— Վայտեր։

Մեքենաների ընթացքն արագացավ։ Նրանք ուղղվեցին դեպի «Գիգանտ» տունը։ Այդ ժամանակ մի փոքրիկ տան դարպասի տակից ամայի փողոցը դուրս վազեց մի մեծ շուն։ Տանկերը տեսնելով, շունն անբարյացակամորեն նայեց նրանց և սպառնագին մռռաց։

Առաջին մեքենայի վրա երևաց սպայի գլուխը։ Նա դար-

ձախ շան կողմը, պարաբելլումը ուղղեց նրա վրա և կրակեց: Շունը կողկողձալով ցած ընկավ, ձգվեց և անշարժացավ: Գերմանացին ժպտաց և իջավ մեքենայի մեջ:

Տանկերը մոտեցան «Գիգանտ» տանը և կանգ առան այն ձորակի եզրին, որը Լենինյան ավանը բաժանում է Վերխնե-Գնիլովսկայա ստանիցայից:

Սպան դուրս եկավ տանկից և քիչ հեռացավ: Նրա հեռադիտակի ապակիների մեջ անդրադառնում էին մոտիկ բարձրությունը և իրար սեղմված փոքրիկ կավե տնակները: Սպան ինչ-որ բան ասաց, տանկիստները թնդանոթների փողերն ուղղեցին դեպի Վերխնե-Գնիլովսկայան:

— Ֆայեր[1],—գոռաց էսէսականը:

Թնդանոթները խլացուցիչ որոտ արձակեցին: Այդ միևնույն ակնթարթում ձորակի հակառակ կողմից ծխի քուլաներ բարձրացան: Տների պատերը, արկերից վիրավոր՝ փլչում էին, օդի մեջ էին թռչում գերանների կտորներ, մանկական մահճակալների բեկորներ, քամին բերում էր աղեկտուր կանացի ճիչեր: Ինչ-որ մեկը թույլ, նվաղող ձայնով օգնություն էր կանչում.

— Մայրի՜կ, մայրի՜կ:

Տանկիստները քիչ դեպի աջ դարձրին թնդանոթների փողերը:

— Ֆայեր,—նորից հրամայեց սպան:

Թնդանոթները նորից որոտացին. էլի երկու տուն բոցավառվեց:

Սպան բարձրացրեց հեռադիտակը.

— Ֆայեր:

Վառվող տնակներից մեկի մոտ երևաց երեխան գրկին մի կին: Երերալով նա ընկավ, ապա վեր կացավ և, իրեն կորցրած, սկսեց չորս կողմը նայել: Էսէսականը նկատեց նրան.

— Ֆայեր:

Ծխի սյուն բարձրացավ այն տեղում, որտեղ կանգնած էր կինը:

Տանկերը մի քանի րոպե ռմբակոծում էին Վերխնե-Գնիլովսկայայի տները, այն ավանի, որի մինչև չորս օր առաջ

---

[1] Կրակ:

Մաղոյանի մարտիկները ներխուժել էին կայարան։ Ժամացույցին նայելով, գերմանացին պատյանի մեջ դրեց հեռադիտակը, գրպանից հանեց մի կտոր շոկոլադ և առանց շտապելու սկսեց ծամել։

Զորակի հակառակ կողմից հառաչներ լսվեցին։

— Շատ լավ,— ասաց էսէսականը տանկիստներին։

Նա հանեց շոկոլադի երկրորդ կտորը և ուտելուց հետո դանդաղ գնաց դեպի մեքենան։ Տանկերն աղմկեցին ու հետ դարձան դեպի Պրոֆսոյուզնայա փողոցը։ Վերխնե-Գնիլովսկայան կրակի մեջ էր։

2.

Անցնում էր պաշարման 5-րդ օրը։

Մաղոյանի հրամանով կազմված գրոհային փոքրիկ խմբակները թաքուն անցնում էին գերմանացիների թիկունքը և հանկարծակի հիտլերականների վրա հարձակվելով՝ ավտոմատներ և փամփուշտ էին խլում նրանցից։ Սպա Ինկաևի խմբակի խիզախ մարտիկները, ձեռնակռվի վերածված փողոցային մի քանի մարտերից հետո, գումարտակն էին վերադառնում, սպանված էսէսականներից վերցված ռազմամթերքով։

Սերժանտ Կրավչենկոն մի խումբ զինվորների հետ գերմանացիներից խլեց երկու գնդացիր։ Իրենց ստորաբաժանումը վերադառնալիս՝ խիզախ մարտիկները հանդիպեցին թշնամու տանկին։ Մարտ սկսվեց։ Գերմանացի տանկիստները ուղիղ նշանառությամբ կրակում էին սերժանտի գնդացրի վրա։ Մարտիկներն անսասան մնացին։ Նրանք նռնակներով խփեցին տանկը և կրակելով սկսեցին նահանջել դեպի կայարանը։

Պահեստների մոտից անցնելիս Կրավչենկոն հանկարծ իրենից ոչ հեռու տեսավ գետնի վրա սողացող երեք մարդ։ Սերժանտը նշան առավ ավտոմատով, կանգնեց և սկսեց դիտել անծանոթներին։ Զգաստ դիրք բռնեցին նաև նրա ետևից գնացող մարտիկները։

Այդ անծանոթ մարդիկ մոտենում էին։ Կրավչենկոն նկատեց նրանց քաղաքացիական հագուստը, սակայն դեռևս հավատացած չլինելով, որ տեղացի բնակիչներ են, սևեռուն հայացքով հետևում էր նրանց։ Նրանք շատ անվարժ էին սողում, բա-

վական բարձրանում էին գետնից, կրծքով հենվելով ինչ-որ կապոցների։ Այդ դանդաղ, անվարժ շարժումները համոզիչ կերպով վկայում էին, որ դրանք զինվորականներ չեն։ Երևում էր, որ առաջին երկուսը տղաներ են։ Նրանցից մեկին ճանաչելով, Սարելցովը շատ զարմացավ և ուրախացավ։

— Սա Յուրկա Տարասովն է, որ կա,— դարձավ նա դեպի սերժանտը։

— Ի՞նչ Յուրկա,— չհասկացավ Կրավչենկոն։

— Այստեղացի տղան,— ոգևորված ասաց Սարելցովը։— Նա արդեն մի անգամ եղել է մեզ մոտ, հաց է բերել։ Քաջ տղա է։

Եվ դառնալով մարտիկներին, ավելացրեց.

— Գումարտակի հրամանատարից խնդրում էր, որ իրեն թույլ տա մնալ գումարտակում։

Խիժնյակը և նրա պատանի ուղեկիցները ոտքի կանգնեցին։

— Բարև, պարտիզան,— սիրալիր ողջունեց Յուրային Սարելցովը։

— Բարև,— աշխույժ պատասխանեց տղան և ամուր սեղմեց նրա մեկնած ձեռքը։

— Մի տես Յուրան ինչ լավ ծանոթներ ունի այստեղ,— ասաց մեքենավարը իր թոռանը։ Թողնելով, որ Խիժնյակն առաջ անցնի, երեխաները մի կողմ կանգնեցին։

— Մենք նորից ենք մթերք բերել ձեզ համար,— ասաց Ալեքսանդր Ստեպանովիչը։— Մարդիկ ինչ-որ կարողացան՝ հավաքեցին և մեզ հանձնարարեցին բերել ձեզ համար։ Ընդունեցեք, ինչ որ ժողովրդի կամքով...

Կրավչենկոն նայեց Խիժնյակին, նրա բարի աչքերին և արծաթազօծված մորուքին։ Մեքենավարի վերարկուն ցեխոտ էր։ Ծերունին հևում էր։

— Ի՞նչ նեղություն եք տվել Ձեզ, հայրիկ,— ասաց Կրավչենկոն,— Ձեր առողջությունը, երևում է, որ թույլ է։

— Ես առանց ձեզ թույլ կլինեի, որդիս, իսկ դուք որ եկաք, ուժ եկավ վրաս։ Հիմա թեկուզ հենց այս րոպեին կարող եմ շոգեքարշ բարձրանալ։

— Դուք մեքենավա՞ր եք։

— Մեքենավար եմ, որդիս։

— Բայց և այնպես Ձեզ համար շատ վտանգավոր է այս-

տեղ գալը, հայրիկ,— հայացքը հեռացնելով՝ ասաց Կրավչենկոն։— Փոքրիկները կբերեին հացը, նրանց համար այնքան վտանգավոր չէ։

— Լավ, դու ինձ դաս մի՛ տար, այ տղա,— ասաց Խիժնյակը։— Գուցե ես էլ դեռ մի բանի պետք կգամ ձեզ մոտ։ Ես այստեղ ամեն մի քարի կտորը ճանաչում եմ։

— Դուք մի՛ նեղանաք, ես հենց էնպես ասացի։ Իսկ մթերքների համար շատ ու շատ շնորհակալ ենք։

Նա սեղմեց մեքենավարի ձեռքը, մոտեցավ երեխաներին։ Սերժանտը նոր միայն նկատեց, որ Տարասովի ձեռքին գերմանական ավտոմատ կա։

— Էհե՛,— բացականչեց Կրավչենկոն,— պարտիզանները լիակատար սպառազինությամբ են եկել։ Սա քեզ որտեղի՞ց, Յուրա։

— Մի սպանված գերմանացուց վերցրի, ընկեր սերժանտ,— ասաց տղան, աշխատելով զինվորական զեկույցի ձևով արտասանել իր խոսքերը։

— Իսկ ավտոմատ բանեցնել գիտե՞ս,— հարցրեց Սորեկցովը։

— Դուք կարող եք շնորհավորել նրան,— ասաց մեքենավարը զինվորներին։ Հենց նոր նրա ավտոմատը թաթախվեց...

— Իսկապե՞ս,— զարմացան զինվորները։

— Կեցցե՛ս, տղա։

— Իսկ ինչպե՞ս պատահեց այդ,— հետաքրքրվեցին նրանք։

— Հենց այնպես։ Մենք անցնում էինք այրված տան միջով,— սկսեց պատմել Խիժնյակը։ Ավտոմատն արդեն նրա ձեռքին էր։ Մեկ էլ լսեցինք մի մոտոցիկլի ձայն։ Տեսնենք՝ մի գերմանացի է, շտապում է գնալ ինչ-որ տեղ։ Կորանք,— մտածեցի ես,— իսկ Յուրկան որ ավտոմատից չկրակե՜ց գերմանացու վրա. Նա մի կողմ թռավ, մոտոցիկլը՝ մյուս կողմ։ Լավ էր, որ մոտիկ ուրիշ գերմանացիներ չկային։ Մենք մոտ վազեցինք և սպանվածի պայուսակից վերցրինք ահա այս փաստաթղթերը։

Մեքենավարը մի փաթեթ թուղթ մեկնեց սերժանտին։ Կրավչենկոն ընդունեց թղթերը և մոտեցավ Յուրային։

— Կեցցե՛ս, քաջ տղա,— շնորհավորեց նա պատանուն։ Դու իսկական հետախույզ ես։

Յուրան ուզեց ինչ-որ բան ասել, բայց նրա կողքին կանգ-

նած Գրիշկան այնպես ամուր կսմթեց ձեռքը, որ նրա լեզուն կապ ընկավ ու նա լռեց։

— Դե՛, խնդրեմ, մեր գլխի վրա տեղ ունենք,— ասաց Կրավչենկոն։— Գնանք հրամանատարի մոտ։

Ամենքը գնացին դեպի դիսպետչերական սպասարկման շենքը։

3.

Հիտլերականների նոր փորձը՝ տանկերի և հրետանու կրակով գումարտակին դուրս մղել իր դիրքերից՝ կատարելապես ձախողվեցին։ Այն ժամանակ գերմանական հրամանատարությունը ինքնաթիռներ ուղարկեց Մաղոյանի գումարտակի դեմ։

Դիմադրության չհանդիպելով, ֆաշիստ օդաչուներն սկսեցին փոքր բարձրությունից ռումբեր տեղալ գումարտակի դիրքերի վրա։ Մարտիկները պատսպարվեցին ավերակների մեջ։ Երբ ինքնաթիռները հեռացան, գերմանացիները նորից առաջ ուղարկեցին ավտոմատավորներին։ Նորից կատաղի գոտեմարտ սկսվեց, և հիտլերականները հետ շպրտվեցին։

Անդորրություն տիրեց։

— Դե՛, բարեկամներս, ձեր տուն գնալու ժամանակն է,— ասաց Մաղոյանը տղաներին, որ ամբողջ ժամանակ շտաբում էին գտնվում։ Այսօր կատաղի կռիվ է լինելու, ձեզ գումարտակում մնալ չի կարելի։

— Ընկեր գումարտակի հրամանատար...— սկսեց խոսել Յուրան, սակայն, երբ հայացքը դեմ առավ Մաղոյանի աչքերին, նա գլուխը կախեց։

— Լավ տղա է,— մտածեց գումարտակի հրամանատարը և խղճաց Յուրային։ Սպան բռնեց նրա ուսերից և իր մոտ քաշեց։

— Դու մի՛ նեղանա, որդի՛ս։ Հարկավոր չէ։ Դու մեծ տղա ես, ամեն բան հասկանում ես։ Դու ինչի՞ համար մնաս այստեղ։ Մարտիկների համար հաց ես բերել, դա արդեն քաջագործություն է, իսկական մարտական սխրագործություն, Յուրա։ Դուցե էլի բերեք, դա շատ կարևոր է։

Մաղոյանը շոյում էր Յուրայի գլուխը և հիշում իր որդուն։ «Հեռու է իմ Սերյոժան, ջանիկս»։ Սակայն այն միտքը, որ իր որդին հարազատ Երևանում է, մոր և քրոջ կողքին, ջերմացրեց նրա սիրտը։

— Եվ հետո գիտե՞ք ինչ,— դարձավ նա պատանիներին։— Ձեր հայրերը ռազմաճակատում են, նրանք ձեզ թողել են տանը, որպես իրենց ժառանգորդները, իրենց փոխանորդները, որպես տան պահապան տղամարդիկ։ Ձեզ վստահել են, դուք էլ պիտի արդարացնեք այդ վստահությունը։ Բանակ կգնաք, երբ որ չափահաս կդառնաք։

— Ընկեր գումարտակի հրամանատար,— կամաց ասաց Յուրան,— ես կարդացել եմ Պավել Կորչագինի մասին գիրքը։ Նա էլ է եղել ռազմաճակատում, կռվել սպիտակ-գվարդիականների ու գերմանացիների դեմ։ Իսկ նա իմ տարիքին էր այդ ժամանակ։

— Տեսնո՞ւմ ես,— մտածեց Մազոյանը,— ինչ դիվանագետ է։

Գումարտակի հրամանատարը ինքն այդ րոպեին հիշեց ռազմաճակատում կռվող մի ուրիշ տղայի մասին։ Նա հիշեց այն փոքրիկի մասին, որ ծառայում էր 11-րդ բանակի հայկական գնդում։

— Այն ուրիշ ժամանակ էր, Յուրա, հիմա ուրիշ ժամանակ է։ Մեր երկիրը շատ ավելի ուժեղ է հիմա։ Դու և քո ընկերները այժմ մեծ գործ ունեք կատարելու թիկունքում։ Դե եկեք միասին բարև ասենք։ Էլի շուտով կհանդիպենք,— ավելացրեց գումարտակի հրամանատարը։

Հանկարծ նա հիշեց.

— Իսկ գերմանացուն սպանելու և նրա փաստաթղթերը բերելու համար մեր հրամանատարությունն անպայման կպարգևատրի քեզ, Յուրա, անպայման։ Դու հերոս հետախույզ ես։

Ջերմ հրաժեշտ տվեց տղաներին նաև մեքենավարը։ Մազոյանը Խիժնյակին թույլատրեց մնալ գումարտակում։ Երկաթուղայինը լավ գիտեր շրջակայքը և միշտ կարող էր օգտակար խորհուրդներ տալ։

Յուրային և Գրիշային ճանապարհ գցելու գնաց կարմիրբանակային Ռախմանովը։

4.

Անդորրը երկար չտևեց։ Շուտով վերևում լսվեց մոտորների հռնդյունը։

— Էլի թռչում են,— ասաց Ստրելցովը։

Մարտիկները վեր նայեցին։ Քաղաքի վրայով ցածրիկ սահում էին գորշ ամպերը։ Նրանց արանքներում «Մեսսերշմիտները» երևացին։ Ցած թռչելով, նրանք սկսեցին ռմբակոծել գումարտակի դիրքերը։

Խուլ պայթյուններ լսվեցին։ Տեղ-տեղ վեր ցատկեցին քարի և փայտի կտորների հետ խառնված հողակույտերը։ Ավերված պատերը փուլ էին գալիս։ Հրդեհներ առաջ եկան։

Գումարտակի դիրքերի շուրջը տեղավորված պահեստներում և հենց ուղղակի փողոցի ասֆալտի վրա թափված էր մեծ քանակությամբ քարածուխ։ Ածուխը վառվում էր։ Կրակի հսկա լեզուները ձգվում էին դեպի մարտիկները։ Ձյունը սևացել էր և սկսել էր հալվել։ Ինչպես երևում է, ինչ-որ մոտիկ տեղ գերմանացիների թողած պայթուցիկ նյութեր կային պահված։ Նրանք պայթեցին և մի քանի րոպե շարունակ դժոխային որոտը բռնել էր կայարանը։

Քամին կրակի նոր օջախներ էր առաջ բերում։ Հրդեհը ծավալվում էր։ Ծխի ալիքները երկինք էին բարձրանում։ Մոլեգնում էր կրակը, փայտե շենքերը ճարակելով։ Շնչելը դժվարացել էր։

Գումարտակի դրությունը սաստիկ վատացավ։ Կարմիրբանակայինների վրա էին գրոհում ոչ միայն գերմանական տանկերը, ոչ միայն թափվում էին թշնամու ականներն ու արկերը, այլև ամեն կողմից մոտենում էր կրակը։

Փորձելով օգտագործել հրդեհը, գերմանացիները կատաղորեն հարձակվում էին կայարանի հրապարակի վրա, սակայն ամեն անգամ նրանց հետ էր մղում մեր զինվորների պողպատե պարիսպը։

Կրակը մոտենում էր, մարտիկներից խլելով հողի նորանոր կտորներ։ Վաշտերն ավելի ու ավելի մոտենում էին իրար։ Գումարտակի տեղամասը ժամ առ ժամ կրճատվում էր։ Գերմանացիները չարախնդությամբ ուժեղացնում էին կրակը, արդեն հաղթող համարելով իրենց։

Տագնապով բաբախում էին կայարանի պաշտպանների սրտերը։ Պաշարման 5-րդ օրը ամենածանր փորձությունները բերեց նրանց։ Թվում էր, թե գումարտակը կուլ է գնալու կրակին։ Սակայն, պատերազմի դաժան առօրյայում կոփված մարտիկները

չէին կորցնում հաղթանակի հավատը։ Նրանք, հուսով լի, նայում էին գումարտակի հրամանատարին։

Մաղոյանը երևում էր ամենավտանգավոր տեղերում։ Այդ սրտապնդում էր զինվորներին, կրկնապատկում նրանց ուժերը։ Այդ բարձրահասակ, թխադեմ, վճռական ու պարզ աչքերով մարդու մոտենալուց, կարծես թե, հոգնածությունն իսկ փախչում էր, և մարտիկները նոր ուժ էին առնում։

Երբ Մաղոյանն իմացավ, որ ականի բեկորով սպանված է լեյտենանտ Սավելյևը և ջոկատի հրամանատարությունն ընդունել է ավագ Կուրասովը, շտապեց այդ ստորաբաժանումը, որպեսզի տեղում օգնի ավագին։ Ավագ լեյտենանտը մարտիկների հետ միասին կանգնած էր կրակի գծի վրա և ետ էր մղում համառորեն գրոհ տվող գերմանացիներին։ Ինչպես վաշտի հրամանատարը, կրակի մեջ էին նաև Շունգենկոն, Օխապկինը, Կալինինը։ Նրանցից ամեն մեկը զինվորների հետ էր, ոգեշնչում էր նրանց իր խոսքով, առաջ էր տանում իր օրինակով, և գումարտակը դրա հետևանքով ամուր պահում էր իր դիրքերը։ Թե զինվորները և թե սպաները հասկանում էին, որ այս ճակատամարտում էր հենց որոշվում այն օպերացիայի բախտը, որն իրագործելու համար նրանք եկել էին Ռոստով։

Հրդեհի բոցն ավելի ու ավելի մոտենում էր, դրությունը հուսահատական էր դառնում։ Դրսից գործում էին թշնամու տանկերը, թնդանոթները, վեցփողանի ականանետները, գնդացիրներն ու ավտոմատները. օդից՝ «Մեսսերշմիդտները», իսկ ներսից՝ կրակը։ Հին դիրքերում մնալն այլևս անհնարին էր։ Նույնիսկ եթե թշնամին ոչինչ անել չկարողանար, Մաղոյանի հերոսները կոչնչանային կրակի մեջ։

Պետք էր շուտափույթ կերպով նոր որոշում ընդունել։ Այն ժամանակ գումարտակի հրամանատարին օգնության եկավ ծեր մեքենավարը։

— Այստեղ, այս երկաթգծերից այն կողմը,— ասաց Խիժնյակը Մաղոյանին,— այս սպիտակ ցանկապատի ետևից, սկսվում են Լենինի անվան շոգեքարշերի նորոգման գործարանի ցեխերը։ Այնտեղ գերմանացիներ քիչ կան։ Մեծ ցեխեր են, հաստ, հիմնական պատերով։ Ինչքան ասես, ջարդված մեքենաներ կան այնտեղ, շատ լավ կարելի է քողարկվել։ Այնտեղ գնալը դժվար

չէ, կարելի է անցկենալ ցանկապատի վրայով. ուրիշ ճանապարհ էլ կա՝ դարպասով, ես գիտեմ ճանապարհը։

— Հայրիկ, հարազատս, ի՜նչ լավ ես մտածել,— պատասխանեց Մադոյանը և Կալինինին դառնալով, ասաց.

— Այսպիսի օգնականներ ունենալով՝ մենք երբեք չենք կորչի։

Մի քանի րոպեից հետո գումարտակի հրամանատարը դիսպետչերական սպասարկման շենքում հավաքեց իր սպաներին։

— Ընկերներ, պայքարը շարունակելու միայն մի ճանապարհ կա,— ասաց Մադոյանը։— Պետք է ճեղքել գերմանացիների օղակը, ներխուժել շոգեքարշերի նորոգման գործարանը, այնտեղ տեղափոխել և վիրավորներին, ամրանալ և շարունակել դիմադրությունը։ Խնդիրը պա՞րզ է,— խստորեն հարցրեց նա։

Սպաներից մեկն ասաց, որ գերմանացիներից բացի, էլի մի խոչընդոտ կա դրա համար։ Դեպի այդ դիրքերը տանող այն միակ ճանապարհը, որի մասին ասում է գումարտակի հրամանատարը, կրակի մեջ է։ Ուրեմն ի՞նչպես կարելի է գնալ այնտեղ։

— Գիտեմ, մեր առաջ կրակ է,— առարկեց Մադոյանը։ Բայց մենք կգնանք կրակի միջով։

5.

Սանիտարուհի Զինայի հանգստությունն ու վստահությունն արագորեն հաղորդվեց նաև Լիդային։ Նա առանց շտապողականության, արագ ու վարժ կատարում էր Սլավինայի ցուցումները, հոգատարությամբ խնամում էր հիվանդներին, օգնում էր, երբ որևէ մեկն ուզում էր մյուս կողքին շուռ գալ, երկրորդը՝ քիչ վեր բարձրանալ, իսկ երրորդը որևէ այլ բան էր խնդրում։

Ուշ գիշեր էր։ Դմիտրիևան ներքնահարկից դուրս եկավ հրապարակը։ Արտասովոր պատկեր բացվեց նրա առաջ։ Ավերված կայարանի բարձր պատերի չորս կողմը և նրանցից շատ հեռու բորբոքվում էին հրդեհների բոցերը։ Նա իր հայացքն ուղղեց կայարանից դեպի վեր տարածված քաղաքի կողմը և այդ միևնույն բանը տեսավ այնտեղ։ Ամեն տեղ, ուր նայում էր նա, վիթխարի բոցեր էին բարձրանում դեպի երկինք։ Եվ այն գիտակցությունից, որ գերմանացիները այրում են իր հարազատ Ռոստովը, ցավագին սեղմվեց Լիդայի սիրտը։

Նա ետ դարձավ։ Ինչ-որ մեկը հասավ նրա ետևից։ Ետ նայեց, իր կողքին տեսավ Օխապկինին։

— Դուք գնում եք ձեզ մոտ,— հարցրեց նա,— և պատասխանի չսպասելով, առաջ անցավ։— Շուտ-շուտ գնանք։ Մենք այստեղ ենք փոխադրվում, պետք է նախապատրաստել վիրավորներին։

Առաջ կրակի միջով անցան հետախույզները։

— Այս ինչ լավ է մտածել գումարտակի հրամանատարը,— ասում էր Դանիլչենկոն իր հարևանին։

Նրանք երկուսով կանգնած էին հալվող ձյունակույտից գոյացած ջրի մեջ։ Որպեսզի վառվող ածուխի միջով անցնելիս բոցը չայրի մարդկանց, Մաղոյանը հրամայեց թրջել վալենկաները։

Ավտոմատները և գնդացիրները ձեռքներին, զինվորները առաջ էին գնում։ Շիկացած օդը խփում էր նրանց դեմքերին։ Անտանելի ծանր էր շնչելը։ Ածխաթթու գազը խեղդում էր մարդկանց։ Մարտիկները շնչահեղձ էին լինում։ Նրանք ուժասպառվում էին, կրակն այրում էր նրանց, սայթաքելով ընկնում էին, ապա ուժերը լարելով՝ վեր էին կենում և էլի շարունակում իրենց ճանապարհը կրակի միջով։

Դեպի գործարանը գնում էին երկու խմբով։ Մեկի հետ էր Շունդենկոն, իսկ դեպի դարպասը մարտիկներին տանում էին Կրավչենկոն և Խիժնյակը։

Գործողության հանկարծակիությունը կաշկանդել էր գերմանացիներին։ Նրանք չկարողացան քիչ թե շատ լուրջ դիմադրություն ցույց տալ։ Ֆաշիստները երբեք չէին կարող սպասել, որ ռուսներն այդպիսի հանդուգն անցում կկատարեն։

Դարպասի մոտ անսպասելի խոչընդոտ ծառացավ Մաղոյանի մարդկանց առաջ։ Մուտքը ականապատված էր։ Այս գործերում փորձված Դանիլչենկոն, ուրիշ մարտիկների հետ միասին, անմիջապես ձեռնարկեց ականներն անվնաս դարձնելու գործին։ Շուտով ճանապարհը բաց էր և մարտիկները ներս սլացան անիվների ցեխը։

Նրանք անցան մետաղի լոմի կույտերի, ջարդված և շուռ եկած դազգահների միջով։ Ամեն տեղ ավերածության քաոս էր տիրում։

— Էս ինչ են արել անիծված գերմանացիները,— հուզվում

էր Խիժնյակը։ — Իսկ ինչ հարուստ գործարան էր։ Այստեղ, որդիս, մինչև պատերազմը ամենալավ վագոններն էին շինում, — դիմեց նա իր կողքին կանգնած զինվորին։

Դիմացից ավտոմատի կրակոց լսվեց։

— Պառկիր, — գոռաց սերժանտ Կրավչենկոն։

Մարտիկները պառկեցին։ Միայն ծեր մեքենավարը տարօրինակ կերպով երերաց և կամաց սկսեց թեքվել մի կողքի վրա։ Սողալով նրան մոտեցավ Դանիլչենկոն և ծերունուն քարշ տալով տարավ շուռ եկած վիթխարի մեքենայի ետևը։ Խիժնյակը հազիվ էր շնչում։ Նրա կիսափակ աչքերից արցունք էր գալիս։

— Սրիկաներ, — հայհոյում էր Օստապը գերմանացիներին։

Նրա հայացքը որոնում էր նրանց, բայց թշնամու զինվորներից ոչ մեկը չէր երևում։ Սակայն, գերմանացի ավտոմատավորը ինչ-որ մոտիկ տեղ թաքնված էր։

— Ես, միևնույնն է, այս րոպեին կգտնեմ քեզ, սրիկա, — ասում էր Դանիլչենկոն։

Նա վերցրեց մի ձողի կտոր, նրա վրա հագցրեց իր գլխարկը և սկսեց կամաց բարձրացնել մեքենայի վրա։

— Տա — տա — տա... — նորից կրակեց Ֆրիցը և այդ նույն վայրկյանին Ռախմանովը հայտնաբերելով գերմանացու թաքստոցը, նռնակ շպրտեց նրա վրա։

Նորից բարձրացավ Դանիլչենկոյի գլխարկը։ Գերմանացին լուռ էր։ Մարտիկները ոտքի կանգնեցին։

Կրավչենկոն վազեց Խիժնյակի մոտ։

— Հարազատներս... — կամաց ասաց մեքենավարը, — ես մեռնում եմ... Մնաք բարով, որդիներս։

Կրավչենկոն տեսավ, թե ինչպես ծերունու խորշոմած այտի վրայով մի մեծ վճիտ արտասուք ընկավ։

— Մենք Ձեզ կտանենք, հայրիկ... — ասաց սերժանտը։

— Հարկավոր չէ, որդիս... Ես այստեղ կհանգչեմ... Դու իմ արցունքներին մի նայի... — դժվարությամբ կարողացավ ասել Ալեքսանդր Ստեպանովիչը։ — Ես որդիս... լավ եմ մեռնում...

Նա ջանք էր գործ դնում ժպտալու։

— ... Իբրև զինվոր... Ես չէի էլ երազել այսպիսի մահվան մասին... Կարծում էի, թե քաղցած շան նման... ուժասպառված

կմեռնեմ։ Իսկ հիմա, տես, մարտի մեջ... քո ձեռքերի վրա, սեր-ժանտ...

Վասիլի Կրավչենկոն ուզեց մխիթարել մեռնող ծերունուն, սակայն չկարողացավ գտնել պետք եղած խոսքերը։

— Մեր բժիշկները կբժշկեն քեզ, պապիկ,— անվստահ ասաց նա։

Լսիր, որդիս, լավ լսիր... թե չէ շունչս կտրվում է... չեմ հասցնի...

Խիժնյակն աչքերը բացեց, ձեռքը տարավ դեպի աջ։

— Գնացեք այնտեղ, տենդերների ցեխը։ Ապա գաղտնի ճանապարհով՝ դարբնոցը... այնտեղից էլ... պողպատաձուլական ցեխը։ Այնտեղ ավելի լավ կարելի է դիմանալ... մարտենյան ցեխում... Որդյակս, տար զինվորներին... Հա, իմ Գրիշատկայի մասին... չմոռանաք...

Մեքենավարը լռեց։ Կրավչենկոն ծնկաչոք համբուրեց ծերուկի ճակատը։

— Օստապ, դու կմնաս այստեղ,--ասաց նրան Դանիլչեն-կոն։

Գնդացրորդին տեղավորելով ավերված պատուհանի մոտ, սերժանտը մարտիկների հետ միասին գնաց տենդերների ցեխը։

Այդ ժամանակ հրապարակում և կայարանի նկուղներում մնացած մարտիկները շարունակում էին կռվել կրակի դեմ։ Պետք էր պաշտպանել իրենց հին դիրքերից դեպի գործարանը տանող ճանապարհը։ Շունդենկոն ավտոմատավորներին տեղավորեց թևերում։ Դարբնոցը հասած մարտիկներն իրենց ոտքերից հանում էին վալենկաները և ետ ուղարկում նրանց, ովքեր դեռ հրապարակում էին։

Մի խումբ զինվորներ տեղափոխում էին վիրավորներին։ Սանիտարական կետի տեղափոխությունը ղեկավարում էր Օխապկինը։ Վիրավորները, ատամները սեղմելով, ամուր գրկում էին իրենց ընկերներին։ Երբեմն բոցավառվում էր նրանց հագուստը։ Իրենց մասին չմտածելով, առողջներն աշխատում էին կրակից փրկել վիրավորներին։

Գոտապիչն այնպես խնամքով էր տանում Կովալչուկին, կարծես, փոքր երեխա լիներ գրկած։ Ալեքսանդրը հաճախակի և ծանր շնչում էր։ Երբ սիբիրցին հասավ վառվող ածուխին և

այրող օդն ընդգրկեց նրանց, վիրավորը հառաչեց և սկսեց դուրս պրծնել նրա ձեռքից։

— Համբերիր, որդիս,— հանգստացնում էր նրան Պոտապիչը։— Քիչ էլ համբերիր, երկու քայլ է մնացել... Ամուր կաց դու, զինվոր։

Ամբողջ գիշերը շարունակվում էր մենամարտը կրակի հետ։ Մաղոյանը և Կալինինը, Շիլովի վաշտի գլուխն անցած, քողարկելով գումարտակի անցումը դեպի նոր դիրքեր, ետ էին մղում ճակատը ճեղքել ձգտող գերմանացիներին։ Հրաձգության ժամանակ վիրավորվեց գումարտակի հրամանատարի աջ ձեռքը։

Տոկունությունը և արիությունը հաղթանակեցին։ Մաղոյանի զինվորներն անցան կրակի միջով։

ՎԵՑԵՐՈՐԴ ՕՐԸ

1.

Լուսադեմին մարտիկներն ամրացան պողպատաձուլական ցեխում։ Մաղոյանը շուրջանակի պաշտպանություն կազմակերպեց։

— Խնայել ամեն մի փամփուշտը,— խստորեն հրամայեց նա։

Ուշադիր զննելով ցեխի հաստ պատերը, գումարտակի հրամանատարը հայտարարեց զինվորներին.

— Ձեզ նման արծիվների հետ կարելի է մի ամբողջ տարի դիմանալ այստեղ։

Նա նայեց մարտիկներին և կամաց ավելացրեց.

— Ափսոս միայն, որ մեքենավարը չկա...

Մարտիկները գլուխները կախեցին։

Վիրավոր ձեռքը սաստիկ անհանգստացնում էր ավագ լեյտենանտին, սակայն նա առույգ էր մնում։ Շրջելով զինվորների մեջ, նա կարճառոտ խոսքեր էր փոխանակում նրանց հետ, խորհուրդներ տալիս, թե ինչպես ավելի հարմար դիրք գրավեն և երբեմն կատակներ էր անում։

— Տեսա՞ր, Պոտապիչ,— ասում էր նա սիբիրցուն,— թե գիշերով ուր հասանք վառվող ածուխի միջով։ Մեղապարտների ճանապարհը դեպի դժոխք երևի ավելի հեշտ է։— Դու ինչպե՞ս ես կարծում։

— Ո՛չ, ընկեր գումարտակի հրամանատար,— ժպտաց Գուտապինը։— Այս ճանապարհը ոչ թե դեպի դժոխք, այլ դեպի դրախտ է տանում։ Լավ ճանապարհ է, զինվորի ճանապարհ։

Պանովը վիրավորներին տեղավորեց ցեխի հեռավոր մասում, մի խուլ տեղ, որ չորս կողմից հաստ պատերով էր շրջապատված։ Անկյունում մի մեռնող զինվոր էր պառկած։ Նրա մոտ նստած էր Սլավինան։

— Պետյա, Պետյա,— երբեմն կանչում էր նա։

Մակլուշենկոն բացում էր աչքերը, բայց այլևս ոչինչ ասել չէր կարող։ Նրա կոկորդից ինչ-որ անկապ ձայներ էին դուրս թռչում։ Նա անօգնական խռխռացնում էր։ Նրա մարող, անորոշ հայացքն ուղղված էր դեպի հեռուն... Կրակոցներ լսվեցին։ Նրանք րոպե առ րոպե ավելի հաճախակի էին դառնում։ Գերմանացիները մոտենում էին ձուլարանին։ Երբ նրանց կանգնեցրին, նրանք պատսպարվեցին հարևան պատերի ետևում և ուժեղացրին կրակը։

Մարտիկներին միայն մի քանի տասնյակ մետր էր բաժանում ֆաշիստներից։

Հակառակորդները շատ լավ լսում էին իրար։

— Ռուս, անձնատուր եղիր։

— Կապուտ,— գոռում էին հիտլերականները։

— Դուք դեռ կտեսնեք, թե ով անձնատուր կլինի, անիծյալ գերմանացիներ,— պատասխանում էր ուզբեկ Ռախմանովը։

— Ինչքա՜ն հիմար է Ֆրիցը,— ասում էր Դանիլչենկոն։ Ինքը շունչը փչելու վրա է, մեզ է ասում կապուտ։

— Ի՞նչ ասացի՛ր,— զարմացած հարցրեց Մաղոյանը։

— Ոչինչ,— ասում եմ Ֆրիցը դագաղն է մտնում,— ընկեր գումարտակի հրամանատար, շունչը փչում է ֆաշիստը։

Մաղոյանին մոտեցան Շունդենկոն և Կրավչենկոն։

— Իրավունք է խնդրում հետախուզության գնալ,— ասաց կապիտանը, գլխով սերժանտին ցույց տալով։— Ռազմամթերք բերելու։

— Հետո ո՞վ է գալու,— հարցրեց Մաղոյանը Կրավչենկոյին։

— Ռումյանցևը, Օխրիմենկոն և Հովհաննիսյանը։

— Թույլատրում եմ, միայն թե զգույշ գործեցեք,— նախազգուշացրեց հրամանատարը։

Մարտիկները գնդացրային կրակ բաց արին գերմանացիների ուշադրությունը ցրելու համար։

Կրավչենկոյի և ընկերների նախաձեռնությունը հաջող անցավ։ Նրանք գրավեցին ծխամուց մի քանի ավտոմատ և հարյուրավոր փամփուշտներ։ Միայն թե վերադառնալիս, հիտլերականները վիրավորեցին Օխրիմենկոյին։ Նա, կաղալով, մի կերպ տեղ հասավ։ Ռուսլյանցևն օգնում էր նրան։

Կեսօրին գերմանացիները ուլտիմատում ներկայացրին Մաղոյանին— եթե երկու ժամվա ընթացքում գումարտակը զենքը վար չդնի, ամբողջապես բնաջինջ կարվի։

2.

Մակրուշենկոն վախճանվեց Մաղոյանի ձեռքերի վրա։

— Ընկերներ, գլխարկներս հանենք հերոսի աճյունի առաջ,— ասաց գումարտակի հրամանատարը։

Կարմիրբանակայինները լուռ կանգնած էին։

— Մակրուշենկոն Նաջաֆովի հետ միասին Ստալինգրադից է եկել այստեղ հասել,— շարունակեց Մաղոյանը։— Նրանք առյուծի նման էին կռվում Ռոստովի փողոցներում։ Մենք տեսանք նրանց անհավասար մենամարտը գերմանական տանկերի դեմ։ Հաղթական դուրս եկան Նաջաֆովը և Մակրուշենկոն։ Նրանց արիությունը զինվորի արիություն էր։ Նրանց տոկունությունը զրահից ուժեղ դուրս եկավ։ Նրանց սերը Սովետական Հայրենիքի հանդեպ մահվանից էլ ուժեղ էր։ Նրանք չմեռան, որովհետև չեն մեռնում այն հերոսները, որոնք իրենց կյանքը տալիս են հարազատ ժողովրդի երջանկության համար։ Նրանք ազնվորեն կատարեցին իրենց երդումը— մինչև վերջին շունչը պաշտպանել Հայրենիքը։

Գումարտակի հրամանատարի խոսքերը խորը հուզում էին զինվորներից ամեն մեկին։ Երբ Մաղոյանը վերջացրեց, մի պահ լռություն տիրեց։ Ապա խոսեց Օխապկինը։

— Մամեդը,— ասավ ավագ լեյտենանտը,— հաճախ գերմանացիներին համեմատում էր շնագայլերի հետ։ Նա ֆաշիստներին

ատում էր իր ջերմ, ազնիվ սրտի ամբողջ ավյունով։ Նա ասում էր. «Նրանք ուզում են ոչնչացնել Ռուսաստանը, ուրեմն նաև խեղդել իմ հարազատ Տաջիկստանը»։ Բաջարի պատանին լավ էր հասկանում, որ Ռուսաստանի դաշտերում նա պաշտպանում է ամբողջ երկիրը, հետևաբար, նաև իր ժողովրդին, իր հեռավոր տաջիկական կիշլակը։ Ճիշտ այդպես՝ գերմանացիների դեմ ատելությամբ էր լցված նաև ուկրաինացի Մակրուշենկոյի սիրտը։ Կռվելով Ստալինգրադի հողի վրա, նա ազատագրում էր ոչ միայն ռուսական քաղաքներն ու գյուղերը, այլև թշնամու գրաված Ուկրաինան։ Եվ մի՞թե ռուս մարդիկ՝ Սավելևը, Պավլովը, Ռոդյոնովը միայն Ռուսաստանն են պաշտպանում գերմանացիներից։ Ո՛չ։ Մեռնելով Ռոստովի քարերի վրա, նրանք ֆաշիստական ստրկությունից փրկում են թե՛ Վրաստանը, թե՛ Հայաստանը և թե՛ քո հայրենիքը, Ռախմանով, Ուզբեկստանը։ Այն մարտիկը, որին դիմեց ավագ լեյտենանտը, հայացքը չէր հեռացնում Օխապկինից։ — Երևում էր, որ Մազոյանի պարզ խոսքերը իրենց մեծ ճշմարտությամբ հափշտակել էին Ռախմանովին։

— Այո, ֆաշիստների հետ մենք-դաժանորեն ենք խոսում և դեռ պետք է խոսենք, — ասաց Մազոյանը։

— Նրանք ուլտիմատում են ներկայացրել մեզ։ Վախկոտ և ստոր բորենիները լկտիություն ունեն սպառնալու մեզ։ Մեր աչքի առաջ նրանք այրում են մեր քաղաքը, ծաղր ու ծանակի են ենթարկում մեր մարդկանց և մեզ առաջարկում են անձնատուր լինել

Այս աղջիկը, — Մազոյանը նայեց Լիդայի կողմը, — շատ բան կարող է պատմել ձեզ, ընկերներ։ Նա կարող է պատմել, թե գերմանացիներն ինչպես մտրակով ծեծում են մեր մարդկանց, թե ինչպես նրանք հազարավոր ռուս աղջիկների գերության են քշել Գերմանիա, տաժանակիր աշխատանքի՝ գերմանական հանքերում ու գործարաններում, թե ինչպես ֆաշիստները սպանում են մեր անմեղ մարդկանց։ Լիդան ինքը տեսել է, թե գերմանացիներն ինչպես են սպանել իր հորը։ Արյունաքամ է լինում Ռոստովը, և մենք եկել ենք այստեղ ազատագրելու այն հիտլերյան դահիճներից։ Այս քաղաքում պատվավոր գործ է բաժին ընկել մեր գումարտակին։ Այդ գուցե մեր ամենասրբա-

զան խնդիրն է, ընկերներ։ Մենք առաջինն ենք մտել Ռոստով։ Այս քաղաքում մենք կորցրել ենք մեր քաջարի մարտական ընկերներից շատերին։ Վեցերորդ օրն է արդեն, որ մենք առանց քնի և հանգստի գտնվում ենք կրակի մեջ։ Ծանր փորձություններ են բաժին ընկել մեզ։ Ես գիտեմ, թե դուք ինչքան հոգնել եք, բարեկամներս,—ձայնն իջեցրեց Մաղոյանը,—սակայն ձեզնից ոչ ոք չի գանգատվում, թե հոգնել է։ Շնորհակալություն ձեզ, ընկերներ։

Գումարտակի հրամանատարը ձախ ձեռքով գրպանից հանեց ժամացույցը։

—Հիմա, ընկերներ, ուլտիմատումի ժամկետը լրանում է. մեզ նոր, ահեղ մարտ է սպասում։ Երդվենք, ուրեմն, մեր հերոսների սրբազան հիշատակով, որ չենք արատավորի նրանց պատիվը, որ մինչև մեր սրտի վերջին զարկը կդիմանանք Ռոստովում։

Եվ ծունկի իջնելով Մակրուշենկոյի կողքին, գումարտակի հրամանատարը առաջինն արտասանեց.

—Երդվում եմ։

—Երդվում եմ,—ասաց Օխապկինը։

—Երդվում եմ,—կրկնեցին Շունդենկոն, Կալինինը, Ռախմանովը։

—Երդվում եմ,—ասացին Ռումյանցևը, Կրավչենկոն, Պանովը, Դանիլչենկոն, Հովհաննիսյանը, Սլավինը, Դմիտրիևան։

3.

Գերմանացիները ժամը 3-ին ականանետների ուժեղ կրակ բաց արին։ Մարտիկներին պատսպարում էին բարձր և հաստ աղյուսե պատերը, բայց և այնպես առանձին ականներ, անցնելով ապակեպատ տանիքից, խլացուցիչ որոտով պայթում էին ձուլարանում։ Մետաղի կտորները բարձրանում էին օդի մեջ, թանձր ծուխը և փոշին տարածվում էին չորս կողմը։

—Գրոհի են պատրաստվում,— նկատեց Կրավչենկոն։

—Թող փորձեն,—արձագանքեց զինվորներից մեկը։

Պայթյուններն ավելի հաճախակի էին դառնում։ Զենքերը պատրաստ պահած զինվորները դիրք էին գրավել պատերի տակ։ Ավելի հարմար տեղավորվելով իր գնդացրի մոտ, Դանիլչենկոն աչքը թշնամուց չէր հեռացնում։

Հանկարծ հրաձգությունը դադարեց։ Անմիջապես լայն պատի երկու կողմից երևացին գերմանացիներ և վազեցին դեպի ձորակը։ Դանիլչենկոն տեսավ նրանց։ Արդեն մի քանի քայլ էր բաժանում հիտլերականներին ցեխից, երբ Մաղոյանը ազդանշան տվեց։ Ուժգին համազարկ տեղաց էսէսականների վրա։ Գերմանացիները թափվում էին, ինչպես հնձված խոտ։ Մի բարձրահասակ սպա, ատրճանակը ճոճելով, վազում էր ոտքի վրա ծնացածների ետևից։ Օստապը նորից կրակեց։ Էսէսական սպան նույն վայրկյանին գետին տապալվեց։

Պատի ետևից դուրս էին գալիս գերմանացիների նոր խմբեր։ Մաղոյանի հրամանով լեյտենանտ Լուպանդինի հետախույզները գնացին հարձակվողներին ընդառաջ։ Փայլատակեցին սվինները, կենդանական սարսափ նկատվեց գերմանացիների դեմքերին։ Մարտիկները մրրիկի նման նետվեցին նրանց վրա։ Պողպատե դանակների ուժգին հարվածներից փախչողները ավտոմատները ձեռքից թողնելով, գետին էին տապալվում։

Մի կողմից կրակում էր գնդացիրը։ Դա սերժանտ Կրավչենկոն էր. նա փակում էր պատի ետևից դուրս գալ փորձողների ճանապարհը։ Գերմանացիները պատասխան կրակ բացեցին, սակայն ավերակներում լավ պատսպարված Կրավչենկոն անխոցելի էր։

Հիտլերականներին ետ շպրտեցին, իսկ Մաղոյանի մարտիկների թիվը ավելի պակասեց։ Մի քանի զինվորներ սպանվեցին ականների բեկորներից։ Կարմիրբանակայիններ Ռուսյանցևը, Անտոնովը և Հովհաննիսյանն ընկան ձեռնամարտում։

Նորից հանդարտություն տիրեց։

—Հը՛, ինչպե՞ս է դրությունը, քույրիկ,—կամաց հարցրեց հովանչուկը Լիդային։

—Ետ քշեցին,—պատասխանեց նա։

Նա ծանր էր շնչում։

—Հիմար բան է վիրավոր լինելը։ Պառկած ես որպես խնամառու, իսկ ընկերներդ կռվում են քեզ համար։

—Դա ձեզ չի վերաբերում, Սաշա,—առարկեց Լիդան, ապա քիչ մտածելով՝ ավելացրեց.—դուք ձեզ չեք խնայել։

Մթնշաղը թանձրանում էր։ Լիդան իր հայացքը չէր հեռացնում զինվորների անշարժ դեմքերից։ «Անքուն, առանց

հացի։ Ինչպե՜ս են դիմանում»,—ինքն իրեն ասում էր աղջիկը։ Նա հիշեց իրենց բերած բլիթները։ «Բայց հիմա արդեն տուն գնալ չի լինի։ Մեր փողոցի ճանապարհը փակված է։ Չորս կողմը գերմանացիներ են»։

Այո, ձուլարանը պաշարված է գերմանացիների կողմից։ Աղճատված ռուսերենով նրանք սպառնալիքներ էին կարդում մարտիկներին, առաջարկելով անձնատուր լինել։ Ոչ ոք չէր պատասխանում նրանց։ Երկարատև գերմարդկային լարվածությունը սաստիկ հոգնեցրել էր զինվորներին։

—Լիդա,—լսվեց Կովալչուկի ձայնը,—ի՜նչ կլիներ, մի բան երգեիք…

—Ի՞նչ, Սաշա,—մութը քողարկում էր նրա ժպիտը։

—Մեր Ռոստովի մասին երգ չգիտե՞ք։

—Ո՛չ։

—Այն ժամանակ ես կերգեմ։

—Ձեզ չի կարելի։

—Ա՛յ թե ի՜նչ. էլի «չի կարելի»։ Ես կամաց կերգեմ, Լիդա։

Եվ նա կիսաձայն երգեց.

Մենք ապրել ենք այս քաղաքում,
Սիրել ենք այստեղ արբած,
Զբոսնել ենք, շրջել խնդուն
Եվ զրուցել ենք սրտանց.
Եվ կիթառին ձայնակցելով
Երգել ենք ընկերներով։

Ա՛խ մեր Ռոստով, Դոնի Ռոստով,
Կապույտ աստղոտ երկնքով.
Ե՛վ փողոց Սադովայան,
Ե՛վ Թղկենու նստարան,
Ա՛խ Ռոստո՛վ, Դոնի Ռոստով։

Երգը դուր եկավ զինվորներին, նրանք լսում էին։ Կովալչուկը շարունակեց.

Պատերազմ եկավ դաժան ու մեծ,
Ալ կրակներ վառեց նա,
Պողպատե անձրև մեզ վրա մաղեց

Եվ թողնելով քաղաքը մեր,
Քաղաքն անգին, արևաբեր
Մեր սրտերում տարանք հեռու,
Ա՜խ մեր Ռոստով...

Մարտիկները ձայնակցեցին նրան.

Դոնի Ռոստով
Կապույտ աստղոտ երկնքով
Ե՛վ փողոց Սադովայան,
Ե՛վ Թխկենու նստարան...

Հեռվում բամբ որոտացին թնդանոթները։ Երգն ընդհատվեց. ամենքը լարեցին ուշադրությունը։

—Մեր թնդանոթներն են, աստված վկա, ես ձայնից եմ ճանաչում,—հայտարարեց Դանիլչենկոն։

Բոլորը վրա տվին նրան.

—Սուս արա, ձայն մի հանիր։

Իսկ թնդանոթների որոտն ավելի ու ավելի բարձրաձայն էր լսվում քաղաքի զանազան կողմերից։

—Մերոնք են,—հայտարարեց Մագոյանը։

—Այո, մերոնք են,—ասաց Շունդենկոն։

Մարտիկներն աշխուժացան։ Հրաձգությունը ծավալվում և ուժեղանում էր։ Գիշերն անցավ անհամբեր սպասելու պայմաններում։ Մարտիկների հույսերն անհիմն չէին։ Գերմանացիների պաշտպանությունը ջարդուփշուր անելով՝ Ռոստով էին մտնում Հարավային ռազմաճակատի զորքերը։

ՓԵՏՐՎԱՐԻ ՏԱՍՆԸՉՈՐՍԸ

Այդ գիշերը հաղթականորեն ավարտվում էր Ռոստովի գրավման այն օպերատիվ պլանի կենսագործումը, որ կազմել էր Հարավային ռազմաճակատի հրամանատարությունը։ Դոնն անցնելով, դեպի Խոպյոր սլացավ գվարդիական կազակային հեծելազորը, թշնամու նահանջի ճանապարհը փակելով։ Այդ ժամանակ Ակսայսկայա ստանիցայի կողմից գերմանացիներին վերջնականորեն ետ շպրտելով՝ Ռոստով էին մտնում սովետական հետևակի գնդերը։ Գիշերը Զելյոնի կղզու կողմից Բերեգովայա փողոցը

ներխուժեցին մեր ավտոմատավորների խոշոր ջոկատները։ Մագոյանի գումարտակի ծանր օրերը մոտենում էին իրենց վախճանին։

Սովետական զորքերը գրոհով գրավում էին քաղաքը։ Լուսաբացին Կրավչենկոն մի խումբ մարտիկների հետ հետախուզության դուրս եկավ և, վերադառնալով, զեկուցեց գումարտակի հրամանատարին.

— Մոտակայքում գերմանացիներ չկան։

Իսկ հրաձգությունը շարունակվում էր։

— Շնորհավորում եմ ձեզ, ընկերներ,— հուզված ասաց Մագոյանը։— Ով կարող է, թող գա ինձ հետ, ընդառաջ գնանք մերոնց։

Նա իզուր չշեշտեց, թե «ով կարող է»։ Վեց օրվա հյուծիչ ճակատամարտից հետո զինվորներն առաջին անգամ հանգստանում էին։ Ամեն մեկը նրանցից սարսափելի հոգնածություն էր զգում։ Մարդիկ հազիվ էին կարողանում ոտքի վրա կանգնած մնալ։

Երերալով նրանք դուրս եկան գործարանից, իրենց արդեն ծանոթ ճանապարհով։ Անցան դարբնոցով, տենդերների և անիվային ցեխերով։ Գործարանի դարպասները լայն բաց էին։ Երկաթուղագծի ռելսերի վրա թափված էին գերմանացիների դիակները։

Մագոյանը և նրա զինվորները դուրս եկան կայարանի հրապարակը։ Փետրվարյան լուսաբացի աղջամուղջի մեջ գծագրվում էին այրված կայարանի բարձր, սև պատերը։ Նրանց շուրջը դեռ շարունակում էին ծխալ կայարանի մյուս շենքերի ավերակները։ Վառվող ածուխի հոտը բռնել էր օդը։

Հրապարակի մեջտեղում շիրմաթմբի նման ահագին հողակույտ էր բարձրացել։ Պատերազմից առաջ բանվորների մի խումբ պատկերող՝ շատրվաններով շրջապատված՝ արձաններ կային այդտեղ։

Զինվորներն այնպես էին դիտում հրապարակը, կարծես, առաջին անգամ էին տեսնում։ Մարտի ժամանակ շատ բան աննկատելի էր մնացել նրանց համար։ Այժմ նրանց առաջ թափված էր գերմանացիների պարտության մատնված տեխնիկան, այրված

տանկերը, շուռ եկած ավտոմեքենաները, այլանդակված թնդանոթները։

Զանազան դիրքով ընկած էին սպանվածները․ մեծ մասը մոխրագույն-կանաչ շինելներ հագած։ Բայց թշնամու զինվորների դիակների մեջ Մաղոյանի մարտիկները գտնում էին նաև իրենց զոհված ընկերների մարմինները։

Հրապարակի վրա, Ընգելսի փողոցի կողմից մի խումբ մարդիկ երևացին։

—Ո՞վքեր են,—կամաց հարցրեց Օխապկինը Մաղոյանին։

Եվ դեռ գումարտակի հրամանատարը չէր հասցրել պատասխանել, որ մարտիկները լսեցին Կրավչենկոյի հրճվալից բացականչությունը։

—Մերոնք են, մեր ընկերները։

Սերժանտն արդեն նրանց հետ էր, ովքեր ընդառաջ էին գալիս գումարտակին, ավելի ճիշտ, գումարտակի կենդանի մնացած մարտիկներին։

Եվ նորից ուժ եկավ նրանց վրա։ Մարդիկ ընդառաջ վազեցին իրար, սկսեցին գրկախառնվել, սեղմել իրար մարտերում կոպտացած ձեռքերը։ Զինվորների գլխարկները երկինք թռան։

—Ընկերնե՜ր...

—Հարազատներս․ լսվում էին ուրախ բացականչություններ։

—Օստա՜պ։

—Պանասյո՜ւկ։

Դանիլչենկոն պատահեց իր հայրենակից մի ուկրաինացու։ Եվ ինչպես միշտ պատահում է զինվորների հետ, լսվեցին նրանց սովորական պարզամիտ կատակները․

—Մեր տառապյալները...

—Անջուր-անհաց մնացածներ...

—Մեր հավատարիմ օգնականները։

Շարունակ նոր կարմիրբանակայիններ էին մտնում հրապարակին։ Ծանոթները հանդիպում էին իրար, լսվում էր բարձրաձայն հարց ու փորձ։ Երևացին նաև մոտակա փողոցների բնակիչները։

—Իսկ ո՞րտեղ է Մաղոյանը,—լսեցին մարտիկներն ինչ-որ մեկի հաստատուն ձայնը։

—Ես այստեղ եմ,—պատասխանեց գումարտակի հրամանատարը։

Զինվորները տեսան բրիգադի հրամանատարին։

—Դու հերոս ես, Մազոյան,—ջերմորեն գրկելով գումարտակի հրամանատարին, ասաց գնդապետը։—Դուք բոլորդ հերոսներ եք։ Հրամանը կատարեցիք և այն էլ ինչպե՜ս... Ամբողջ բանակը գիտե, ամբողջ ռազմաճակատը փառաբանում է ձեզ։

2.

Այդպես անցավ փետրվարի տասներկուսը՝ ռոստովցիների համար երջանկահիշատակ առավոտը։ Բնակիչներն ուրախացած, դռներից վերցնում էին ծանր փականները, լայնորեն բացում էին փեղկերը։ Մարդիկ այնպես էին շտապում փողոց, կարծես թե բանտից էին դուրս գալիս։ Նրանք ետ էին թողնում վեցամսյա արգելափակման մեջ անցկացրած կյանքը, երբ ամեն մի գերմանացի ամեն րոպե կարող էր անպատիժ սպանել պատահած մարդուն։

Հրճվանքով էին դիմավորում ռոստովցիները իրենց ազատարարներին։ Պառավ կանայք գրկում էին զինվորներին, ինչպես իրենց որդիներին, հրավիրում էին տուն, տաք թեյով հյուրասիրում, նրանց հետ բաժանում էին հացի վերջին կտորը, ուրախանում էին մայրենի լեզուն լսելով, հարազատ դեմքերը տեսնելով, անընդհատ հարց ու փորձ էին անում զինվորներին.

—Ասա՛, որդիս,—մի երիտասարդ կարմրադեմ սիբիրցու թեյ հյուրասիրելով, հարցնում էր մի կարճահասակ կոկիկ հագնված պառավ,—մեր Մոսկվային հո վնաս չի՞ հասել։

—Մոսկվան բոլորովին անվնաս է, մայրիկ,—թեյը կում անելով, գործնական արտահայտությամբ պատասխանում էր երիտասարդը։

Ուրիշ տեղերում զինվորներին հարցեր էին տալիս, թե չե՞ն տեսել արդյոք ռազմաճակատում իրենց որդուն։ Ասում էին անուն-ազգանունը, հայտնում էին, թե որտեղից և երբ է ստացվել վերջին նամակը։

Շարունակ ավելանում էր մարդկանց բազմությունը փողոցներում։ Ամեն տեղ մարտիկների շուրջը աշխույժ զրույցներ էին սկսվել։

Այդ ձմեռային օրը բավականին տաք էր: Ձյունը հալվում էր: Կարծես թե, մարտիկների հետ միասին գարունը մուտք էր գործել քաղաք, այնքան լուսավոր և ուրախ էր ռոստովցիների հոգին: Միայն, երբ խոսք էր լինում գերմանացիների ժամանակ ապրած օրերի մասին, բնակիչների դեմքերը մռայլվում էին, նրանց ձայնի մեջ զայրույթ էր զգացվում և մարտիկները լուռ ունկնդրում էին նրանց: Ծանր բաներ էին պատմում տեղացիները. քաղաքի հազարավոր բնակիչների գնդակահարել էին ֆաշիստները կենդանաբանական այգու մոտ, աղջիկներին բռնությամբ կտրել էին մայրերից ու տարել Գերմանիա: Ի՜նչ ստորացումներ և անիրավություններ ասես, որ չէին տարել քաղցի մատնված ռոստովցիները: Դեռ առավոտը շուտ քաղաքում լուր տարածվեց այն ահավոր ոճիրի մասին, որ պատանդների նկատմամբ գործել էին գերմանացիները նահանջելուց առաջ:

Մաղոյանը, իր զինվորներով շրջապատված, գնում էր Էնգելսի փողոցով: Նրանց ետևից խմբով գնում էին բնակիչները:

Ա՛յ, սրանք էին, որ վեց օր կռվում էին այստեղ,— ասում էին իրար:— Իսկ այն բարձրահասակը նրանց հրամանատարն է:

Կանայք, տղամարդիկ, երեխաները հարգանքով ու հետաքրքրությամբ դիտում էին Մաղոյանի մարդկանց: Այդ ժամանակ զինվորականների խումբը հասավ փողոցում կանգնած վիլիսի մոտ: Մեքենայից դուրս եկան մի գեներալ և, նրա ետևից, սպաներ: Մարդիկ ետ-ետ գնացին: Գեներալն արագ քայլերով մոտեցավ բարձրահասակ հրամանատարին և ջերմորեն գրկեց նրան:

—Շնորհավորում եմ ձեզ,— ասաց գեներալ-լեյտենանտ Գերասիմենկոն, բանակի հրամանատարը:— Դուք հիանալի կռվեցիք: Դուք Ռոստովի հերոսներն եք, Մաղոյան:

Գեներալը նորից գրկեց գումարտակի հրամանատարին և, ըստ ռուսական հին սովորության, երեք անգամ համբուրեց նրան:

3.

Օխապկինի ընտանիքն ապրում էր Մորսկայա փողոցում: Ինչքան Անդրեյը մոտենում էր ծանոթ թաղամասին, այնքան խորն էր հուզվում: Նրան թվում էր, թե լսում է սրտի հաճախակի դարձած զարկերը: Նա դիտմամբ ետ էր պահում քայլերը, աշխատելով հանգստացնել ինքն իրեն:

Փողոցի երկու կողմից ձգվում էին ռումբերից կիսակործան, այրված շենքերը։ Մայթերի վրա և սալահատակին թափված էին աղյուսի կույտերը։ Այրված շենքերի միջև երևում էին կրակից ծռմռված երկաթե սյուները։

Ջքանդված տներ քիչ կային և Անդրեյը նրանց թվում չգտավ այն տունը, որտեղ թողել էր իր կնոջն ու երեխային։ Օխապկինը կանգ առավ ավերակների առաջ, գլխարկը հանեց և գլխահակ մնաց կանգնած հայրենի օջախի դռանը։ Պատերից մեկի վրա կավճով գրված էր. «Օլգա և Աննա Սոկոլովաները ապրում են Լերմոնտովի 87»։ Դրա կողքին մի ուրիշ ազգանուն կար։ Նա սկսեց իր ազգանունը փնտրել, բայց չգտավ։

Հարևան բակից մի կին դուրս եկավ։ Նա ուշադրությամբ զննում էր Անդրեյին։ Օխապկինը ճանաչեց նրան.

—Ելենա Իվանովնա,—արագ մոտենալով կանչում էր Օխապկինը։

—Պառավ ուսուցչուհին ձեռքերը թափահարելով և միայն մի բառ կրկնելով—«Անդրյուշա»—շտապում էր Օխապկինին ընդառաջ։ Նրանք գրկախառնվեցին։

Նա սպասում էր, որ ուսուցչուհին ինքը առաջինը կխոսի այն մարդկանց մասին, որոնց ինքը փնտրում էր։ Բայց կինը լուռ էր։ Այն ժամանակ նա խուլ ձայնով հարցրեց.

—Մերոնք որտե՞ղ են։

Ուսուցչուհին, գլուխը կախ, պատասխանեց.

—Մեշչերյակովների մոտ։

Վերա Մեշչերյակովան նրա կնոջ ընկերուհին էր։

—Մեշչերյակովները նույն տեղո՞ւմ են ապրում։

—Այո։

Նա վախեցավ հարցնել՝ «կենդանի՞ են նրանք»։ Նա զգում էր, որ մի վատ բան է պատահել և վազելով առաջ գնաց փողոցով։

Մեշչերյակովների տանը առաջինը նրան պատահեց Նատաշենկան։ Նա կանգնած էր սենյակի մեջտեղում և շփոթված, նույնիսկ քիչ վախեցած, նայում էր նրան։

—Նատաշա, աղջիկս,—կամաց ասաց նա, բայց երեխան մի քայլ դեպի ետ գնաց։

—Դա քո հայրիկն է, հայրիկդ է եկել,—հանգստացնում էին աղջկանը։

Նա բարձրացրեց իր փոքրիկ սպիտակ ձեռքերը և դժգույն, անարյուն դեմքի վրա ժպիտ եկավ։

—Հայրիկ,—կանչեց նա և մոտեցավ Օխապկինին։

Նա իր չածիլված դեմքով հպվում էր աղջկանը, համբուրում նրա վիզը, և արցունքները հոսում էին նրա այտերով։ Մեշչերյակովան և նրա մայրը հուզմունքից անկարող էին դիտել այդ տեսարանը։

Անդրեյը աչքերով փնտրում էր Նինային, բայց նա չկար։

—Որտե՞ղ է նա։

—Գերմանացիները ձերբակալեցին նրան։

—Վաղո՞ւց։

Նա օտարոտի ձայնով արտասանեց այս բառը։

—Դեկտեմբերին,—պատասխանեց Մեշչերյակովան,—գուցե դեռ բանտումն է։

—Բանտո՞ւմ,—հարցրեց նա, անմիջապես հիշելով կայարանում առավոտյան լսածը։

—Բանտում...

Կտրուկ ետ դառնալով, նա դուրս եկավ սենյակից։

Օխապկինը հեռվից նկատեց, որ բանտի առաջ խմբված են մեծ թվով մարդիկ։ Մոտենալով, նա լսեց, որ մարդիկ կամաց շշնջում են, իսկ ոմանք հեկեկում, ապա նրա ականջին հասավ մի կնոջ լացի ձայնը։

Բանտի դռները բաց էին։ Նա ուրիշների հետ ներս մտավ։ Քարերի վրա իրար մոտիկ ընկած էին դիակները։ Նրանք շատ էին։ Իրենից ոչ հեռու Անդրեյը տեսավ մի կնոջ, նա ձեռքերը տարածած, երեսնիվայր ընկած էր գետնի վրա։ Նա բարձրացրեց կնոջ գլուխը, նայեց, և կամաց վար դնելով, առաջ գնաց։

Մեռածների շուրջը, որոնց թվում կային կանայք, տղամարդիկ, պատանիներ և դեռ փոքր աղջիկներ, գլխահակ կանգնած էին ռոստովցիները։ Նրանք դիտում էին սպանվածների դեմքերը, որոնում էին իրենց հայրերին, մայրերին, եղբայրներին, քույրերին, երեխաներին։ Ճանաչված դիակների մոտ մարդիկ ծունկի էին իջնում։ Անեծքներ էին լսվում մարդասպանների հասցեին։ Կանայք հեկեկում էին։ Մեկը քիմիական մատիտով մի սպանված ծերունու ձեռքի վրա գրում էր նրա ազգանունը։ Այդպես, ամբոխի հետ, ականջավոր գլխարկը խորը գլուխը քաշելով, Անդրեյն

սկսեց որոնել Նինային։ Նա դիտեց հարյուրավոր դիակներ։ Ար-
դեն գյուղը պտտվում էր, սակայն սպանվածները դեռ շատ էին
և նա շարունակում էր առաջ գնալ դեպի բանտի խորքը։

Ինչքա՜ն մարդկային վիշտ էր տեսել Անդրեյը ռազմաճա-
կատում, նրա քանի՜-քանի մարտական ընկերներն ընկել էին իր
աչքի առաջ, բայց այն, ինչ նա տեսավ Ռոստովի բանտի կամե-
րաներում, մինչև հոգու խորքը ցնցեց նրան։ Հատակի վրա
թափված էին մարդկային մարմինների կույտերը։ Կային մեծ
թվով մերկանդամ կանանց արյունաշաղախ դիակներ։ Անկյունում,
իր գունատ դեմքը ձեռքով ծածկած, անշարժացել էր մի նրբակազմ
խարտյաշ աղջիկ։ Նրա ստինքները դանակով կտրված էին։

Ֆաշիստները պայթեցրել էին բանտի մի մասը։ Վիթխարի
քարերը իրենց տակ էին թողել և այլանդակել կալանավորների
մարմինները։ Անդրեյը չգտավ Նինային և արդեն հույսի փոք-
րիկ նշույլը իր սրտում վերադառնում էր, երբ հանկարծ մե-
ռածների մի խմբի մեջ տեսավ նրա աչքերը։ Այո, ձյունի վրա,
մի անծանոթ տարիքոտ կնոջ կողքին պառկած էր Նինան։ Նրա
խիտ սև մազերը ցրված էին, դեմքը դեղնած էր ու նիհարած։
Ձեռքերն անզոր վար էին ընկել, իսկ մի ժամանակ աշխույժ,
ուրախ աչքերի սառը հայացքը տխուր հառած էր երկնքին։

Անդրեյն ընկավ ձյունի վրա…

Ճաշից հետո Մաղոյանի զինվորները կայարանի հրապա-
րակում թաղեցին իրենց զոհված ընկերներին։

Զինվորների հետ եղբայրական գերեզմանի մոտ եկան քա-
ղաքի հարյուրավոր բնակիչները։ Հողին հանձնվեցին Նաջաֆովի
աճյունը, Գավլովի, Մակրուշենկոյի, Սավելյևի, Ռումյանցևի,
Անտոնովի և հերոսական գումարտակի՝ հանուն Ռոստովի ազա-
տագրման զոհված մյուս անվեհեր մարտիկների մարմինները։

Վար իջեցված դրոշակի մոտ, Մաղոյանի, Օխապկինի և
Դանիլչենկոյի կողքին, կանգնած էր գեներալը։ Հրապարակում
տխուր հնչում էր սգո քայլերգը։

4.

Զանազան հանդիպումներ տեղի ունեցան այդ օրը։

Լիդա Դմիտրիևնան և Օստապ Դանիլչենկոն իրենց ձեռ-
քերի վրա գործարանից դուրս բերին Կովալչուկին։

—Ո՞ւր եք տանում ինձ, բարեկամներ,—հարցրեց Ալեքսանդրը։

—Տուն, Սաշա, քո մայրիկի մոտ,—փաղաքշանքով պատասխանեց Լիդան։

Կովալչուկը ժպտաց. Նա ուզում էր շատ լավ խոսքեր ասել այդ աղջկան, բայց Օստապի ներկայությունից քաշվում էր և միայն ասաց.

—Դուք, քույրիկ, հրեշտակ եք...

Լիդան ոչինչ չասաց, միայն նրա այտերը կարմրեցին։ Օստապը բազմանշանակ հոգոց արձակեց.

— Այդպես ուրեմն,—նկատեց նա նեղացածի տոնով։—Լիդան, ուրեմն, հրեշտակ է, իսկ ես ուղղակի բեռնակիր և ինձ ոչ մի երկնային կոմպլիմենտ չի հասնում։

Կովալչուկը և Դմիտրիևան ծիծաղեցին։

— Ավազակ ես դու,—կատակեց Ալեքսանդրը։ Ուզածդ ինչ է, երկնային կոմպլիմենտ։ Ո՛չ, եղբայր, դու դժոխքի բաժին ես դառնալու, քեզ երկնային խոսքեր չեն հասնում։

— Դու գիտես, Սաշկա։ Միայն թե իմացիր՝ հրեշտակը թևեր է ունենում, կթռչի, կմնաս միայն իմ ձեռքերին։

— Չեմ կարծում,—առարկեց Կովալչուկը, չի թռչի։ Դու ինչպես ես կարծում, Լիդա։

Նա նայեց աղջկա աչքերին։ Լիդան հայացքը շուռ տվեց։

— Ի՞նչ անհանգիստն եք դուք, Սաշա,—լսվեց նրա հաճելի կրծքային ձայնը։—Ձեզ շատ խոսել չի կարելի։

— Ես անհամբեր եմ, Լիդա,—խոստովանեց զինվորը։

— Իզո՛ւր,—ընդգծեց նա։—Ինչքան ջղերդ ամուր լինեն, այնքան շուտ կհասնես նպատակիդ։

Հրապարակում Լիդան մի վիլիս ճարեց։ Կովալչուկին զգուշությամբ տեղավորեցին մեքենայում։

— Գլխավոր փողոցով գնալ չի կարելի,—նկատեց կարմիրբանակային շոֆերը,—այնտեղ քարակույտեր են լցված և բարրիկադներ կան։

— Ափսոս,—ասաց Կովալչուկը։—Շատ կուզենայի Սադովայան տեսնել և քեզ ցույց տալ, Օստապ, մեր գեղեցիկ գլխավոր փողոցը։ Բայց ինչ կարող ենք անել, ուրիշ անգամ։ Կգնանք բանվորական ավանով։

Վիլիսը մտավ կողքի նեղ փողոցները։ Ալեքսանդրը հուզված դիտում էր հարազատ քաղաքը։ Այստեղ ամեն ինչ մանկությունից ծանոթ էր նրան։ Նա նայում էր ռումբերի բեկորներից ծակծկված աղյուսե պատերին, տների ավերակներին, նայում էր այնպես, կարծես թե՛, իր մերձավորները և հարազատներն էին աչքի առաջ։

Մեքենան դուրս եկավ մի լայն փողոց։ Երևացին տրամվայի ռելսեր, կտրված հեռագրալարեր։ Փողոցի անկյունում անշարժացել էր մի ժանգոտած վագոն։ Այստեղ-այնտեղ երևում էին գերմանական ջարդված թնդանոթներ, այրված տանկեր։ Մայթերը ծածկված էին մոխրից սևացած կեղտոտ ձյունով, ամեն տեղ կարելի էր տեսնել թղթի կտորտանք, փշրված ապակիներ։ Տների դռների վրա դեռ երևում էին գերմանացիների հրամանները։

Մի կողմից երևաց ստադիոնը։

— Ես քանի՜-քանի՜ անգամ եմ եղել այստեղ,— ասաց Կովալչուկը։— Մենք այստեղ ենք տվել «Աշխատանքի և պաշտպանության պատրաստ» կրծքանշանի նորմաները։ Ինչքա՜ն ֆուտբոլ ենք խաղացել։ Լավ ստադիոն էր։

Նրանք անցնում էին մռայլ, հրդեհներից սևացած բազմահարկ տների մոտով։

— Տես՝ ինչ են արել բանդիտները իմ հարազատ քաղաքը,— խուլ, զայրագին հնչեցին Կովալչուկի խոսքերը։— Ինչպե՜ս են այրել, մի տեսեք, Լիդա, ոչինչ չի մնացել։

Դմիտրիևան նայում էր Ռոստովի ավերակներին և չէր կարողանում չհամաձայնել Ալեքսանդրի հետ։

— Ոչինչ, Սաշա, ամեն ինչ կվերականգնենք,— ասում էր Լիդան։— Կվերստեղծենք մեր Ռոստովը։ Ավելի լավ, ավելի գեղեցիկ կլինի։

Դարձան դեպի Գորկու փողոցը։

— Ահա մոտենում ենք,— Կովալչուկը սեղմեց Լիդայի ձեռքը։— Կանաչ պատուհանները մեր տունն է,— ասաց նա շոֆերին։

Կովալչուկին ներս տարան բակը։

— Այստեղով,— ցույց տվեց նա ճանապարհը։

Երկաթե սանդուղքի մոտ կանգնած մի կին, ձեռքերը թափահարելով, վազեց վերև։

— Մակարովնա, Մակարովնա,—բարձրաձայն կանչում էր նա։

Այդ ժամանակ Ալեքսանդրը տեսավ մորը։ Նա շտապ-շտապ մոտենում էր որդուն։

— Սաշա՛, հարազա՛տս, որդյա՛կս,—ասում էր մայրը ժպտալով ու լացակումած։

5.

Լայնարձակ թևեր ունի ռազմական փառքը։ Քաղաքի ազատագրման առաջին օրերն էին դեռ, բայց նրա հազարավոր բնակիչների ու մարտիկների շուրթերին էր Մազոյանի անունը։

Կենդանացան, աղմկեցին Ռոստովի փողոցները, կարծես թե, Դոնից եկած գարնանային ջրեր անցան նրանցով։

Մարդկանց բազմությունը ձգտում էր դեպի քաղաքի կենտրոնը։ Աշխույժ զրուցում էին երիտասարդները։ Կանանցից շատերը գնում էին երեխաների ձեռքից բռնած։ Դանդաղ քայլում էին ծերունիները։ Էնգելսի փողոցում մարդիկ հանդիպում և ջերմորեն ողջունում էին մի խումբ գեներալների։ Ռոստովցիները նրանց մեջ ճանաչում էին Հարավային ռազմաճակատի զորքերի հրամանատար գեներալ-գնդապետ Մալինովսկուն, ռազմաճակատի Ռազմական Խորհրդի անդամ Խրուշչովին, պարտիայի մարզկոմի քարտուղար Դվինսկուն։

Հոկտեմբերյան, Լենինյան, Անդրեևյան և Կիրովյան ռայոնների բնակիչները անցնում էին կարմիր դրոշակներով, Լենինի և Ստալինի նկարները բարձր բռնած։ Ավելի ու ավելի շատանում էր մարդկանց բազմությունը։

Նորից, ինչպես առաջվա, նախապատերազմյան օրերին, վիթխարի հրապարակի վրա ազատ ծածանվում էին Սովետական Հայրենիքի ալ դրոշները։ Կինո-օպերատորները և ֆոտո-թղթակիցները անդադար չրխկչրխկացնում էին իրենց գործիքները։

Միտինգը բացվում է։ Հրապարակը հանդարտվում է։ Ամենքը լռում են և հանկարծ լսվում է մի վճիտ մանկական ձայն.

— Մայրի՛կ, ցույց տուր, ո՞րն է Մազոյանը...

Առաջինը ժողովրդին խոսք է ուղղում Մալինովսկին.

— Ընկեր բանվորներ և բանվորուհիներ, Ռոստով քաղաքի

բնակիչներ։ Հարավային ռազմաճակատի մարտիկներն ու հրամանատարները ողջունում են ձեզ և շնորհավորում են ձեր ազատագրումը հիտլերյան մարդակերների լծից։

Հրապարակը որոտընդոստ պատասխանում է գեներալին։ Մարդիկ ծափահարում են, ձեռքերը թափահարում, բարձրաձայն դիմում են ամբիոնի վրա կանգնած մարդկանց։

— Փառք մեր Կարմիր Բանակին։

— Կեցցե՛ ընկեր Ստալինը։

— Փառք Ռոստովի հերոս ազատարարներին։

— Իրագործելով ստալինյան իմաստուն պլանը,— շարունակում է գեներալ-գնդապետը,— Կարմիր Բանակը հաղթականորեն ջարդ ու փշուր է անում գերմանացի հափշտակիչներին։ Հիտլերը հավաքեց և Ստալինգրադի վրա ուղարկեց իր լավագույն ուժերը, սակայն նրանք արյունաքամ արվեցին ու շրջապատվեցին Կարմիր Բանակի կողմից և մեծ մասամբ ոչնչացվեցին։ Կարմիր Բանակն առաջ է գնում։ Նա ազատագրել է Ռոստովը, Խարկովը և մեր հարազատ քաղաքներից շատերը։

Մալինովսկին Ռոստովի բնակիչներին կոչ է անում լարել իրենց ուժերը, արագ վերականգնել գերմանացիների ավերած ձեռնարկությունները, կամուրջները, երկաթուղիները, որպեսզի Կարմիր Բանակն ավելի մեծ հաջողությամբ խփի թշնամուն։ Մարդիկ նորից բուռն ծափահարություններով են պատասխանում գեներալին։ Ի պատիվ մեծ Ստալինի հրապարակով մեկ թնդում են հուժկու ուռաները։

Հիտլերյան կամայականությունների ծանր օրերի մասին խոսում է Միկոյանի անվան ծխախոտի գործարանի մի բանվոր՝ Սլյուսարովը։ Նա շնորհակալություն է հայտնում ազատարար Կարմիր Բանակին։

— Մենք գիտենք, թե Ռոստովի ազատագրման համար ինչպիսի քաջությամբ և անձնազոհությամբ են կռվել ավագ լեյտենանտ Մադոյանի մարտիկները։ Շնորհակալություն ձեզ, հերոսներ։ Դուք եք մղել գերմանացիների ավելի քան հիսուն հակագրոհ։ Օգնելով ձեզ թիկունքում, մենք կաշխատենք այնպես, ինչպես դուք կռվել եք մեր քաղաքում։

Ամբիոնի վրա է Մադոյանը։

Նա դժվարությամբ է խոսում։ Հրապարակն աղմկում է։ Ժողովուրդը փառաբանում է հերոսին։

— Ընկերնե՛ր։ Դուք շատ եք չափազանցնում իմ գումարտակի արածը։ Մենք միայն մեր սրբազան պարտքն ենք կատարել հայրենիքի ու ժողովրդի հանդեպ և այն էլ ոչ լրիվ, քանի որ թշնամին դեռ վերջնականապես չի ոչնչացված և մեր հողը լիովին դեռ չի մաքրված նրանից։ Մեզ համար, Սովետական Բանակի զինվորների համար, ուրիշ նպատակ չկա կյանքում, քան հայրենի քաղաքի ազատագրումը։ Ես պատրաստ եմ բոլոր ուժերս և, եթե հարկավոր լինի, նաև կյանքս նվիրել մեր հայրենիքի ազատության ու անկախության գործին։

Ամենքը ողջունում են նրան։ Գեներալ-գնդապետ Մալինովսկին սեղմում է գումարտակի հրամանատարի ձեռքը և գրկում ու համբուրում է նրան։

Հանդես են գալիս նոր հռետորներ։ ՀամԿ(բ) Պ. Ռոստովի Մարզկոմի քարտուղար Դվինսկին դիմելով Կարմիր Բանակի մարտիկներին, ասում է, որ Ռոստովի բանվորներն ու բանվորուհիները և բոլոր բնակիչները կարճ ժամանակում կբուժեն ֆաշիստական հափշտակիչների՝ քաղաքին հասցրած վերքերը։

— Հիտլերյան ավազակները կարծում էին, թե իրենք արդեն նվաճել են Ռուսաստանը,—սկսում է իր ճառը Խրուշչովը։— Մինչև Վոլգա հասնելով, նրանք ասում էին, թե այնտեղից չեն հեռանա։ Եվ իրոք որ չհեռացան։ Մեր զորքերը գլխովին ջարդ ու փշուր են արել գերմանացիների 6-րդ բանակը, իսկ մնացորդները, գեներալ-ֆելդմարշալ Պաուլյուսի գլխավորությամբ, գերի են վերցվել։

Ընկեր Խրուշչովը բնակիչներին պատմում է Կարմիր Բանակի հերոսական ուղու մասին։ Հարավային ռազմաճակատի զորքերը մարտերով անցել են Ստալինգրադից մինչև Ռոստով։ Պայքարը կատաղի էր, սակայն, շնորհիվ սովետական թիկունքի օգնության և Գերագույն Գլխավոր Հրամանատար ընկեր Ստալինի ամենօրյա ղեկավարության, Հարավային ռազմաճակատի զորքերը հաջողությամբ ջարդել են և շարունակելու են ջարդել գերմանական զավթիչներին։

— Եվ թող իմանան մեր թշնամիները,—վերջացնում է

Թրուշչովը,—որ ով հարձակվի սովետական հողի վրա, կենդանի չի հեռանա այնտեղից։

Ընդհանուր հավանության բացականչությունները ընդգըրկում են հրապարակը։

Միտինգի մասնակիցները Ռոստովի աշխատավորների անունից ողջույնի նամակ են ուղարկում ընկեր Ստալինին։

«Մենք խոսքեր չենք գտնում,—ասված է այդ նամակում,—մեր սերը արտահայտելու Ձեզ, մեր հորը և ազատարարին,—մարտիկներին ու հրամանատարներին, որոնք վերադարձրին մեզ մեր ազատությունն ու երջանկությունը։ Ամբողջ հոգով շնորհակալ ենք մեր ազատագրության, մեզ վերադարձված կյանքի համար։

«Թանկագին Իոսիֆ Վիսսարիոնովիչ։

Մենք գիտենք մեր պարտքը։ Ամբողջ հարազատ սովետական ժողովրդի, մեր սովետական կառավարության, Ձեր առաջ մենք պարտավորվում ենք՝ ամենքս մի մարդու նման կանգնել մեր դիրքերում և, ձեռքներս՝ քշտած, եռուն աշխատանքի ձեռնարկել։ Մենք չենք խնայի ոչ մեր ուժերը և ոչ էլ արյունը՝ ռազմաճակատին օգնելու, թշնամու դեմ լիակատար հաղթանակ տանելու համար»։

Միտինգն ընդունում է նաև Հարավային ռազմաճակատի մարտիկներին ուղղված դիմում.

«Հարավային ռազմաճակատի քաջարի մարտիկներին, Դոնի Ռոստովի ազատարարներին։

Թանկագին ընկերներ, մեր որդիներ և եղբայրներ։

Ձեզ, սովետական պանծալի ռազմիկներից, Կարմիր Բանակի մարտիկներից, հրամանատարներից և քաղաշխատողներից, բոցավառ ողջույն և սրտագին շնորհակալություն ենք հղում մենք, Ռոստովի բնակիչներս։ Անցնելով կատաղի մարտերի ծխի ու հրի միջով, դուք, Ստալինգրադի հերոսներդ, ազատագրեցիք Կոտելնիկովան, Սալսկը, Բատայսկը, Նովոչերկասկը և եկաք մեզ մոտ, որպեսզի միանգամ ընդմիշտ դուրս կորզեք ձեր մայրերին ու հայրերին, կանանց ու երեխաներին այն ամոթալի ստրկության ու աղքատության, քաղցի և տանջալից մահվան ճիրաններից, որին դատապարտել էին մեզ գերմանա-ֆաշիստական ավազակները։

Ռոստովն ազատագրված է։ Փառք սովետական դրոշին, ազատության և երջանկության դրոշին, որ նորից ծածանվում է մեր սիրելի քաղաքի վրա։

Մեր հայրենիքի թանկագին պաշտպաններ։ Չկան այնպիսի խոսքեր, որոնցով կարելի լինի պատմել ձեզ այն բռնությունների ու սարսափների, կողոպուտների և ավերածությունների մասին, որ գործեցին հիտլերյան հափշտակիչները մեր բազմաչարչար Ռոստովում։ Ֆաշիստ գազանները ավերեցին խոշորագույն գործարանները, «Ռոստսելմաշը» և «Կրասնի Աքսայը», Լենինի անվան շոգեքարշերի նորոգման գործարանը, կրուպայի գործարանը, ավերեցին և շարքից հանեցին կամուրջները, բոլոր երկաթուղիները, նավահանգստի տնտեսությունը և պետական այլ կառուցվածքները։

Հիտլերականները երևան բերին կուլտուրայի ավերիչների իրենց իսկական դեմքը։ Այդ սրիկաներն այրեցին Մաքսիմ Գորկու անվան նշանավոր թատրոնը, բոլոր գրադարանները, կինոգործարանը, տասնյակ դպրոցներ, ակումբներ, էլեկտրակայանը, ավերեցին բոլոր հուշարձանները։ Էնգելսի և Բուդյոննու ամենագեղեցիկ փողոցների վիթխարի տները նույնպես այրվեցին ու ավերակ դարձան։

Ֆաշիստական ավազակները առանձին կատաղությամբ հետապնդում էին մեզ նրա համար, որ մենք մի տարի առաջ ակտիվ կերպով օգնեցինք Կարմիր Բանակին՝ դուրս շպրտելու թշնամուն մեր քաղաքներից։ Այդ դահիճները, ոչ լրիվ տվյալներով, գնդակահարեցին մեր քաղաքի ավելի քան 20.000 բնակիչների։ Միայն բանտի բակում գերմանացիները գաղտնաբար խոշտանգել են պատանդ վերցրած հազար խաղաղ բնակիչների։ Նացիստական բարբարոսները կենդանի այրել են բազմաթիվ կանանց ու տղամարդկանց, երեխաների, վիրավոր կարմիրբանակայինների։ Սակայն ամենաահավոր տանջանքներն անգամ չխախտեցին սովետական մարդկանց հավատը Կարմիր Բանակի վերահաս հաղթանակի վերաբերմամբ, չխորտակեցին մեր մարտական կամքը։ Այս ամբողջ ժամանակվա ընթացքում մենք, ինչով որ կարող էինք, օգնում էինք հարազատ Սովետական Բանակին։ Մեր հիշողությունից երբեք չի անհետանա 1943 թ. փետրվարի 14-ի երջանկահիշատակ օրը, երբ գեներալ-լեյտե-

նանտ Գերասիմենկոյի քաջարի զորքերը անդիմադրելի հեղեղի նման ներխուժեցին մեր քաղաքի փողոցները, ջարդուփշուր անելով գերմանական հափշտակիչներին։ Մենք ականատես եղանք ձեր արիությանը և հերոսությանը, մեր ազատարարներ, ձեր անվեհերությանը կայարանում, դեպոյում, Լենինի անվան գործարանում մղված մարտերի ժամանակ։ Ռոստովի փողոցներում տեղի ունեցած կռիվների մեջ դուք հանդես բերիք նույն քաջությունը, ինչ որ Ստալինգրադը պաշտպանելիս։ Մենք, Ռոստովի բնակիչներս, փառաբանում ենք ավագ լեյտենանտ Ղուկաս Մադոյանի հերոսական գումարտակի պանծալի մարտիկներին, որոնք առաջինը մուտք գործեցին մեր քաղաքը և վեց օրվա ընթացքում արիաբար պահպանեցին իրենց դիրքերը թշնամու վիթխարի, գերազանց ուժերի դեմ մղված մարտերում։

Մենք փառաբանում ենք լեյտենանտ Լուպանդինի անվեհեր հետախույզներին, լեյտենանտ Շիլովի գնդացրորդներին, ավագ-լեյտենանտ Միրոշնիչենկոյի զենիթայիններին, կապիտան Կոմչատկայի հրետանավորներին, սերժանտ Կրավչենկոյին, սնայպեր Միլամուսին, կարմիրբանակայիններ Կովալչուկին ու Դանիլչենկոյին, որոնք մեր քաղաքի փողոցներում ոչնչացրին հարյուրավոր հիտլերականներ։ Մենք հիշում ենք նաև ուրիշ շատ հերոսական սովետական մարտիկների, որոնց պանծալի սխրագործություններն ընդմիշտ կենդանի կմնան մեր սրտերում։

Կարմիր Բանակի ռազմիկներ։ Արիաբար առաջ ընթացեք։ Ձեզ սպասում են տանջահարված մարդիկ, սպասում է վիրավոր, բայց անընկճելի Ուկրաինան։ Իսկ մենք, առանց մեր ուժերը խնայելու, կաշխատենք Կարմիր Բանակի համար, հաղթանակի համար։ Մեր կյանքը հայրենիքին է պատկանում և եթե պահանջվի, մենք կտանք մեր արյունը կաթիլ առ կաթիլ՝ մեր արդար գործի լիակատար հաղթանակի համար։

Մենք չենք խնայի մեր ուժերն ու եռանդը և ամենակարճ ժամանակում կվերականգնենք մեր գործարանները, կկազմակերպենք մեր քաղաքի նորմալ կյանքը, կվերածնենք մեր Ռոստովը։

Մենք կանենք ամեն ինչ, որ պահանջվում է մեզնից, որպեսզի սիրելի Կարմիր Բանակն ավելի շատ սպառազինություն ու զենք, հանդերձանք ու մթերք ստանա։

Թող դողա հիտլերյան Գերմանիան: Կարմիր Բանակն ընթանում է դեպի Արևմուտք:

Մահ գերմանական հափշտակիչներին:

Կեցցե Կարմիր Բանակը, մեր ազատարարը:

Կեցցեն Հարավային ռազմաճակատի պանծալի մարտիկները, մեր ազատարարները:

Կեցցե իմաստուն զորավար, Գերագույն Գլխավոր Հրամանատար ընկեր Ստալինը:

Ռոստովցիները խրախճանքի մեջ էին: Հրապարակի մերթ այս, մերթ այն կողմից ողջույնի բացականչություններ էին լսվում ի պատիվ Հայրենիքի, Ստալինի, Կարմիր Բանակի:

Միտինգը վերջացավ: Մարդիկ ցրվում էին: Մաղոյանը իր մի խումբ մարտիկների հետ միասին հեռանում էր Ռոստովից, մեկնելով ռազմաճակատ՝ իր գումարտակի մոտ, որը գտնվում էր Մատվեև—Կուրգանի մերձակայքում:

Պատերազմը շարունակվում էր և, կարծես թե, այդ մասին հիշեցնելով, Ռոստովի փողոցներով անցնող հեծյալ կազակները երգում էին.

Չեն հանդգնի սև թևերը
Հայրենյաց վրա թռչել,
Չի հանդգնի նենգ ոսոխը
Մեր սուրբ հողը կոխոտել:

Թող մեր ազնիվ ցասումն ուռչի
Ալիքի պես անսասան,
Թող բորբոքվի ժողովրդյան
Պատերազմը սրբազան:

ԳՈՒՄԱՐՏԱԿԸ ԴԵՊԻ ԱՐԵՎՄՈՒՏՔ ԷՐ ԳՆՈՒՄ

1.

Մարտի վերջն էր: Դաշտում ձյունը հալվում էր: Ձորակներով և կիրճերով վազում էին խոխոջուն առվակները: Հողը ուռչում, ձգվում էր դեպի արևը: Տափաստանը բռնել էր անցած տարվա խոտի բուրմունքը:

Մաղոյանի գումարտակը գարունը դիմավորեց Միուս գե-

տի ափին։ Ռազմաճակատն այստեղ անցնում էր Դոնի և Ուկրաինայի սահմաններով։

Ռոստովի մարտերից հետո գումարտակի կյանքում որոշ փոփոխություններ էին տեղի ունեցել։ Ստորաբաժանումները լրացվել էին նոր մարտիկներով։ Եկել էր նաև գումարտակի նոր հրամանատար։ Մազոյանին տվել էին կապիտանի կոչում և նշանակել բրիգադի հրամանատարի տեղակալ։

Ռոստովի կայարանի վեցօրյա ճակատամարտին մասնակցած զինվորներն ու սպաները պարգևատրվել էին շքանշաններով ու մեդալներով, նրանց թվում պարգևատրվել էին նաև մեքենավար Խիժնյակը, Յուրա Տարասովը և Լիզա Դմիտրիևան։ Ռոստովցի աղջիկը մնացել էր գումարտակում։

Մարտիկները լռելյայն բաժանվեցին Մազոյանից։ Հրաժեշտի ժամանակ նրանք տխրությամբ նայում էին նրան և այդ լռությունը գումարտակի հրամանատարի համար թանգ էր ամեն պերճախոսությունից։ Կարծես թե նրանց հանգստացնելու համար՝ նա ժպտալով ասում էր.

— Հեռու չեմ գնում, միևնույն բրիգադում եմ մնում, ձեր կողքին կլինեմ, կհանդիպենք։

Մազոյանը գնաց։ Նրա գնալու մասին այլևս չէին խոսում և կյանքը իր կարգին շարունակվեց, կարծես թե, ոչ մի փոփոխություն տեղի չէր ունեցել։ Հիշում էին նրա խոսքերը, կենսագործում էին նրա սկզբունքները, մարտնչում էին այնպես, ինչպես նա էր սովորեցրել։ Օխապկինի ասած նոր, թևավոր խոսքն ավելի ու ավելի հաճախ էր հնչում մարտի դաշտում։ Պայթյունների որոտի մեջ, երբ ետ էին մղում թշնամու գրոհը կամ իրենք էին գրոհի գնում, հանկարծակի բարձր հնչում էր որևէ մեկի ձայնը.

— Կռվենք, ինչպես կռվում էինք Մազոյանի հետ միասին։

Եվ այդպես էլ կռվում էին։

Այդ գարնանային օրերին Մազոյանը Հայաստանից ստացավ իր վաղուց սպասած լուրերը։ Երբ գումարտակն ընթանում էր ռազմաճակատային ճանապարհներով, փոստում կուտակվել էին նրա անունով ստացված նամակները։ Գրում էին կինը՝ Սիրուշը, քույրը՝ Ժենյան, որ ուսանողուհի էր արդեն, և որդին, դպրոցական աշակերտ, Սերգեյը։ Մազոյանը նրանց պատասխանեց

«Բարև, Թանկագին Միրուշ: Բարև ձեզ, իմ հարազատ Ժենիկ և Սերյոժա:

Վերջապես վեց ամսվա ընդհատումից հետո, ես միանգամից ութ նամակ ստացա ձեզնից: Ինչքա՜ն ուրախացա, չեք կարող պատկերացնել: Մի ամբողջ թերթ էր: Նամակներն ստացվեցին մարտի ժամանակ: Գերմանացիները իրենց թնդանոթներով ու գնդացիրներով խանգարում էին կարդալ: Սակայն մեր արծիվ մարտիկները անհրաժեշտ պայմաններն ստեղծեցին և ես կարդացի համարյա այն բոլորը, որ դուք գրել էիք: Շնորհակալ եմ, հարազատներս:

Սիրելի զավակներս, Ժենիկ և Սերյոժա: Ես ուրախությամբ կարդացի, որ դուք գերազանց եք սովորում: Ես հպարտանում եմ ձեզնով, իմ սիրելի երեխաներ: Դուք ասում եք, թե կարոտել եք ինձ: Ես նույնպես շատ եմ կարոտել ձեզ և շատ եմ ուզում գրկել ձեզ: Բայց չէ՞ որ հարկավոր է կռվել, որպեսզի շուտով ոչնչացնենք սրիկաներին և այն ժամանակ հաղթանակով տուն վերադառնանք:

Կառավարությունը պարգևատրել է ինձ չորս շքանշանով: Ես խփելու եմ զավթիչներին մինչև լիակատար հաղթանակը: Ամուր համբուրում եմ ձեզ: Ձեր Ղուկաս»:

Նամակը մի քանի օրից հասավ Հայաստան: Մադոյանի փառքը տարածվեց նրա հայրենիքում դեռ մինչև այս տողերի տեղ հասնելը: Ապրիլի 3-ին սովետական թերթերում հրապարակվեց ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության 1943 թ. մարտի 31-ի Հրամանագիրը: Նրա մեջ ասված էր.

«Գերմանական զավթիչների դեմ մղված պայքարի ճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքները օրինակելիորեն կատարելու և այդ միջոցին ցուցաբերած արիության ու հերոսության համար, Սովետական Միության Հերոսի կոչում շնորհել և պարգևատրել Լենինի շքանշանով ու «Ոսկե Աստղ» մեդալով ավագ լեյտենանտ Ղուկաս Կարապետի Մադոյանին»:

Հրամանագիրը կարդացին Երևանում, կարդացին նաև Ռոստովում: Նրա մասին իմացան նաև Մադոյանի գումարտակում: Զինվորների ուրախությանը սահման չկար: Մարտիկները շնորհավորում էին իրար և ավելի ուժեղացնելով կրակը հրաներա-

կանների դեմ, կրկնում էին իրենց համար նշանաբան դարձած խոսքերը.

«Կռվենք, ինչպես կռվում էինք Մաղոյանի հետ միասին»։

Թշնամին բոլորովին մոտիկ էր։ Ուրախալի հրամանագրի առթիվ ականանետները կրակ բաց արին գերմանական խրամատների վրա։ Այնտեղ, որտեղ պայթում էին ականները, օդն էին բարձրանում հագուստի ծվեններ ու գերմանական դաշտային խոհանոցի բեկորներ։

Երեկոյան Օխապկինը զինվորներին էլ մի ուրախալի լուր բերեց։ Հերոսի «Ոսկե Աստղին» ավելացել էր մի պատվավոր պարգև ևս։ Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Ֆրանկլին Ռուզվելտը Մաղոյանին պարգևատրել էր «Մարտական ծառայությունների համար» ոսկե մեդալով։

Հաջորդ օրը ռազմաճակատային թերթը լույս տեսավ Մաղոյանի նկարով և խոշոր տառերով տպված լոզունգով.

— Փառք Սովետական Միության Հերոս Ղուկաս Մաղոյանին։

— Մարտիկներ, կռվեցեք մեր սիրելի Սովետական Հայրենիքի համար, ինչպես սովետական ժողովրդի հարազատ որդի ընկեր Մաղոյանը։

Թերթում հրապարակված էր մի ոտանավոր։ Գումարտակում բարձրաձայն կարդացին ոտանավորը և այն ամենքին դուր եկավ։ Օխապկինն ինչ-որ բան գրեց թերթի վրա և խնամքով ծրարեց։

Անցավ մի քանի օր։

Միուս գետից շատ հեռու, Երևանի տներից մեկում պատանի Սերգեյ Մաղոյանը իր մոր և քրոջ համար կարդում էր ռազմաճակատային բանաստեղծի փոքրիկ ոտանավորը.

Ում որ թնդանոթն է որոտում չեչտակի
Եվ երկինքն է համակ հուրհրան,
Հազար փառք Միության անվեհեր Հերոսին,
Հազար փառք քեզ Հերոս, Մաղոյան։

Շատ անգամ քաջերին գրոհի դու տարար,
Դու սառցով Դոն գետը կտրեցիր.
Նրանց հետ Ռոստովի կատաղի մարտերում
Կայարանը ոսոխից խլեցիր։

Դու ծխի մեջ կորած, ավերված շենքերում,
Ուր մահն է սպառնում ահավոր,
Քո կարմիր քաջերով, քո արծիվ քաջերով
Հիսուն մարտ մղեցիր փառավոր։

Եվ անքուն, անհանգիստ վեց ցերեկ և գիշեր
Շիկնել էր երկինքը կրակից,
Կռվում էր քո խիզախ գումարտակն անսասան,
Հնչում էր քո ձայնը հաղթալից։

Երբ որ թեժ այդ մարտի դաժան բոցը հանգավ,
Եվ ցնդեց այդ սև ծուխն ու դուման,
Քաղաքի վրա վեհ՝ ալ դրոշ բարձրացավ,
Եվ փառքդ բարձրացավ, Մադոյան։

Նա ծնվեց կատաղի և դաժան մարտերում
Եվ դարեր նա պիտի ապրի դեռ։
Ռոստովի հերոսի կրծքի վրա, վառվիր դու,
Վառվիր դու, Ոսկեաստղ հնգաթև։

Ոտանավորի վրա Օխապկինի ձեռքով գրված էր.
«Սերգեյ, եղիր այնպես, ինչպես քո հայրը»։

2.

Տափաստանային ճանապարհներով զինվորներն առաջ էին գնում։ Թանձր ցեխը կպչում էր նրանց կոշիկներին, դժվարացնում էր շարժումը։ Ապրիլ ամիսն էր։ Արևից տաքացած հողը հագենում էր պտղաբեր հյութերով։

Օստապ Դանիլչենկոն և Միխայիլ Սորելցովը իրենց ուսերին տանում էին հակատանկային հրացանները։ Օստապի շինելը պատռված էր։ Ուսին կավի հետքեր էին երևում։ Զինվորը դանդաղ էր գնում, ժամանակ առ ժամանակ ձեռքով շփելով քրտնած ճակատը։

— Տեսնում ես, ինչպես է վառում,—ասաց Դանիլչենկոն։ Մեջքս ամբողջովին թաց է։

— Գարուն է... արձագանքեց Սորելցովը։—Լավ է հիմա։

Այն գյուղում, որտեղ կանգ առան հանգստանալու, գումարտակի ետևից հասավ մի մեքենա։ Մեքենայից դուրս եկան

մի սպա և զինվոր։ Ամենքը անմիջապես ճանաչեցին կապիտան Մաղոյանին և Կովալչուկին։

— Մի նորոգված ռազմիկ եմ բերել ձեզ,— ասաց Մաղոյանը Օխապկինին։ Եվ կարող եք շնորհավորել նրան՝ սերժանտի կոչում ստանալու համար։

Մարտիկները շրջապատեցին Կովալչուկին։ Բազմաթիվ հարցեր էին տեղում նրա գլխին։ Ոմանք բացականչում էին.

— Զինվորը տուն եկավ։

Ուրիշները հարցնում էին.

— Ռոստովում ի՞նչ նորություն կար։

— Ծխախոտ բերե՞լ ես։

Ալեքսանդրը երջանկությամբ սեղմում էր ընկերների ձեռքը և ժպտում, չիմանալով, թե առաջ որի՞ն պատասխանի։

— Ձեռք քաշեք սրանից, անզգամներ,— Ալեքսանդրին դուրս բերելով ընկերների խմբից, ասաց Դանիլչենկոն։— Մարդը նոր է եկել ճանապարհից, շատ հոգնած է, վիրավորված է եղել, պիտի հանգստանա։

Կովալչուկը տարակուսանքով նայեց Օստապին, իսկ նա կամաց ասաց նրան.

— Գնանք բժշկականության ներկայացուցիչների մոտ... Քո հրեշտակի մոտ...

Ալեքսանդրը ոչինչ չպատասխանեց։ Միայն նրա աչքերը փայլատակեցին և նա շտապեց Օստապի ետևից։

...Ազատագրված Ռոստովը բավական ետ էր մնացել։

Մաղոյանի զինվորները վստահ առաջ էին շարժվում։

Կովալչուկը և Լիդան գնում էին կողք-կողքի, Ալեքսանդրը աշխույժ մի բան էր պատմում աղջկանը։ Նա ուշադիր լսում էր, երբեմն-երբեմն իր պայծառ վճիտ հայացքով հավանություն տալով ընկերոջ խոսքերին։

Դիմացից փչում էր գարնանային տաք քամին։
Գումարտակն ընթանում էր դեպի Արևմուտք։

* * *

Շատ ժամանակ չէր անցել 1943 թ. փետրվարյան օրերից, բայց Մաղոյանի գումարտակն արդեն առասպելական էին ան-

զանում։ Ժողովրդի երախտագիտությունը հնչում էր այդ խոսքերում, իսկ զինվորի համար չկա դրանից ավելի բարձր պատիվ։

Մաղոյանի անունը հարազատ էր դարձել ռոստովցիների համար։ Հպարտությամբ էին արտասանում նրա անունը նաև Հերոսի հայրենիքում — Հայաստանի քաղաքներում և գյուղերում։

Զինվորները սովորել էին այնպես խփել հափշտակիչներին, այնպես վարպետորեն և անվեհեր, ինչպես խփում էր նրանց Մաղոյանը։

Ղուկասի կրծքին փայլում էր «Ոսկե Աստղը»։ Այն դեպի Արևմուտք էր առաջնորդում նրան, դեպի Բեռլին, դեպի լիակատար հաղթանակ...

Օգոստոսի վերջին գերմանացիները դուրս շպրտվեցին նաև Տագանրոգից։ Միուս գետի վրա Մաղոյանի մարտիկները նորից աչքի ընկան։ Գումարտակի նախկին հրամանատարին ուղարկեցին Մոսկվա՝ Զինվորական Ակադեմիա, կարճատև ուսման։

Կապիտան Մաղոյանը սովորում էր նույնքան հաջողությամբ, ինչպես որ խփում էր թշնամիներին ռազմաճակատում։ Նա իր հարազատ զորամասը վերադարձավ իբրև մայոր։ Այդ այն օրերին էր, երբ Սովետական Բանակը ազատագրում էր մեր հայրենի հողի վերջին կիլոմետրերը և արդեն ոտք էր դնում Հիտլերի ստրկացրած եվրոպական մյուս երկրների հողի վրա։

Մայոր Մաղոյանի զորամասը կատարեց մի քանի բացառիկ կարևոր մարտական առաջադրանքներ։

Մաղոյանը փոխ-գնդապետ դարձավ։ Նա գնդի հրամանատար էր, մարտերը տեղի էին ունենում Չեխոսլովակիայում։ Այնտեղ, Մուկաչևո քաղաքի ազատագրման ժամանակ, Մաղոյանը ծանր վիրավորվեց, նա մի տարուց ավելի պառկած էր Մոսկվայի հիվանդանոցներից մեկում։ Ծանր վերքը նրան գամել էր անկողնին, սակայն Ղուկասի երկաթյա կամքը չէր թուլանում և նա իր բոլոր մտքերով և ամբողջ սրտով գտնվում էր սովետական մարդկանց շարքերում, կառուցողների և զինվորների շարքերում։

Սովետական ժողովրդի կյանքը նրա կյանքն էր։

* * *

Պատերազմը վերջացավ։ Մադոյանը եկավ հարազատ Երևան։ Հայաստանը ջերմորեն ընդունեց իր քաջարի զավակին։ Իսկ նա, ոչ մի օր չկորցնելով, ձեռնարկեց նոր աշխատանքի։ Ինչպես առաջ, նրա համար գլխավորը հայրենիքի շահերն էին։

Ստալինյան նոր հնգամյակի փառավոր պլաններում գծագրված սպան տեսնում էր մեր մեծ հաղթանակի արդյունքների ամրապնդումը։ Նոր հնգամյակը նրա համար դարձավ մեր արդար գործի համար մղած հերոսական պայքարի, Լենինի-Ստալինի գաղափարների հաղթանակի համար մղած պայքարի շարունակությունը, պայքար հանուն ամբողջ երկրի, սովետական ամբողջ ժողովրդի հետագա բարեկեցության և երջանկության։

Եվ ժողովուրդը նորից բարձր գնահատեց իր որդու հանրօգուտ գործերը։ 1947 թ. փետրվարի 9-ին Հայաստանի աշխատավորները Մադոյանին ընտրեցին իրենց Ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի դեպուտատ։

Ներկայումս Ղուկաս Մադոյանը սովորում է ՀԿ (բ) Պ. Կենտկոմի երկամյա պարտիական դպրոցում։ Նա սովորում է ամենայն եռանդով, աշխատելով տիրապետել մարքս-լենինյան գիտելիքներին։ Նրա ստուգման գրքույկում միայն հինգեր կան։

Առասպելական զումարտակի մյուս ռազմիկները նույնպես ապրում, աշխատում ու սովորում են Մադոյանի նման։ Ուկրաինայի կոլխոզներից մեկում աշխատում է նախկին հետախույզ Օստապ Դանիլչենկոն։ Գորկու ավտոգործարանում շատերն են ճանաչում տեխնիկ Ալեքսանդր Կովալչուկին։ Լենինգրադում գիտական աշխատանք է կատարում կապիտան Շունդենկոն։

Իրենց արյամբ հաղթանակ նվաճած զինվորները ամրապնդում են այդ հաղթանակը կյանքի բոլոր բնագավառներում։ Նրանք էլի մեզ հետ են։

Մադոյանի ռազմիկները գտնվում են մարտական դիրքերում։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Հեղինակի կողմից	5
Արարատի ստորոտում	7
Ճանապարհը դեպի Ռոստով	19
Առաջին օրը	38
Երկրորդ օրը	48
Երրորդ օրը	60
Չորրորդ օրը	70
Հինգերորդ օրը	81
Վեցերորդ օրը	94
Փետրվարի տասնըչորսը	101
Գումարտակը դեպի Արևմուտք էր գնում	117

ՏԵԽ. ԽՄԲԱԳԻՐ՝ Մ. ԿԱՓԼԱՆՅԱՆ
ՍՐԲԱԳՐԻՉ՝ Ա. ԱՐԶԱՔԱՆՅԱՆ
ԿՈՆՏՐՈԼ ՍՐԲԱԳՐԻՉ՝ Ռ. ՏՈՆՅԱՆ

Հանձնված է արտադրության 21/XI 1947 թ.: Ստորագրված է տպագրության 24/XII 1947 թ., ՎՖ 04331, պատվեր 851, հրատ. 479. տիրաժ 2500
8 տպագր. մամուլ, մեկ մամուլում 36.480 տպագր. նիշ.

Հայկական ՍՍՌ ԳԱ տպարան, Երևան, Աբովյան 104.

[604]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220032762

A II/32762